«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2023

ՆԱԽԱԲԱՆ

Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի (այսուհետ ԲՊՀ, ՄՈՒՀ կամ համալսարան) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումին համաձայն:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգվում և իրականացվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959- Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի և 1 միջազգային փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար տեղացի և միջազգային փորձագետների առջև դրված էր երկու խնդիր.

1. իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,
2. որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում միջազգային զարգացումներին համապատասխանելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածք (ԵԲԿՏ) ինտեգրվելու տեսանկյունից:

Սույն Զեկույցը պարունակում է ԲՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և միջազգային փորձագետի գործընկերային դիտարկումները ԵԲԿՏ ինտեգրվելու տեսանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ....2

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ....4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ....15

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ....17

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ....17

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ....17

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲՊՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ....20

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ....22

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ....26

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ....36

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ....44

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ....50

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ....57

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ....62

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ....71

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ....74

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ....79

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....86

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ....87

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ....87

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ....89

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ....92

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ....93

....93

ՀԱՎԵԼՎԱԾ 5. Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ....94

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ....97

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ 2019թ.-ին վերափոխված ԲՊՀ առաքելությունն է՝ «ապահովել միջազգայնորեն մրցունակ ու որակյալ մասնագետների պատրաստումը լեզվաբանական, մանկավարժական և հումանիտար ու հասարակական գիտությունների այլ ոլորտներում՝ նպաստելով անձի շարունակական զարգացմանը, գիտելիքների ստեղծմանն ու փոխանցմանը, մարդկային ներուժի ձևավորմանը և երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը»:

Նախորդ հավատարմագրումից հետո ՄՈՒՀ-ը մշակել է «ԵՊԼՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով իրականացված փորձաքննության 2019թ. փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիր», որում պլանավորվել էին գործողություններ փորձագետների կողմից վեր հանված 30-ից ավել խնդիրների լուծման համար: Նույն թվականին հաստատվել է «ԲՊՀ 2019-23թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը և գործողությունների պլանը» (ՌԾ): ՄՈՒՀ-ը, փաստացի, 2019-23թթ. առաջնորդվել է երկու երկարաժամկետ ծրագրերով, որոնք կարող էին միավորված լինել, ինչը դրականորեն կազդեր գործընթացների արդյունավետության վրա: Իրականացնելով փորձագետների խորհրդատվությունները՝ 2021թ.-ից հետո ՄՈՒՀ-ը սկսել է փորձարկել ռազմավարական նպատակների իրականացման արդյունքների գնահատման քանակական ցուցիչներ և իրականացնել միջնաժամկետ գնահատումներ, մշակել է պաշտոնի անձնագրեր, ներդրել է երիտասարդ դասախոսների մենթորության համակարգ, հաստատել է բարեվարքության կանոնակարգ, իրականացրել է մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) բարելավման աշխատանքներ, կանոնակարգել է մի շարք գործընթացներ, մեծացրել է ֆինանսական կայունությունը, հետազոտական գործունեության համար նպատակային միջոցներ է տրամադրել և այլն: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԲՊՀ-ն հետևողական չի եղել նախորդ ինստիտուցիոնալ հավատարմագրման խորհրդատվությունների իրականացման գործում. ծրագրով նախատեսված մի շարք կարևոր խորհրդատվություններ մնացել են ուշադրությունից դուրս և չեն իրականացվել, օրինակ՝ ՄՈՒՀ-ի կառավարիչների և ՈԱ (Որակի ապահովման) համակարգի կողմից ՊԻԳԲ (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում) շրջափուլի լիարժեք կիրառումը, համալսարանական գործընթացների բարելավման վրա որակի ապահովման համակարգի ազդեցության գնահատումը, մագիստրատուրայի ընդունելության հստակ չափանիշների ներդնումը, դասընթացների իրականացման համար պրոֆեսորադասախոսական (ՊԴ) կազմին ներկայացվող պահանջների սահմանումը, արտաքին և ներքին միջավայրերից ստացվող քանակական և որակական տեղեկատվության վերլուծությունների պարբերական իրականացումը և այլն:

Ի վերջո, անհրաժեշտ է նշել, որ ԲՊՀ-ն չի կատարել ՈԱԱԿ Հավատարմագրման հանձնաժողովի 18 դեկտեմբերի 2019թ. թիվ 39 որոշման 4-րդ կետը՝ 2 տարին մեկ անգամ ՈԱԱԿ-

ին գրավոր հաշվետվություն ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրով կատարված գործողությունների արդյունքների վերաբերյալ:

Փորձագիտական խումբը հաշվի է առել, որ ԲՊՀ-ն երրորդ անգամ է անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց և նախորդ երկու անգամն էլ /վերջինը՝ 2019 թվականին/ ստացել է հավատարմագրում՝ չորս տարի ժամկետով: Բացի այդ, փորձաքննության անցկացման ժամանակահատվածում ԲՊՀ-ն գտնվում էր ճգնաժամային կառավարման իրավիճակում, երբ Հոգաբարձուների խորհրդի գործառույթներն իրականացնում էր ժամանակավոր խորհուրդը, կառավարումը՝ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարը, և տեղի էին ունենում ՄՈՒՀ-ի կառուցվածքի և ղեկավար անձնակազմի փոփոխություններ:

2019-2023թթ. ՌԾ-ում ձևակերպված են ՄՈՒՀ-ի տեսլականը և առաքելությունը, ռազմավարական նպատակներն ու խնդիրները, որոնք հիմնականում համահունչ են ՄՈՒՀ-ի կանոնադրական նպատակներին: Անվանափոխությունից հետո ԲՊՀ-ն հստակեցրել է իր առաքելությունը իրականացվող կրթական ծրագրերի ոլորտներին համահունչ և շեշտադրել միջազգայնորեն մրցունակ կադրերի պատրաստումը: Այնուամենայնիվ, ՀՀ կրթական տարածքում ԲՊՀ-ի հստակ դիրքավորման և ՄՈՒՀ-ի վերաբերյալ շահակիցների ունեցած ընկալումների ամբողջական արտահայտման տեսակետից կարևոր է նաև համալսարանի առավելությունների՝ օտար լեզուների ուսուցման առանձնահատկության, միջոլորտային կրթական ծրագրերի առաջարկման և բարձրագույն կրթություն տրամադրելու իրողության շեշտադրումը առաքելության ձևակերպման մեջ:

ԲՊՀ-ն ունի ռազմավարական պլանավորման որոշակի փորձ, սակայն խնդիրների հետևողական իրականացմանը կարող են խանգարել միջնաժամկետ պլանավորման բացակայությունը, գործողությունների կատարման ժամկետների անհստակությունը և ֆինանսական ռեսուրսների ոչ հստակ պլանավորումը: Մեկ այլ խնդիր էլ կապված է ՌԾ մշակման և իրականացման արդյունքների գնահատման գործընթացներում շահակիցների /առանձնապես՝ արտաքին և ուսանողների/ մասնակցության ապահովմանը:

Վերջին 5 տարիներին արդեն 2-րդ անգամ ԲՊՀ-ում տեղի են ունենում կառուցվածքային փոփոխություններ: 2019թ. իրականացվել են մի շարք գործընթացներ՝ կառուցվածքային փոփոխություններ, պաշտոնների վերանայումներ, որոնք հիմնականում խորը վերլուծված և հիմնավորված չեն եղել: Արդյունքում՝ իրականացված բարեփոխումներն արդեն 2023թ.-ին համալսարանի կողմից դիտարկվել են ոչ արդյունավետ, և ԲՊՀ-ն այս պահին նույնպես հայտնվել է փոփոխությունների ժամանակահատվածում: Փորձագիտական այցի օրերին արդեն մոտ 6 ամիս ԲՊՀ-ում իրականացվում էր ճգնաժամային կառավարում հակաճգնաժամային գործողությունների որևէ պլանի բացակայության պայմաններում, հաստատման փուլում էին ՄՈՒՀ-ի կառուցվածքային նոր փոփոխությունները, որոնք կրկին հիմնված չէին հավաստի տվյալների և դրանց վերլուծությունների վրա, իսկ ներքին շահակիցներն ամբողջապես իրազեկ չէին իրականացվող փոփոխություններից:

ԲՊՀ կառավարման համակարգը կարիք ունի կտրուկ փոփոխությունների՝ տարբեր ոլորտներում և ստորաբաժանումների գործողությունների երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանների մշակման, այդ պլանների իրականացման մշտադիտարկման մեխանիզմների ներդրման, արդյունքների գնահատման արդեն ներդրված քանակական ցուցանիշների ճշգրտման և կիրառման, կառավարչական տարբեր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի լիարժեք կիրառման տեսակետից:

Կառավարման արդյունավետության բարձրացման բանալին փորձագիտական խումբը տեսնում է որակի ներքին ապահովման համակարգի աշխատանքների բարելավման մեջ: Որակի ներքին ապահովման քաղաքականության և ընթացակարգերի հստակեցման դեպքում կհամակարգվեն ՄՈՒՀ-ի գործունեության վրա ազդող արտաքին և ներքին գործոնների

վերաբերյալ օբյեկտիվ տվյալների պարբերական հավաքագրման վստահելի աղբյուրները և քանակությունը, դրանք ժամանակին կվերլուծվեն և հնարավոր կդառնա հիմնավոր որոշումներ կայացնել վերլուծությունների արդյունքների հիման վրա: Իհարկե, նաև պետք է զարգացնել որակի պատասխանատուների ինստիտուտի դրական փորձը, ավելացնել ՈԱ համակարգին տրամադրվող մարդկային և ֆինանսական ռեսուրսները:

ԲՊՀ-ն իրականացնում է ՀՀ ՈԱՇ-ի 6-ից 8-րդ մակարդակներին համապատասխան կրթական ծրագրեր և շնորհում համապատասխան որակավորումներ, որոնք համահունչ են հաստատության առաքելությանը: Նախորդ հավատարմագրումից հետո իրականացված ՄԿԾ-ների բենչմարքինգի արդյունքում ծրագրերը բարելավվել են. վերանայվել են գործնական կարողությունների զարգացմանը նպաստող վերջնարդյունքները և շեշտադրվել լեզուների խորացված ուսուցումը տարբեր կրթական ծրագրերում, ինչը որոշակիորեն մրցակցային առավելություն է տալիս ՄՈՒՀ-ի շրջանավարտներին աշխատաշուկայում: Անհրաժեշտություն է դեռևս վերանայելու պրակտիկայի ծրագրերը:

ՈՒսուցման գործընթացում կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդները ներկայացված են առարկայական նկարագրերում, որոնք նպաստում են ուսանողների մոտ կրթական ակնկալվող վերջնարդյունքների ձևավորմանը, վերլուծական և հաղորդակցական կարողությունների զարգացմանը: ՄՈՒՀ-ի դասախոսները ուսուցման որակի վրա ազդեցություն ունեցող խնդիր են համարում «տարբեր մասնագիտությունների ուսանողներին նույն խմբում ընդգրկելը կամ խմբերում ուսանողների՝ ոչ ըստ ունակությունների տեղաբաշխումը», նաև «լսարանների սակավությամբ պայմանավորված՝ հոսքերի/խմբերի բազմամարդությունը»: Փաստացի, դասախոսությունների հոսքերը ընդգրկում են 60-75 սովորող, իսկ գործնական խմբերը՝ 20-25 սովորող, լեզուների դասավանդման առանձնահատկություններով պայմանավորված խմբերի համար բացառություններ չեն նախատեսված:

ԲՊՀ-ում ուսանողների գնահատման և գնահատականի բողոքարկման գործընթացները կանոնակարգված են: Մասնագիտական առանձնահատկություններից ելնելով ամբիոններում նույնպես մշակվել են գնահատման հայեցակարգեր և պահանջներ: ՄԿԾ-ներում ներկայացված են ուսանողի գնահատման հիմնական մեթոդները (ընթացիկ գնահատում, թղթապանակ, ամփոփիչ ստուգում, թեստեր, կուրսային աշխատանքներ, անհատական և խմբային աշխատանքներ և այլն), իսկ առանձին դասընթացների համար ուսանողների ամփոփիչ գնահատականը ձևավորող բաղադրիչները ներկայացված են տվյալ դասընթացի նկարագրում: Պետք է նաև նշել, որ դասընթացների նկարագրերում տեսանելի չէ, թե տվյալ վերջնարդյունքը ինչպիսի առաջադրանքով է գնահատվելու, հստակ սահմանված չեն գնահատման չափանիշները և ռուբրիկները: Անհրաժեշտություն կա հստակեցնելու պրակտիկայի վերջնարդյունքների գնահատման չափանիշները ևս:

Որակավորումների շնորհումը ՄՈՒՀ-ում նույնպես հստակ կանոնակարգված է բակալավրատում ամփոփիչ ատեստավորման և մագիստրատուրայում թեզերի պաշտպանության կազմակերպման համապատասխան կարգերով և աշխատանքների պատրաստման մեթոդական ուղեցույցներով: ՄՈՒՀ-ը կարևորում է գրագողության դեմ պայքարը և միջոցներ է ձեռք առնում ակադեմիական ազնվության ապահովման համար՝ նախատեսելով խիստ գործողություններ բացահայտված գրագողության դեպքում: Ներկայումս դասախոսների կողմից կիրառվում են պայքարի ավելի շատ անհատականացված մեթոդներ, որոնք ՄՈՒՀ-ը արդյունավետ է համարում: 2023թ. ավարտին նախատեսվում է գործարկել Erasmus+ Minerva միջազգային ծրագրերի շրջանակում մշակված ՀՀ-ում գրագողության բացահայտման էլեկտրոնային համակարգ: ԲՊՀ-ն

մասնակից է այդ գործիքի մշակման աշխատանքներին և գտնում է, որ դրա ամբողջական ներդնումից հետո բուհում կբացառվի գրագողությունը ոչ միայն ընթացիկ գնահատման գործընթացներում, այլև ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության ժամանակ, ինչը դրական ազդեցություն կունենա որակավորումների շնորհման արժանահավատության վրա:

Մարդկային ռեսուրսների ներգրավման ՄՈՒՀ-ի կողմից կիրառվող մոտեցումների արդյունքում համալսարանն ապահովված է անհրաժեշտ որակավորմամբ վարչական, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ համակազմերով, որոնց ներգրավման համար մշակված են ընթացակարգեր: Գործող կարգերը նախատեսում են ինչպես մրցութային ընտրության միջոցով համալրում, այնպես ռեկտորի և համապատասխան ստորաբաժանման ղեկավարի առաջարկությամբ: Դասախոսների քիչ մասն է մրցույթով ընտրվել, սակայն ձևավորված է փորձառու և երիտասարդ դասախոսների հարաբերականորեն կայուն կազմ, որի մասնագիտական կարողություններից ուսանողները բավարարված են: Ուսանողները առանձնապես գնահատում են օտարազգի լեզվակիր դասախոսների մասնակցությունը ուսուցման գործընթացներին, ինչպես նաև ՊԴ կազմի բազմազանությունը, որում ներգրավված են ինչպես պրակտիկ ոլորտի ներկայացուցիչներ, այնպես էլ գիտությունների թեկնածուներ և դոկտորներ: Արդիական է մնացել նախորդ հավատարմագրումից հետո չիրականացված խորհրդատվությունը՝ դասընթացների իրականացման համար սահմանել ՊԴ կազմին ներկայացվող պահանջներ, օրինակ, լեզու դասավանդող մասնագետի իմացության մինիմալ շեմը հաստատող հավաստագրի առկայություն:

Նախորդ հավատարմագրման արդյունքում տրամադրված փորձագիտական խորհրդատվության հիման վրա ԲՊՀ-ն իր 2019-23թթ. ռազմավարական զարգացման ծրագրում առանձնացրել է ուսումնական միջավայրի բարելավմանը ուղղված մի շարք նպատակներ և գործողություններ, որոնք հետևողականորեն իրականացրել է՝ ձևավորելու բազմալեզու և բազմամշակույթ միջավայր: Արդյունքում, վերանորոգվել են սանհանգույցները, կահավորվել են լսարանները և ուսումնական կաբինետները, ձեռք են բերվել համակարգիչներ և ՏՏ այլ միջոցներ, հատուկ կարիքներ ունեցող ուսանողների շարժն ապահովելու համար կառուցվել են թեքահարթակներ, առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունները ապահովում են անվտանգ միջավայր: Լսարանների պակասը դեռևս ստիպում է դասապրոցեսները կազմակերպել երկհերթ: Ուսումնական միջավայրի բարելավման տեսակետից դրական շարժ կա գրադարանի աշխատանքը բնութագրող ցուցանիշներում, թվային պահոցի և թվային գրադարանի զարգացման, տարբեր առցանց գրադարանային ցանցերի հասանելիության ապահովման ուղղություններով:

Ֆինանսական կայունության և ֆինանսների կառավարման տեսակետից համալսարանը որոշակի առաջընթաց է գրանցել, ինչն ապացուցում են բյուջեի մուտքերի և ուսումնական ծախսերի ծավալների աճը, ֆինանսական անվտանգային բարձիկի ձևավորումը, աշխատավարձերի բարձրացումը, գիտությանը տրամադրվող գումարների աճը և այլն: Ֆինանսների կառավարման արդյունավետության բարձրացման համար ԲՊՀ-ն հաստատված ֆինանսական քաղաքականության կարիք ունի, որի հիման վրա կարելի է իրականացնել երկարաժամկետ պլանավորում ըստ համալսարանական առաքելության ոլորտների /կրթություն, գիտություն և ծառայություն հասարակությանը/ և ռազմավարական նպատակների ու խնդիրների:

Կրթական ծրագրերի կառուցվածքի, բովանդակության և ակնկալվող վերջնարդյունքների, դասախոսական կազմի կողմից կիրառվող դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների, դասախոսական կազմի և ուսումնական միջավայրի ուսումնասիրություններն առկա

խնդիրներով հանդերձ՝ թույլ են տալիս եզրակացնել, որ ԲՊՀ-ն ընդհանուր առմամբ ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում, միևնույն ժամանակ անհրաժեշտություն կա կարճ ժամանակամիջոցում լուծել առկա խնդիրները և չեզոքացնել վտանգները հստակ գործողությունների միջոցով:

ԲՊՀ-ն ակտիվ քաղաքականություն է վարում ուսանողների հավաքագրման և ընդունելության ուղղությամբ, ինչը վերջին տարիներին ապահովում է ընդունվողների թվի կայուն աճ: Անհանգստացնող է հեռակա ուսուցման ձևով ընդունելության աճը և առկա ուսուցմամբ, ինչպես նաև մագիստրատուրայում սովորելու ուսանողների ցանկության նվազումը, ինչի պատճառները վերլուծության կարիք ունեն: Իսկ մինչ այդ, համալսարանը քայլեր պետք է իրականացնի հեռակա համակարգում սովորող ուսանողների համար կրթության նույն որակի ապահովման համար, ինչ որ առկա համակարգում սովորողների համար է:

ԲՊՀ-ն իրականացնում է ուսանողների կրթական կարիքների վերհանման գործողություններ, ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար: Ակտիվ գործում է ՄՈՒՀ-ի կարիերայի կենտրոնը, որը ուսանողների կարիերային նպաստող աշխատանքներից բացի, զգալի դեր ունի համալսարանական կյանքում: ՄՈՒՀ-աշխատաշուկա, ՄՈՒՀ-շրջանավարտ կապերը նույնպես ապահովվում են Կարիերայի կենտրոնի կողմից: Պարբերաբար կազմակերպվում են տեղեկատվական և ուսուցողական դասընթացներ, «Բաց դռների» և «Կարիերայի և տեղեկատվության օրեր ԲՊՀ-ում», հանդիպումներ ոլորտային գործատուների հետ:

ԲՊՀ-ն ունի շրջանավարտների զբաղվածության բարձր մակարդակ, ինչը կարող է ցույց տալ, որ համալսարանի կողմից տրամադրվող կրթությունը տալիս է անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ, ինչ որ պահանջվում է աշխատաշուկայի կողմից: Սակայն շրջանավարտների կարիերայի հետագծերը լրացուցիչ ուսումնասիրությունների կարիք ունեն, թե որքանո՞վ են աշխատատեղերը համապատասխանում համալսարանի և շրջանավարտի ակնկալիքներին, առկա են կարիերայի առաջխաղացման հնարավորություններ և այլն[1]:

Այլ ՄՈՒՀ-երում ավանդական գործող երկու ուսանողական կառույցներն էլ ԲՊՀ-ում վերակառուցման կարիք ունեն: Ուսանողական գիտական ընկերություն /ՈՒԳԸ/ որպես այդպիսին ընդհանրապես չկա ձևավորված, իսկ ուսանողական խորհուրդը /ՈՒԽ/ որպես ուսանողների իրավունքները ներկայացնող և պաշտպանող մարմին չի ընկալվում ՄՈՒՀ-ի ուսանողական լայն հանրույթի կողմից: Անհրաժեշտ է շփումների ակտիվացում և փոխադարձ վստահության մթնոլորտի ձևավորում՝ ուսանողի իրավունքների և շահերի պաշտպանության գաղափարի շուրջ:

ԲՊՀ-ն 2019-2023 թթ. ՌԾ-ում արտահայտել է գիտահետազոտական ոլորտում իր հավակնությունները՝ ներկայացնելով հետազոտական ուղղությունները՝ իրականացման համար առանձնացնելով խնդիրներ, գործողություններ և վերջնարդյունքներ: Միևնույն ժամանակ ԲՊՀ ամբիոններում և ԳՈՒԿ-երում առկա չեն հետազոտական ոլորտում գործունեության միջնաժակետ և կարճաժամկետ ծրագրեր: Սահմանված վերջնարդյունքների ընդհանրական բնույթը, բոլոր արդյունքների համար վերջնաժամկետ 2023թ. սահմանելը և հետազոտության ոլորտում արդյունքների գնահատման չափելի ցուցիչների բացակայությունը ՄՈՒՀ-ին հնարավորություն չի ընձեռում գնահատելու ձեռք բերված արդյունքները:

[1] Նախադասությունը խմբագրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկումների արդյունքում:

Դրական է, որ ավելացել են գիտությանն ուղղված ֆինանսական միջոցները, ինչը նպաստել է նաև ներքին դրամշնորհային ծրագրերի ներդրմանը: Մինչդեռ ներքին դրամաշնորհային ծրագրերի և դրանց ծախսերի արդյունավետության գնահատման մեխանիզմներ ներդրված չեն: Փորձագիտական խումբը գտնում է, որ դեռևս տեսանելի չեն դրամաշնորհային ծրագրերի գիտական արդյունքները և դրանց ազդեցությունը ոլորտի զարգացման վրա: ՄՈՒՀ-ի համար խնդիր է այն, որ ՊԴ և ուսանողական համակազմերը մոտիվացված չեն հետազոտական աշխատանք իրականացնելու համար, իսկ հետազոտական աշխատանքներում ՊԴ կազմին և ուսանողներին ներգրավելու և խրախուսելու մեխանիզմներն արդյունավետ չեն գործում. դասախոսների մեկ երրորդը ընդհանրապես հետազոտությամբ չի զբաղվում: ՄՈՒՀ-ն աշխատանքներ ունի կատարելու գիտահետազոտական գործունեության միջազգայնացման քաղաքականության մշակման և իրականացման, ինչպես նաև հետազոտության և ուսումնառության կապն ամրապնդելու տեսակետից:

ԲՊՀ-ում գործում է ներքին և արտաքին հաշվետվողականության կայուն համակարգ, որը ներառում է ռեկտորի, կառուցվածքային ստորաբաժանումների, ֆակուլտետների, ինչպես նաև ֆինանսական գործունեության տարեկան հաշվետվությունները: Վերջին տարիներին ռեկտորի տարեկան հաշվետվությունները կազմվում են ՌԾ նպատակներին համապատասխան, որը ԳԱՑ-երի հետևողական կիրառման դեպքում կարող է դառնալ լավ գործիք ՌԾ նպատակների իրականացումը գնահատելու համար:

ԲՊՀ-ն իր գործունեության թափանցիկության ապահովման նպատակով կիրառում է տարբեր մեխանիզմներ՝ կայքէջ, սոցիալական հարթակներ, ԶԼՄ-ներ և այլն: ՄՈՒՀ-Ի եռալեզու կայքում հիմնականում հայերեն լեզվով է հրապարակված կարևոր և անհրաժեշտ տեղեկատվությունը, ինչը վերանայման կարիք ունի. օտարալեզու բաժինները և փաստաթղթերը ներկայացնող մի շարք էջեր մշտական թարմացման կարիք ունեն: Անհրաժեշտություն կա նաև մշակել ստորաբաժանումների կողմից վարվող սոցիալական էջերի և դրանցով հրապարակվող տարբեր նյութերի նկատմամբ վերահսկողության քաղաքականություն:

ԲՊՀ-ն արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման գործընթացների իրականացումը դիտարկում է որպես առաջնահերթություն, ինչն ամրագրված է համալսարանի 2019-23թթ. զարգացման ՌԾ-ի նախաբանում և 7-րդ բաժնում: ՄՈՒՀ-ի արտաքին կապերը և միջազգայնացման գործընթացները համակարգվում են համապատասխան ստորաբաժանման կողմից, իսկ շարժունության կազմակերպումը կանոնակարգված է առանձին փաստաթղթով: Միջազգային շարժունության տվյալների քանակական աճին նպաստում են ուսանողների, ՊԴ և վարչական աշխատակազմերի կողմից առնվազն մեկ օտար լեզվի տիրապետելը, ինչպես նաև տարբեր միջազգային կառույցների հետ գործող ՄՈՒՀ-ի պայմանագրերը և համաձայնագրերը, արտասահմանյան բուհերի հետ համատեղ կրթական ծրագրերի իրականացումը:

Միջազգային ակտիվ գործունեության արդյունքում ԲՊՀ-ն եզակի իրավունք է ձեռք բերել ՀՀ-ում անցկացնելու մի շարք օտար լեզուների, մասնավորապես՝ իտալերենի (CELI), իսպաներենի (CELU), հունարենի (ELLINOMATHEIA), կորեերենի (TOPIK), չինարենի (HSK, HSKK), գերմաներենի (ÖSD) տարբեր մակարդակների համար միջազգային քննություններ, որի արդյունքում շնորհվում են միջազգային վկայագրեր:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. ռազմավարական պլանավորման որոշակի փորձի առկայությունը, ՌԾ-ում սահմանված տեսլականը, առաքելությունը, ռազմավարական ուղղությունները, նպատակները և խնդիրները,
2. կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը կարգավորող փաստաթղթային հենքի և պաշտոնի անձնագրերի առկայությունը,
3. գործնական կարողությունների զարգացմանը նպաստող վերջնարդյունքներով և լեզուների խորացված ուսուցումը շեշտադրող բարելավված կրթական ծրագրերի իրականացումը,
4. Կարիերայի կենտրոնի նպատակային և արդյունավետ գործունեությունը,
5. մոտիվացված, իրենց գործին նվիրված և արհեստավարժ դասախոսական կազմի գործունեությունը, որոնք ներկայացնում են պրակտիկ և ակադեմիական ոլորտերը,
6. գիտությանն ուղղված ֆինանսական միջոցների աճը, ներքին դրամաշնորհային ծրագրերի և գիտական գործունեության խրախուսման մեխանիզմների ներդնումը,
7. բազմալեզու և բազմամշակույթ ուսումնական միջավայրի առկայությունը, տրամադրվող ռեսուրսներից և ուսումնական միջավայրից ներքին շահակիցների բավարարվածությունը,
8. ներքին և արտաքին հաշվետվողականության կայուն համակարգի, ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկության ապահովման, հասարակությանը գիտելիքների փոխանցման տարբեր մեխանիզմների գործարկումը,
9. ուսանողների և աշխատողների՝ առնվազն մեկ օտար լեզվի իմացությունը,
10. որակի ներքին ապահովման կառույցում ներգրավված աշխատակիցների բարձր մոտիվացիան:

Հաստատության թույլ կողմերն են.

1. ՄՈՒՀ-ի առաքելության ոչ միասնական ընկալումը շահակիցների տարբեր խմբերի կողմից,
2. պլանավորման, պլանների իրականացման մշտադիտարկման, արդյունքների գնահատման գործիքների, այդ թվում՝ քանակական ցուցանիշների, ոչ լիարժեք կիրառումը,
3. կառավարչական գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի ոչ լիարժեք կիրառումը,
4. մագիստրոսական ծրագրերում մուտքային հստակ պահանջների բացակայությունը,
5. տարբեր մասնագիտությունների և ունակությունների ուսանողներին նույն խմբում ընդգրկելու, բազմամարդ հոսքեր/խմբեր ձևավորելու պրակտիկան,
6. դասընթացների իրականացման համար ՊԴ կազմի մասնագիտական գիտելիքներին և կարողություններին ներկայացվող պահանջների բացակայությունը,
7. հետազոտական աշխատանքներ իրականացնելու ՊԴ և ուսանողական համակազմերի մոտ մոտիվացիայի ցածր մակարդակը, հետազոտական աշխատանքներում նրանց ներգրավելու և խրախուսելու մեխանիզմների ոչ արդյունավետությունը,
8. առաջարկվող կրթական ծրագրերի իրականացման և դրանց վերջնարդյունքների ձևավորման համար անհրաժեշտ ռեսուրսների բավարարության ու արդյունավետության գնահատման բացակայությունը,
9. օտարերկրյա դիմորդների ներգրավմանը ուղղված գործընթացների ոչ հստակ պլանավորված և թիրախային բնույթը,
10. որակի ապահովման հաստատված քաղաքականության և ընթացակարգերի բացակայությունը:

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Դիտարկել համալսարանի առաքելության հստակեցման հնարավորությունը՝ հաշվի առնելով ներքին և արտաքին շահակիցների ընկալումը, իրականացվող կրթական ծրագրերի և ուսումնական միջավայրի առանձնահատկությունները:
2. Փնտրել և ցույց տալ համալսարանի եզակիությունը պետության կրթության նոր քաղաքականության համատեքստում՝ փոփոխությունների շրջանում ցույց տալով համալսարանի առավելությունը և նպաստելով համալսարանի ճիշտ դիրքավորմանը:
3. Իրականացնել համալսարանի ՌԾ-ով սահմանված նպատակների և խնդիրների՝ ՈԱՇ-ին համապատասխանության վերլուծություններ:
4. Ներդնել մեխանիզմներ ՌԾ-ի մշակման, գնահատման և բարելավման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների լայն ընդգրկվածությունը ապահովելու համար:
5. Մշակել և նոր ռազմավարական ծրագրում ընդգրկել արդյունքների գնահատման որակական և քանակական չափելի հստակ ցուցիչներ՝ հիմք ընդունելով արդեն իսկ մշակված ԳԱՀՑ-երը:

Կառավարումն ու վարչարարությունը

6. Մշակել և ներդնել փոփոխությունների կառավարման հստակ մեխանիզմներ, հստակեցնել և ընդգծել կառուցվածքային ուղղաձիգ կապերը:
7. Մեծացնել կառավարման օղակների հաղորդակցումը ներքին և արտաքին շահակիցների հետ՝ ապահովելով հստակություն և թափանցիկություն ապագայում պլանավորվող փոփոխությունների վերաբերյալ:
8. Բարձրացնել ֆինանսների կառավարման արդյունավետությունը՝ բյուջեից հատկացումները կապել ստացված արդյունքային ցուցանիշների հետ (ծրագրային բյուջետավորման եղանակ):
9. Մշակել ֆինանսական քաղաքականություն և ֆինանսական ռեսուրսների բաշխումն իրականացնել ըստ բուհի ռազմավարական նպատակների և խնդիրների:
10. Կառավարման համակարգում աշխատեցնել ՊԻԳԲ շրջափուլը՝ ապահովելով պլանների և դրանց կատարողականների համապատասխանությունը:

Մասնագիտության կրթական ծրագրերը

11. Ներդնել կրեդիտների հաշվարկման մեթոդաբանություն՝ հաշվի առնելով ուսանողների և՛ լսարանային, և՛ արտալսարանային բեռնվածությունը սահմանված վերջնարդյունքների ձեռքբերման տեսանկյունից:
12. Ապահովել ՄԿԾ-ների առարկայական փաթեթներում սահմանված բոլոր վերջնարդյունքներին համապատասխան ուսանողներին տրամադրվող առաջադրանքներ՝ նպաստելով ՄԿԾ փաթեթի ամբողջականացմանը և ուսանողի ծանրաբեռնվածության ճիշտ հաշվարկմանը:
13. Քննարկել և վեանայել պարտադիր դասընթացների բովանդակությունը՝ ապահովելով դրանց կապը մասնագիտությունների հետ:

14. Մշակել և ՄԿԾ-ներում ներդնել պրակտիկաների արդյունքում ուսանողների ակնկալվող վերջնարդյունքները՝ նպաստելով պրակտիկաների իրականացման հստակ բովանդակությանը։
15. Մշակել և ներդնել պրակտիկաների գնահատման հստակ չափանիշներ՝ ապահովելով ուսանողի գնահատման թափանցիկությունը։
16. Ապահովել ակադեմիական ազնվության պահպանման միասնական մեխանիզմներ ուսանողների գնահատման բոլոր փուլերում։

Ուսանողները

17. Ներդնել մագիստրատուրայի ընդունելության հստակ պահանջներ՝ ապահովելով համապատասխան մուտքային տվյալներ ծրագիրը հաղթահարելու համար։
18. Ներդնել ուսանողներին գիտահետազոտական աշխատանքներում ներգրավելու խրախուսման մեխանիզմներ։
19. Մշակել մեխանիզմներ ուսանողներին ՈւԽ աշխատանքներում ներգրավելու և ուսանողների վստահությունը ՈւԽ կառույցի նկատմամբ վերականգնելու ուղղությամբ՝ հիմքում ունենալով առավել ակտիվ հաղորդակցությունը։
20. Ուսումնասիրել շրջանավարտների կարիերայի հետագիծը՝ վերլուծելով աշխատող շրջանավարտների կարիերայի հնարավորությունները՝ նպաստելով նաև ՄԿԾ-ների բարելավմանը։
21. Կանոնակարգել և վերահսկել ուսանողներին տրամադրվող խորհրդատվությունները (նամանավանդ հեռակա բաժնում սովորող ուսանողների)՝ ապահովելով ուսանողների կայուն առաջընթացը։

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

22. Քայլեր ձեռնարկել լեզվակիր դասախոսների ներգրավման ուղղությամբ՝ ապահովելով լեզու դասավանդող ամբիոնների համազոր զարգացումը։
23. ՊԴ կազմի կատարողականի գնահատման գործընթացում կարևորել բազմագործոն մոտեցումը՝ դիտարկելով դասավանդման արդյունավետությունը, մասնագիտական կարողությունները, ուսանողի առաջընթացի ապահովումը, նորարարությունների իրականացումը, գիտական արդյունքը և այլն։
24. Հնարավորություններ ստեղծել բոլոր դասախոսական կազմի համար ունենալ մասնագիտական վերապատրատումներ ինչպես հանրապետությունում, այնպես էլ արտասահմանում՝ ապահովելով ՊԴ կազմի համահավասար կատարելագործումը։
25. Դիտարկել ՊԴ կազմին գիտահետազոտական արդյունքների հրատարակման համար տրվող լրավճարների սահմանաչափերի ավելացման հնարավորությունը։

Հետազոտությունը և զարգացումը

26. Ուսումնասիրել և վերլուծել ամբիոնների, գիտաուսումնական կենտրոնների հետազոտական կարողությունները՝ ապահովելով դրանց համահավասար զարգացումը հետազոտության ոլորտում։
27. Ներդնել ներքին դրամաշնորհների արդյունավետության գնահատման մեխանիզմներ՝ սահմանելով նաև արդյունավետությունը գնահատող հստակ ցուցանիշներ։

28. Ուսումնասիրել, վեր հանել հետազոտության ոլորտում լուրջ ձեռքբերումներ ունեցող ամբիոնների ունեցած լավ փորձը և տարածել այն մյուս ստորաբաժանումներում[2]:
29. Խրախուսել ամբիոնների համագործակցությունը և միջգիտակարգային հետազոտությունների իրականացումը՝ նպաստելով ՊԴ կազմի փորձի փոխանակմանը և համատեղ հետազոտական նախագծերի իրականացմանը:
30. Առավել շատ խրախուսել բարձր վարկանիշ ունեցող միջազգային հանդեսներում և պարբերականներում տպագրությունները՝ նպաստելով հետազոտական աշխատանքների միջազգայնացմանը:
31. Մշակել մեխանիզմներ հետազոտություն և ուսումնառություն կապն առավել ամրապնդելու համար:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

32. Զարգացնել ամբիոնների ինքնավերլուծության մեխանիզմը կամ ներդնել նոր մեխանիզմներ ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի բավարարության և արդյունավետության գնահատման համար:
33. Միջոցներ ձեռք առնել գրադարանը մասնագիտական հայերեն և օտար լեզուներով /առանձնապես՝ արևելյան/, նոր ներդրված կրթական ծրագրերի համար անհրաժեշտ գրականություն ձեռքբերելու համար:
34. Խորացնել համագործակցությունը ոլորտային գործատուների հետ՝ նրանց ռեսուրսային բազաները՝ ՄՈՒՀ-կրթական ծրագրերի կարիքներին ծառայեցնելու նպատակով:
35. Ներդնել ուսուցման գործընթացների որակի ապահովման համար դասախոսների և ուսանողների կարիքների վերհանման և դրանց բավարարման մեխանիզմներ:

Հասարակական պատասխանատվությունը

36. Բարելավել կայքէջի աշխատանքը՝ ապահովելով արտաքին շահակիցներին նաև օտար լեզուներով տեղեկատվություն:
37. Մշակել մեխանիզմներ ստորաբաժանումների ունեցած սոցիալական հարթակներով հրապարակվող նյութերի բովանդակության նկատմամբ որոշակի վերահսկողություն ունենալու համար:
38. Ներդնել հետազոտական արդյունքները տարածելու և հանրայնացնելու մեխանիզմներ:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

39. Մշակել և ներդնել արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ արդյունքների ապահովման չափելի քանակական ցուցիչներ:
40. Ներդնել միջազգայնացման գործընթացների արդյունավետության մշտադիտարկման համակարգային մեխանիզմներ՝ ապահովելով ընթացիկ գործունեության վերլուծություն:

---

[2] Նախադասությունը խմբագրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկումների արդյունքում:

41. Ակտիվացնել միջազգային ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տարածման մեխանիզմները՝ ապահովելով համապատասխան տեղեկատվություն բոլոր շահակիցների շրջանում:

Որակի ներքին ապահովման համակարգը

42. Վերջնականացնել, հաստատել և հրապարակել «ՈԱ ուսումնամեթոդական ձեռնարկը»՝ ապահովելով որակի ապահովման քաղաքականությանը և ընթացակարգերին համապատասխան գործունեություն:
43. Կանոնակարգել ՈԱ համակարգի կառուցվածքային բոլոր միավորների պատասխանատվությունները ՈԱ ներբուհական գործընթացների շրջանակներում:
44. ՄՈՒՀ-ի եկամուտների և ծախսերի նախահաշվում նախատեսել տող՝ որակի ապահովման գործընթացների իրականացման համար ֆինանսական ռեսուրսների տրամադրման նպատակով:
45. Իրականացրել որակի ապահովման համակարգի ազդեցության գնահատում բուհական գործընթացների բարելավման վրա, վերլուծել կիրառվող որակի ապահովման մեխանիզմների և գործիքների արդյունավետությունը:
46. Հստակեցնել որակի արտաքին գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության քանակը, աղբյուրները և հավաքագրման մեխանիզմները:

_____

Անուշավան Մակարյան
Փորձագիտական խմբի ղեկավար

09.10.2023թ.

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

ԲՊՀ-ն, ունենալով լեզվի ուսուցման 88-ամյա պատմություն, ավանդաբար ձգտել է ստեղծել բազմամշակութային և բազմալեզու միջավայր: Միջազգային համագործակցությունը, ներառյալ միջազգային շարժունությունը համալսարանի համար առաջնահերթություն է: ԲՊՀ-ն ունի բազմաթիվ համագործակցություններ և համաձայնագրեր միջազգային գործընկերների հետ տարբեր ոլորտներում՝ ներառյալ կարիերայի կառավարման, կրթության կազմակերպման, որակի ապահովման: 2020-2021թթ.-ին COVID-19 համաճարակով պայմանավորված նկատվել է շարժունության նվազում, սակայն հատկանշական է, որ համալսարանը կարողացել է հաղթահարել ճգնաժամը և վերջին երկու տարիներին ԲՊՀ-ի ուսանողների և անձնակազմի մասնակցությունը «Erasmus+» միջազգային շարժունության ծրագրերին զգալիորեն աճել է (50-70%) և՛ ուսանողների, և՛ անձնակազմի համար: Հարկ է նաև նշել, որ վերջին 5 տարիներին ԲՊՀ-ն ակտիվորեն մասնակցել է ոչ միայն ԵՄ «Erasmus+» միջազգային շարժունության ծրագրերին, այլև պայմանագրեր է կնքել եվրոպական 31 համալսարանների հետ:

Ինքնավերլուծության համաձայն՝ արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչությունը պարբերաբար տեղեկատվություն է տարածում միջազգային շարժունության և դրամաշնորհային ծրագրերի և դրանց ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ, սակայն փորձագիտական այցը ցույց տվեց, որ առկա է այս գործընթացներն առավել թափանցիկ դարձնելու անհրաժեշտություն, քանի որ մի շարք ներքին շահակիցներ, որոնք կարող են կարևոր դերակատարում ունենալ այդ ծրագրերում, լիովին տեղյակ չեն շարժունության ծրագրերին մասնակցելու հնարավորություններից և այդ ուղղությամբ համալսարանի ունեցած քաղաքականությունից: Իրազեկման աշխատանքներն առավել ակտիվ և թիրախային իրականացնելու պարագայում համալսարանը կարող է ունենալ շարժունության առավել բարձր ցուցանիշներ:

ԲՊՀ-ում առկա են կրթության միջազգայնացման նախադրյալներ, դրանցից ամենակարևորը ուսանողների և դասախոսական կազմի օտար լեզուներին տիրապետելու բարձր տոկոսային ցուցանիշներն են: Ողջունելի է, որ համալսարանի կրթական գործընթացներում ներգրավված են նաև լեզվակիր դասախոսներ, ուսանողների և դասախոսների հետ հանդիպումները ցույց տվեցին, որ ԲՊՀ-ն կարիք ունի լեզվակիր դասախոսների առավել շատ ներգրավման, քանի որ այն նպաստում է համալսարանում բազմամշակութային միջավայրի ստեղծմանը, լեզուների ուսուցմանը և միջազգայնացմանը, ինչպես նաև տվյալ կրթական ծրագրերի վարկանիշի բարձրացմանը: Կրթական ծրագրերի միջազգայնացման տեսանկյունից առանձնակի կարևոր է նաև օտար լեզվով դասավանդվող ՄԿԾ-ների ներդրումը, որը կնպաստի միջազգային ուսանողների ներգրավմանը և ՄՈՒՀ-ի տեսանելիության բարձրացմանը: Ուսանողների շարժունության ծավալների մեծացման տեսանկյունից խորհուրդ է տրվում նաև կրթական ծրագրերում ավելացնել և բազմազանեցնել ընտրովի առարկաները, որն ուսանողներին կպատրաստի այլ երկրներում միջազգային կրթություն ստանալուն:

Բարձրագույն կրթության եվրոպական համակարգը հստակ տարբերակում է բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերը՝ ելնելով տրամադրվող որակավորման մակարդակից: ԲՊՀ-ն արդեն մշակել է ՄԿԾ-ներ երկու մակարդակների համար էլ, այնուամենայնիվ փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մագիստրատուրայի ընդունելության ընտրված

ձևաչափն ամբողջովին հնարավորություն չի ընձեռում ընտրելու այնպիսի ուսանողներ, որոնք լիարժեքորեն կկարողանան հաղթահարել կրթական ծրագրի վերջնարդյունքները առանց հավելյալ պարպմունքների կամ աշխատանքի, այս տեսանկյունից խորհուրդ է տրվում մագիստրատուրայի ուսանողների հավաքագրման և ընդունելության համար մշակել հստակ չափանիշներ և մուտքային պահանջներ, որը թույլ կտա տվյալ մակարդակում սովորող ուսանողին հաղթահարելու տվյալ ծրագիրը և ձեռք բերելու ՄԿԾ-ով սահմնված բոլոր վերջնարդյունքները:

ԲՊՀ-ում կարևոր մարտահրավեր է դասախոսական կազմի ներգրավվածության ապահովումը հետազոտական և գիտական աշխատանքներում: Փորձագիտական այցը հաստատեց, որ ՊԴ կազմը քիչ ժամանակ և մոտիվացիա ունի հետազոտություն իրականացնելու և գիտական աշխատանք հրապարակելու համար, թեև ԲՊՀ-ն հետազոտական գործունեությունը համարում է իր առավելությունը: Բացի այց, համալսարանը չի տրամադրում բավարար ֆինանսական միջոցներ տպագրությունների համար, որը կմոտիվացնի ՊԴ կազմին գիտական արտադրանք տալու տեսանկյունից: ԲՊՀ-ում շարժունակության ծրագրերը հիմնականում կենտրոնացված են ուսուցման, այլ ոչ թե հետազոտության վրա: ԲՊՀ-ի ղեկավար անձնակազմը և մյուս շահագրգիռ կողմերը պետք է որոշեն, թե որքան կարևոր է հետազոտությունը հաստատության համար՝ ելնելով առաքելության և ռազմավարական նպատակներից:

Ողջունելի է, որ ԲՊՀ-ն ճանաչվել է Եվրոպական համալսարանների ասոցիացիայի (EUA) լիիրավ անդամ և թարմացրել է իր համագործակցությունը Եվրոպայի խորհրդի Ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոնի (ECML) հետ և շարունակում է իր սերտ համագործակցությունը տարբեր միջազգային հաստատությունների հետ, ինչպիսիք են՝ Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայությունը (DAAD), Ավստրիական փոխանակման ծառայությունը, բրիտանական խորհուրդը և ֆրանսիական դաշինքը: Փորձագիտական խումբը կարևորում է նաև ավելի սերտ համագործակցություն սկսել նաև անգլիախոս երկրների և կազմակերպությունների հետ, որը կնպաստի անգլիախոս միջավայրում ԲՊՀ-ի տեսանելիության մեծացմանը:

Վերջապես, հարկ է նշել, որ ԲՊՀ-ն և՛ ինքնավերլուծության զեկույցում, և՛ փորձագիտական այցին շեշտադրել է, որ իրենք իրականացնում են առողջության և անվտանգության պահպանման արդյունավետ միջոցառումներ, օրինակ՝ ուսանողները անհրաժեշտության բարագայում կարող են բուժօգնություն ստանալ համալսարանում, ֆիզիկական դաստիարկաություն առարկան լիարժեք հաղթահարելու համար ուսանողները նախապես անցնում են համապատասխան բուժզննում, իսկ Ֆիզիկական դաստիարակություն առարկան միտված է ուսանողների առողջության պահպանմանը: Անվտանգության տեսանկյունից նաև նշվում է, որ դեռևս ՄՈՒՀ-ում կան տարածքներ, որոնք անհասանելի են մնում հաշմանդամություն ունեցող ուսանողների համար:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Բրյուսովի պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից[3].

1. **Անուշավան Մակարյան՝** ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, փորձագիտական խմբի ղեկավար, Հայաստանի Հանրապետություն
2. **Ռաուլա Դիաբ՝** Լիբանանի ամերիկյան համալսարանի հավատարմագրման և ուսումնական աշխատանքների գծով ռեկտորի օգնական, անգլերեն/կիրառական լեզվաբանության դոցենտ, փորձագիտական խմբի միջազգային անդամ, Լիբանանի Հանրապետություն,
3. **Տիգրան Սիմյան՝** բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի Արտասահմանյան գրականության ամբիոնի դասախոս, փորձագիտական խմբի անդամ, Հայաստանի Հանրապետություն,
4. **Տաթևիկ Սարգսյան՝** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, Հայաստանի եվրոպական համալսարանի Զբոսաշրջության և սպասարկման ամբիոնի վարիչ, փորձագիտական խմբի անդամ, Հայաստանի Հանրապետություն,
5. **Էլեն Ղահրամանյան՝** Եվրասիա միջազգային համալսարանի Կառավարում բաժնի բակալավրիատի 2-րդ կուրսի ուսանողուհի, ուսանող-փորձագետ, Հայաստանի հանրապետություն:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ և նշանակվել ՈԱԱԿ տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի մասնագետ Անահիտ Տերտերյանը, իսկ թարգմանությունը կատարել է ԵՊՀ միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի դասախոս Անուշ Այունցը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանը դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո ՈԱԱԿ-ի և ԲՊՀ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Ինքնավերլուծություն

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը: ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Այնուհետև ինքնավերլուծությունն ու կից փաստաթղթերի փաթեթը, համալսարանի կողմից լրացված էլեկտրոնային հարցաշարը տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է ԲՊՀ-ի հետ և հաստատվել ՈԱԱԿ տնօրենի հրամանով:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել են չորս վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. Փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. Նախնական գնահատումը՝ որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները,
3. Փաստաթղթերի և ռեսուրսների ուսումնասիրության մեթոդաբանությունը,
4. Հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան ու տեխնիկան:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ԲՊՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում՝ ըստ ձևաչափի պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախնական գնահատման ընթացքում փորձագիտական խմբի անդամները իրականացրել են նաև դասալսումներ ու ռեսուրսների դիտարկում: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[4]: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն և այլն:

Նախանական այց

2023թ. մայիսի 23-ին տեղի է ունեցել հանդիպում համալսարանի ղեկավար կազմի հետ: Հանդիպման ժամանակ ինստիտուտի ղեկավար կազմի հետ քննարկվել և համաձայնեցվել է փորձագիտական այցի ժամանակացույցը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Քննարկվել են ֆոկուս խմբային հանդիպումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված պայմանները:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2023թ. հունիսի 6-ից 9-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր միջազգային փորձագետ Ռուլա Դիաբի հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ՄՈՒՀ-ի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հետագա քայլերը: Այցին ներկա է գտնվել փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը և թարգմանիչը: Փորձագիտական այցը սկսվել է համալսարանի ռեկտորի պարտականությունները կատարող Դ. Գյուրջինյանի հետ հանդիպմամբ և ավարտվել հաստատության ղեկավար կազմի հետ հանդիպմամբ: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների դասախոս և ուսանող մասնակիցները, դեկանները, ամբիոնի վարիչները, գործատուներն ու շրջանավարտներն ընտրվել են բուհի կողմից նախապես տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները, բացառությամբ՝ հոգաբարձուների ժամանակավոր խորհրդի և բաց հանդիպման: Փորձագիտական խումբը նախատեսված այցի ընթացքում իրականացրել է նաև փաստաթղթերի ուսումնասիրություն[5] և ռեսուրսների դիտարկում[6]: Այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքներ, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները: Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների ու ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում՝ նախատեսելով գնահատման երկաստիճան սանդղակ՝ **բավարար** և **անբավարար**:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը նախնական գնահատումն իրականացրել է համալսարանի լրացրած էլեկտրոնային հարցաշարի, ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության, իրականացված դասալսումների, փորձագիտական այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրս բերված դիտարկումների հիման վրա փորձագիտական խումբը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը: Միջազգային փորձագետը պատրաստել է նաև գործընկերային գնահատման վերաբերյալ առանձին կարծիք: Փաստաթղթերը թարգմանվել և տրամադրվել են փորձագիտական խմբին: Գործընկերային գնահատման կարծիքն ամբողջությամբ ներառվել է զեկույցի տեքստում: Փորձագիտական խմբի անդամների հաստատումից հետո նախնական զեկույցը տրամադրվել է համալսարանին 29.08.2023թ.:

Զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ ԲՊՀ-ն իր արձագանքն ուղարկել է ՈԱԱԿ 13.09.2023թ.-ին: ՈԱԱԿ-ը հաստատության դիտարկումները տրամադրել է փորձագետներին: 18.09.2022թ.-ին ՈԱԱԿ-ը կազմակերպել է հաստատության և փորձագիտական խմբի հանդիպում, որի ժամանակ քննարկվել են ներկայացված դիտարկումները փորձագիտական նախնական զեկույցի վերաբերյալ: Հաշվի առնելով հաստատության դիտարկումները՝ փորձագիտական խումբը կազմել է փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը:

Անահիտ Տերտերյան
Փորձագիտական խմբի համակարգող
09.10.2023թ.

[5] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ
[6] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲՊՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. Բրյուսովի պետական համալսարանը հիմնադրվել է 1935 թվականի փետրվարի 15-ին: Ի սկզբանե ԲՊՀ-ն ստեղծվել է որպես ռուսաց լեզվի ուսուցիչներ պատրաստելու երկամյա մանկավարժական ինստիտուտ: 1940թ. ինստիտուտը վերակազմվել է՝ վերածվելով Պետական մանկավարժական ինստիտուտի: 1941թ. դպրոցներն օտար լեզվի մասնագետներով ապահովելու նպատակով ինստիտուտում բացվել են օտար լեզուների (գերմաներեն, անգլերեն, ֆրանսերեն) երկամյա կուրսեր: 1948թ. Երևանի ռուսական մանակավարժական ինստիտուտի օտար լեզուների ֆակուլտետի հիմքի վրա ստեղծվել է Ռուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտը: 1995թ. ինստիտուտը վերանվանվել է Հայաստանի Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների պետական համալսարանի, իսկ 5 տարի անց՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալասարանի: 2020թ. համալսարանը կրկին վերանվանվել է՝ դառնալով Վ.Բրյուսովի անվան պետական համալսարան:

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի գործունեությունն ուղղված է ստեղծագործ միտք, մրցունակություն, կրթական նորարարություններ, անձի շարունակական զարգացում ապահովող կրթական և գիտահետազոտական միջավայրի ստեղծմանն ու ամրապնդմանը:

Կրթություն. ԲՊՀ-ում ուսումնական գործընթացն իրականացվում է 29 բակալավրական, 31 մագիստրոսական և 8 ասպիրանտական ՄԿԾ-ներով՝ առկա և հեռակա ուսուցման ձևերով: 2022-2023 ուստարում ՄՈՒՀ-ում կրթություն է ստացել 4388 ուսանող: ԲՊՀ-ում իրականացվող բոլոր ՄԿԾ-ներում ուսուցանվում է երկու օտար լեզու, որը ՄՈՒՀ-ն իր համար դիտարկում է առավելություն և առանձնահատկություն:

Հետազոտություն. Գիտահետազոտական գործունեությունը դիտարկվում է համալսարանի առաջնահերթություններից: ԲՊՀ-ն գիտահետազոտական ոլորտում սահմանել է 8 հիմնական ուղղություններ՝ լեզվաբանություն, հայրենագիտություն, բանասիրություն/գրականագիտություն, մանկավարժություն և օտար լեզուների դասավանդման մեթոդիկա, կառավարում, քաղաքագիտություն, տուրիզմ: Հիմնական ուղղությունների համար առանձնացված են 53 հարակից միջգիտակարգային ուղղություններ:

Միջազգայնացում. Արտաքին կապերի ընդլայնումը և միջազգայնացումը ԲՊՀ-ի ռազմավարական առաջնահերթություններից է՝ ուղղված առաջատար բուհերի և միջազգային կառույցների հետ արդյունավետ համագործակցության միջոցով բուհի կրթական և գիտահետազոտական որակի բարելավմանը, միջմշակութային երկխոսության նպաստավոր միջավայրի ստեղծմանը, բուհի ուսանողական, վարչական և ՊԴ համակազմի շարժունության նոր հնարավորությունների ստեղծմանը, ինչպես նաև բուհի մրցունակության բարձրացմանը ազգային և միջազգային մակարդակներում:

Որակի ապահովում. ԲՊՀ-ում որակի ապահովման ստորաբաժանումը գործում է 2009 թվականից: ԲՊՀ-ի ՈՆԱ գործընթացները համակարգվում և կառավարվում են Որակի ապահովման կենտրոնի կողմից, որն իր գործունեության արդյունավետությունն ապահովելու նպատակով սերտորեն համագործակցում է ԲՊՀ բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների հետ: 2020 թ. ՈԱԿ-ն անվանափոխվել է՝ Որակի ապահովման և բարեփոխումների կենտրոնից դառնալով Որակի

ապահովման կենտրոն: Կենտրոնի անվանափոխությունը պայմանավորված է եղել բուհում ՈԱ աշխատանքների ապակենտրոնացման և ըստ ստորաբաժանումների գործունեության առանձնահատկությունների ու գործառութային շրջանակի:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր. ՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր:

1.1 ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

ԲՊՀ տեսլականը, առաքելությունը և ռազմավարական գերակա ուղղություններն արտացոլված են «ԲՊՀ-ի՝ 2019-2023 թթ. զարգացման ռազմավարական ծրագիր և գործողությունների պլան» (այսուհետ՝ ՌԾ) փաստաթղթում: Պետք է նշել, որ համալսարանի առաքելությունը որոշակի փոփոխություններ է կրել 2019թ. ծրագրում. նախ հստակեցվել են իրականացվող կրթական ծրագրերի ոլորտները և շեշտադրվել է միջազգայնորեն մրցունակ կադրերի պատրաստումը: ԲՊՀ-ի ներկայիս առաքելությունն է՝ «ապահովել միջազգայնորեն մրցունակ ու որակյալ մասնագետների պատրաստումը լեզվաբանական, հասարակագիտական, մանկավարժական, սերվիսի, ինչպես նաև հումանիտար ու սոցիալական գիտությունների այլ ոլորտներում[7]՝ նպաստելով անձի շարունակական զարգացմանը, գիտելիքների ստեղծմանն ու փոխանցմանը, մարդկային ներուժի ձևավորմանը և երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը»: Շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ նեկայիս առաքելությունը նույնպես ամբողջությամբ չի արտահայտում համալսարանի առանձնահատկությունները և առավելությունները, օրինակ, շեշտադրված չէ կրթական ծրագրերում մի քանի լեզուների ուսուցումը, ինչպես նաև միջոլորտային ծրագրերի իրականացումը: Միևնույն ժամանակ, առաքելության մեջ հղում արված չէ ՀՀ որակավորումների ազգային շրջանակի (այսուհետ՝ ՈԱՇ) մակարդակներին կամ բարձրագույն կրթություն տրամադրելուն:

2020թ. համալսարանը փոխել է իր անվանումը՝ Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանից դառնալով Վ.Բրյուսովի անվան պետական համալսարան: Անվանափոխությունից հետո՝ 2021թ, վերանայվել է նաև ՄՈՒՀ-ի ՌԾ-ն, սակայն պետք է փաստել, որ տեսլականի և առաքելության ձևակերպումները նույնն են մնացել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ համալսարանի ղեկավար անձնակազմը ակադեմիական քաղաքի կառուցմամբ պայմանավորված ունի նոր տեսլական, այն է՝ մանկավարժական կազմին և կրթական ծրագրերը պատրաստել ապագայի փոփոխություններին՝ շեշտադրելով համալսարանի օտար լեզվով դասավանդելու առաձնահատկությունը: Նոր տեսլականին համահունչ ԲՊՀ-ն նախաձեռնել է 2023-2024 ուստարում ներդնել երկլեզվակիր ուսուցիչների պատրաստման կրթական ծրագիրը:

2019-2023 թթ. -ի ՌԾ-ն ունի 12 բաժին՝ գործունեության ոլորտներ, որոնցից յուրաքանչյուրի համար ամրագրված են նպատակներ, սպասվող վերջնարդյունքներ, ինչպես նաև նպատակներին հասնելու խնդիրներ, գործողություններ, պատասխանատուները և կատարման ժամկետներ: Պետք է նշել, որ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար ֆինանսական

[7] Նախադասությունը խմբագրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկումների արդյունքում:

ռեսուրսները պլանավորված չեն, իսկ գործողությունների մեծ մասի համար կատարման ժամկետներ են սահմանված ողջ ՌԾ-ի տևողությունը՝ 2019-2023 թվականները:

Ինքնավերլուծության մեջ համալսարանի նպատակների և խնդիրների՝ ՈԱՇ-ին համապատասխանության վերլուծությունը բացակայում է, սակայն փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՌԾ-ով սահմանված հիմնական նպատակներն ու խնդիրները, գործունեության ոլորտների կանխատեսվող վերջնարդյունքները միտված են ՄՈՒՀ-ի կանոնադրական նպատակների և առաքելության իրագործմանը: ԲՊՀ-ի կողմից իրականացվում են ՈԱՇ-ի 6-րդ, 7-րդ և 8-րդ մակարդակների կրթական ծրագրեր և շնորհվում են համապատասխան որակավորումներ: Շնորհվող որակավորումների համապատասխանությունը ՈԱՇ-ի տվյալ մակարդակի բնութագրիչներին համալսարանը հիմնավորում է կրթական ծրագրերի ձևաչափերում վերջնարդյունքների քարտեզագրումով:

1.2 ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

ԲՊՀ-ն դեռևս մշակման փուլում գտնվող իր «Որակի ապահովման ուսումնամեթոդական ձեռնարկում» է հստակեցնում ներքին և արտաքին շահակիցների ցանկը. ներքին շահակիցներ են ուսանողները և բուհի աշխատակազմը, իսկ արտաքին շահակիցներ են գործատուները, շրջանավարտները, շրջանավարտների ծնողները, դիմորդները, հասարակությունը, պետությունը և այլն:

ԲՊՀ 2019-2023թթ. ՌԾ-ի առաջնային և լրամշակված տարբերակները հասանելի են շահակիցներին համալսարանի պաշտոնական կայքէջի միջոցով: «2019-2023թթ. ԲՊՀ զարգացման ռազմավարական ծրագիրը և գործողությունների պլանը» 2018թ. մշակվել է ռեկտորի հրամանով ստեղծված աշխատանքային խմբի կողմից: 22 հոգուց բաղկացած աշխատանքային խմբում հիմնականում ներառված են եղել վարչական աշխատակիցներ (ներգրավված են եղել ընդամենը 3 ամբիոնի վարիչ և մեկ ուսանող): Պետք է նշել, որ դասախոսները կամ արտաքին շահակիցները ներգրավված չեն եղել փաստաթղթի մշակման աշխատանքներում: Ընդ որում, ինքնավերլուծությունում որպես հաստատության թույլ կողմ ՄՈՒՀ-ը նշում է ՌԾ-ի մշակման գործընթացում արտաքին շահակիցների ընդգրկվածության ոչ մեծ հետաքրքրվածությունը:

Աշխատանքային խմբի կողմից մշակված ՌԾ-ի նախնական տարբերակը, առանց որևէ դիտողության, հավանության է արժանացել ԲՊՀ շրջանավարտների միավորման կողմից: ԲՊՀ-ն նշում է, որ ՌԾ-ի նախնական տարբերակը քննարկվել է համալսարանի բոլոր ստորաբաժանումներում, վերանայվել ներկայացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա: Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ փաստաթուղթը դիտարկվել է սակավ շահակիցների կողմից, ՊԴ կազմի և ուսանողության հետ լայն քննարկումներ որպես այդպիսին տեղի չեն ունեցել: ԲՊՀ Գիտական խորհրդում հավանության արժանանալուց հետո՝ ՌԾ-ն հաստատվել է Հոգաբարձուների խորհրդի կողմից: Ըստ ԲՊՀ-ի՝ համալսարանի «առանցքային շահակիցները» ներգրավված են նաև որոշումներ կայացնող մարմիններում՝ Գիտական և Հոգաբարձուների խորհուրդներում, համալսարանը համարում է, որ այս կերպ ապահովվում է նրանց կարիքների արտացոլումը ռազմավարական նպատակներում և խնդիրներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի շահակիցների կարիքները հիմնականում ներկայացված են ՌԾ-ում կապված կրթական ծրագրերի բարելավման, գործնական կարողությունների զարգացման, օտար լեզվի իմացության և այլնի տեսանկյունից:

Ըստ ԲՊՀ ինքնավերլուծությունում ներկայացված հարցումների արդյունքների՝ ՊԴ կազմի շուրջ 25%-ը լիովին տեղյակ է եղել ՌԾ-ի բովանդակությանը, 61%-ը՝ հիմնականում կամ որոշ չափով է տեղյակ եղել, իսկ 14%-ը ծանոթ չի եղել ծրագրի բովանդակությանը: Պետք է նշել, որ 2021-2022թթ. Որակի ապահովման և բարեփոխումների բաժնի կողմից կազմակերպվել են դասընթացներ ՊԴ կազմի համար, որոնց շրջանակներում ներկայացվել է նաև համալսարանի ՌԾ-ն:

1.3 ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

Այս չափորոշիչի պահանջի վերաբերյալ նախորդ հավատարմագրման փորձագիտական խումբը համալսարանին խորհուրդ էր տվել՝ «սահմանել ռազմավարական նպատակների իրականացման արդյունքների գնահատման քանակական ցուցիչներ և իրականացնել միջնաժամկետ գնահատումներ՝ վերլուծելով գործունեության արդյունավետությունն՝ ըստ ցուցիչների»: Առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման կանոնակարգված քաղաքականություն և ընթացակարգեր համալսարանում որպես այդպիսին ներդրված չեն: Ռազմավարական ծրագրի խնդիրների և վերջնարդյունքների ձեռքբերումների ներկայացման մեխանիզմ ծառայում են ռեկտորի տարեկան հաշվետվությունները և ամբիոններում/ԳՈՒԿ-երում իրականացվող ինքնավերլուծությունները[8]: Անհրաժեշտ է նշել, որ վերջին երկու տարիներին հաշվետվության ձևաչափը ենթարկվել է փոփոխության՝ համապատասխանեցվելով ՌԾ նպատակներին և խնդիրներին:

Ըստ Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի (ԵՊԼՀ) ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով իրականացված փորձաքննության 2019թ. փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագրի՝ 2021թ. պետք է հաստատված լիներ գործունեության արդյունավետության ցուցանիշները (ԳԱՑ-երը), իսկ 2022թ. այն պետք է կիրառվեր ռեկտորի տարեկան հաշվետվության կազմման ժամանակ: Սակայն պետք է նշել՝ 2023թ. մարտին ռեկտորի պաշտոնակատարի հրամանով վերանայվել է 2022թ. հունիսին ստեղծված ԳԱՑ-եր մշակող աշխատանքնային խմբի կազմը: Փորձագիտական խմբի հետ հանդիպումների ընթացքում նշվեց, որ ԳԱՑ-երի համախումբը դեռևս հաստատված չէ, բայց մշակման և փորձարկման փուլում է:

2023թ. համալսարանն իրականացրել է ԲՊՀ ռազմավարության իրականացման միջնաժամկետ գնահատում՝ ըստ գործունեության արդյունավետության գնահատման հիմնական ցուցանիշների, որտեղ փորձ է արվել իրականացնել ձեռքբերումների գնահատում գործունեության արդյունավետության հիմնական ցուցանիշների /ԳԱՀՑ/ միջոցով: Փաստաթղթում ներկայացված են ՌԾ խնդիրները, դրանց իրագործման համար անհրաժեշտ ռեսուրսները, իրականացվող գործողությունների վերջնարդյունքները, ԳԱՀՑ-երը, հաշվարկի մեթոդը և ԳԱՀՑ-ով հաշվարկված արդյունքը: Պետք է նշել, որ ԳԱՀՑ-երը ԲՊՀ-ի համար դիտարկվել են ոչ թե այն ցուցանիշները, որոնց համալսարանը ձգտել է, այլ այն արդյունքները, որը ԲՊՀ-ն տվյալ պահին արձանագրել կամ ունեցել է, օրինակ՝ ՌԾ Կրթական գործունեություն բաժնի 1-ին ռազմավարական նպատակի 1.1.4 գործողության համար, այն է՝ մշակել և ներդնել նոր կրթական ծրագրեր բակալավրատում և մագիստրատուրայում՝ ըստ ոլորտների, իսկ որպես ԳԱՀՑ-ով հաշվարկված արդյունք ներկայացված է վերջին 5 տարում մշակված և ներդրված նոր ՄԿԾ-ների տոկոսը (22% բակալավրիատ, 12%

[8] Նախադասությունը խմբագրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկումների արդյունքում:

մագիստրատուրա)։ Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ հասկանալի չէ ԳԱՀՑ-ի հաշվարկի մեթոդը։

2021թ. հունվար-փետրվար ամիսներին 2019-2023 թթ. ՌԾ-ի և գործողությունների պլանը ենթարկվել է միջնաժամկետ գնահատման, որի արդյունքների հիման վրա համալսարանի ՌԾ-ն վերանայվել է։ Գնահատման փաստաթղթում հստակեցված են ռազմավարական խնդիրների իրականացման գործողությունների կարգավիճակը /կատարված, չկատարված, ընթացքի մեջ/, իսկ առաջարկություններ սյունակում՝ համապատասխան գործողությունը նոր ծրագրում պահել-չպահելու կամ կրկնվող լինելու փաստը։

Դատողություններ: Դրական է, որ ՄՈՒՀ-ը փորձել է հստակեցնել իր առաքելությունը իրականացվող կրթական ծրագրերի ոլորտներին համահունչ և շեշտադրել միջազգայնորեն մրցունակ կադրերի պատրաստումը, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ կարևոր է նաև համալսարանի առավելությունների՝ օտար լեզուների ուսուցման առանձնահատկության, միջոլորտային կրթական ծրագրերի առկայության և բարձրագույն կրթություն տրամադրելու իրողության շեշտադրումը։ Նշվածը կնպաստի ԲՊՀ-ի վերաբերյալ շահակիցների ունեցած պատկերացումների և ընկալումների ամբողջական արտահայտմանը։

2020թ. համալսարանը վերանվանվել է Բրյուսովի պետական համալսարան, սակայն շահակիցների պատկերացումները մնացել են նույնը՝ շարունակելով ընկալել ՄՈՒՀ-ին որպես լեզվահասարակագիտական համալսարան, այս ամենը կարող է վտանգել ԲՊՀ-ի դիմագիծը և կրթական համակարգում ունեցած դիրքը։

Պետական նոր քաղաքականությամբ և ակադեմիական քաղաքի կառուցմամբ պայմանավորված՝ փորձագիտական խումբը կարևորում է համալսարանի եզակի փորձառության ընդգծումը, նոր համակարգում ճիշտ դիրքավորում և դերակատարում ունենալու կարևորության ընդգծումը. օրինակ՝ դասախոսական և ուսանողական համակազմերի օտար լեզուների իմացությունը ինչպես է նպաստելու նոր համակարգում գտնվող այլ գործընկերների և շահակիցների օտար լեզվի իմացության զարգացման, միջազգայնացման ապահովման և այլնի վրա։ Փորձագիտական խումբը գտնում է, որ ճիշտ դիրքավորում ունենալու համար անհրաժեշտ է հավաքագրել համակարգված տվյալներ շահակիցների՝ ՄՈՒՀ-ի ուժեղ կողմերի վերաբերյալ ունեցած պատկերացումները վեր հանելու համար։

Դրական է, որ ԲՊՀ-ն ունի ռազմավարական ծրագիր, որտեղ սահմանված են համալսարանի առաջնահերթությունները և դրանց հասնելու ուղիները, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ գործողությունների կատարման ժամկետների անհստակությունը և ֆինանսական ռեսուրսների ոչ հստակ պլանավորումը կարող է հանգեցնել ֆինանսական միջոցների ոչ արդյունավետ բաշխմանը և ՌԾ-ի ոչ հետևողական իրականացմանը։

Ինքնավերլուծության և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից, փորձագիտական այցից դուրս բերված տեղեկատվությունից փորձագիտական խումբը եկել է այն եզրակացության, որ ՌԾ-ի, ինչպես նաև առաքելության մշակման և վերանայման գործընթացներում թույլ է արտահատված եղել ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը և նրանց հետ հաղորդակցությունը, որը կարող է հանգեցնել ՌԾ-ի ոչ ամբողջական իրականացմանը։ Այս գործընթացում կարևոր է ոչ միայն շահակիցների կարիքների վերհանումը, այլև ստացված տեղեկավության հետագա կառավարումը։

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄՈՒՀ-ը սկսել է կիրառել ռազմավարական նպատակների իրականացման արդյունքների գնահատման քանակական ցուցիչներ և իրականացնել միջնաժամկետ գնահատումներ, այնուամենայնիվ անհասկանալի է, թե ՌԾ-ի

ավարտի տարի հանդիսացող 2023թ. մշակված ԲՊՀ ռազմավարության իրականացման գնահատման փաստաթուղթն ինչու է կոչվում «միջնաժամկետ գնահատման»՝ հաշվի առնելով, որ ՌԾ ժամկետները մոտենում են ավարտին: Բացի այդ, ներկայացված թվային ցուցանիշները ոչ թե ԳԱՀՑ-եր են, այլ ներկայիս իրավիճակը գնահատող թվային տվյալներ, որոնք հետագայում կարող են հիմք դառնալ նոր ՌԾ-ի իրական ԳԱՑ-երը մշակելու համար:

Դրական է, որ ԲՊՀ-ն կիրառում է տարբեր մեխանիզմներ ՌԾ-ով սահմանված նպատակների իրականացումը գնահատելու համար, այնուամենայնիվ ՊԻԳԲ շրջափուլի լիարժեք գործարկման համար անհրաժեշտ են ներդնել հավելյալ ջանքեր, նամանավանդ՝ իրականացված գնահատումների արդյունքների հիման վրա բարելավումների նոր պլանավորում իրականացնելու ուղղությամբ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԲՊՀ-ն ունի ՌԾ-ում ձևակերպված տեսլական և առաքելություն, իրականացվող գործունեությունը, ռազմավարական նպատակներն ու խնդիրները, կանխատեսվող վերջնարդյունքները հիմնականում համահունչ են ՄՈՒՀ-ի կանոնադրական նպատակներին և առաքելությանը, իրականացվում է ՈԱՇ-ի 6-ից 8-րդ մակարդակներին համապատասխան կրթական ծրագրեր և շնորհվում համապատասխան որակավորումներ, ռազմավարական նպատակների իրականացման արդյունքների գնահատման նպատակով կիրառվում են քանակական թվային տվյալներ, իրականացվել է ՌԾ միջնաժամկետ գնահատում, ինչին որոշակիորեն մասնակից են եղել նաև ներքին և արտաքին շահակիցները, փորձագիտական խումբը գտնում է, որ ԲՊՀ-ն բավարարում է 1-ին չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԲՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է, սահմանված էթիկայի կանոններին համապատասխան, որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ԲՊՀ-ի կառավարումը պետական, ինստիտուցիոնալ և ներբուհական մակարդակներում իրականացվում է ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի, ԲՊՀ և առանձին ստորաբաժանումների կանոնադրությունների, տարատեսակ կարգերի և նորմատիվային փաստաթղթերի հիման վրա:

«2019-2023 թթ. ԲՊՀ զարգացման ռազմավարական ծրագիրը և գործողությունների պլան» փաստաթղթի Կառավարման գործընթացներ և մարդկային ռեսուրսների կառավարում բաժնում ՄՈՒՀ-ը սահմանել է հետևյալ ռազմավարական նպատակները՝

- բարելավել ԲՊՀ կառուցվածքն ու վարչակառավարչական գործառույթները,

- զարգացնել և արդիականացնել ԲՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը:

Այդ նպատակների իրականացման համար նախատեսված 5 ռազմավարական խնդիրների լուծման արդյունքում ակնկալվում է՝

- ԲՊՀ կազմակերպական կառուցվածքի, կառավարման համակարգի և ստորաբաժանումների աշխատանքների արդյունավետության բարելավված ցուցանիշներ,
- ԲՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի արդյունավետ գործարկում:

Ըստ ԲՊՀ կանոնադրության՝ համալսարանի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը Հոգաբարձուների խորհուրդն է: Ներկայումս համալսարանը ճգնաժամային կառավարման իրավիճակում է, և Հոգաբարձուների խորհրդի գործառույթները 2023թ. մարտ ամսից իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարի հրամանով ձևավորված «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի ժամանակավոր խորհուրդը, որը բաղկացած է 3 անդամներից՝ արտաքին շահակիցներից: Այդ խորհրդի որոշումներով է նշանակվել ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարը և իրականացվում է կառավարում՝ փոփոխությունների ներկա ժամանակահատվածում:

Փորձագիտական այցի ընթացքում ԲՊՀ-ն եղել է կառուցվածքային փոփոխությունների փուլում: 2023թ. հունիսի սկզբի Հոգաբարձուների խորհրդի վերջին նիստում հաստատվել է համալսարանի նոր կառուցվածքը: Կառուցվածքային փոփոխությունների առաջարկները, որոնք ընդունվել են ԲՊՀ գիտական խորհրդի մեծամասնության կողմից, համալսարանը հիմնավորում է ԲՊՀ տեսլականի փոփոխման և այդ տեսլականին հասնելու, ՄՈՒՀ-ում աշխատանքների կազմակերպման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ նախորդ կառուցվածքի արդյունավետության համակարգային գնահատում բուհի կողմից չի իրականացվել, չնայած նրան, որ կառուցվածքային փոփոխությունները որոշակիորեն քննարկվել են ներքին շահակիցների՝ ամբիոնների վարիչների, ստորաբաժանումների ղեկավարների հետ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ոչ բոլոր ներքին շահակիցներն են տեղեկացված այդ փոփոխություններից:

ԲՊՀ-ն նոր կառուցվածքում ունի 1 ինստիտուտ, 4 ֆակուլտետ, որոնց կազմում ընդգրկված է 15 ամբիոն, ամբիոններին կից գործում են 1 գիտառուսումնական (ԳՈՒԿ) և 4 ուսումնական կենտրոններ: Ֆակուլտետների քանակը նույնն են մնացել, բայց տեղի է ունեցել նրանց անվանափոխություն, իրականացվող մասնագիտությունների, հետևաբար նաև մասնագիտական ամբիոնների փոփոխություններ և վերաբաշխումներ, ինչը բուհի ղեկավարությունը հիմնավորում է ուսանողների թվաքանակի, դասախոսական կազմի և ռեսուրսների հավասարեցման ձգտումով: Արդյունքում, 2 ամբիոն միավորվել են, մեկը՝ կիսվել, 10 ամբիոն անվանափոխվել են, միավորվել են նաև 2 ԳՈՒԿ: Վարչական կառույցները հիմնականում նույնն են մնացել, բացի 4 վարչություններից, որոնք վերափոխվել են համապատասխան բաժինների:

ԲՊՀ կառուցվածքի և կառավարման համակարգի վերանայում տեղի է ունեցել նաև 2021թ. հունվարին, որը ՄՈՒՀ-ը կապել է «առաքելության առավել արդյունավետ իրականացման և գործունեության հետագա զարգացման» հետ: Պետք է նշել, որ փոփոխությունների հիմքում ընկած չեն եղել խորը վերլուծությունները:

ՀՀ օրենսդրության շրջանակներում ԲՊՀ-ն օժտված է անհրաժեշտ ինքնավարությամբ, իսկ ինքնակառավարումը իրականացվում է միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ, գիտական խորհրդի (ԳԽ) և ռեկտորի գործառույթների իրականացմամբ: ԳԽ-ն ԲՊՀ-

ի ուսումնամեթոդական, գիտահետազոտական և գիտատեխնիկական գործունեությունը պլանավորող, համակարգող և կարգավորող կոլեգիալ մարմինն է: ԳԽ-ին կից գործում է Կանոնակարգերի մշակման և Էթիկայի մշտական հանձնաժողովները, որոնց գործունեությունը կարգավորված է:

ԲՊՀ-ի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է ռեկտորը, որի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ և ԲՊՀ կանոնադրությամբ: Ռեկտորին կից գործում է ռեկտորատը, որպես խորհրդակցական մարմին:

Ռեկտորից բացի, համալսարանի գործունեությունը կառավարվում է երկու՝ ուսումնագիտական աշխատանքների և աշխատակազմի կառավարման ու տնտեսական հարցերով պրոռեկտորների կողմից, որոնք պատասխանատու են համապատասխան ոլորտների աշխատանքների կազմակերպման և համակարգման, իրենց ենթակա կառուցվածքային ստորաբաժանումների արդյունավետ գործունեության ապահովման համար: Պրոռեկտորների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ համալսարանի նախկին կառուցվածքը և կառավարման համակարգը ընդունելի է եղել նրանց համար, քանի որ վերջին 3 տարվա ընթացքում խնդիրներ չեն առաջացել: Կառավարման համակարգի արդյունավետությունը ՄՈՒՀ-ը հիմնավորում է ուսանողական հարցումների արդյունքներով և ԲՊՀ ինքնավերլուծությամբ: Ըստ 2020-2021թթ. «Որակի ապահովման կրթամասի վերապատրաստումների արդյունավետության գնահատման արդյունքների վերլուծություն» փաստաթղթի SWOT վերլուծության՝ ՄՈՒՀ-ի թույլ կողմը դեկանատների/ամբիոնների միջև համագործակցությունն է: Բուհում գործում է ինքնակառավարվող 2 կառույց՝ **Ուսանողական խորհուրդը,** որի գործունեությունը նպատակաուղղված է պաշտպանելու ուսանողության շահերն ու իրավունքները, և **Արհեստակցական միությունը**, որը հանդես է գալիս որպես աշխատողների ներկայացուցչական մարմին գործատուի հետ հարաբերություններում՝ որպես նրանց իրավունքներն ու շահերը պաշտպանող կողմ:

ԲՊՀ-ն ունի անհրաժեշտ մարդկային ռեսուրսներ, նրանց աշխատանքի ընդունման, տեղափոխման, խրախուսման ու տույժի կիրառման ընթացակարգեր, սակայն փոփոխությունների ներկա ժամանակահատվածում դրանք չեն գործում: Որոշ ստորաբաժանումների ղեկավարներ ազատման դիմումներ են ներկայացրել, որոշ հաստիքներ զբաղեցնում են ռեկտորի պաշտոնակատարի հրամանով նշանակված պաշտոնակատարները, օրինակ՝ որոշ դեկաններ, ամբիոնների վարիչներ և այլն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նոր կառուցվածքային փոփոխությունները հանգեցնելու են նաև հաստիքների կրճատման: Որակի ապահովման կենտրոնի (ՈԱԿ) իրականացրած հարցումների համաձայն՝ դասախոսական կազմը ԲՊՀ-ի համար վտանգ է դիտարկում «չպատճառաբանված և չհիմնավորված օպտիմալացումները»:

2021թ. հստատված կառուցվածքային փոփոխություններին համապատասխան ստորաբաժանումների համար մշակվել են կանոնադրություններ և աշխատակարգեր, ինչպես նաև հաստատվել են աշխատակիցների պաշտոնի անձնագրեր: 2020 թ. ԲՊՀ-ն հաստատել է նաև Բարեվարքության կանոնակարգ, որը սահմանում է ԲՊՀ աշխատակիցների և սովորողների բարեվարքության կանոնները և դրանց պահպանման պարտավորությունները, կանոնների խախտման դեպքերի քննարկման ընթացակարգը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԳԽ-ին կից գործում է էթիկայի մշտական հանձնաժողովը, որի շրջանակներում քննարկվում և որոշումներ են կայացվում դասախոսների կողմից բարեվարքության կանոնների խախտման դեպքերի վրաբերյալ, ինչպիսիք են օրինակ դասախոս-ուսանող տարաձայնությունները և այլն:

ՄՈՒՀ-ում որպես այդպիսին առկա չէ ֆինանսների տնօրինման հստակ քաղաքականություն։ Ֆինանսները բաշխվում են ըստ առաջնահերթությունների։ Փորձագիտական այցերից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի համար առաջնահերթություն է աշխատավարձը, պետական տուրքերի և կրթաթոշակի վճարումները, ծախսերը բաշխելիս հաշվի են առնում նաև ստորաբաժանումներից եկող կարիքները։ Վերջին 3 տարվա համար ԲՊՀ տարեկան բյուջեների կատարողականների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ տարբեր աղբյուրներից ստացվող ֆինանսական մուտքերը աճել են 27.5%-ով, որից որոշակի հատվածը ներդրվել է որպես ավանդ։ Միևնույն ժամանակ պետք է նշել, որ պրոֆեսորադասախոսական կազմը համալսարանի թույլ կողմ է համարում միջազգային և ներպետական համակարգի համեմատությամբ՝ աշխատանքի և գիտական գործունեության դիմաց վարձատրության անհամապատասխանությունը։

2.2 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնել իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Ըստ ԲՊՀ գործող կանոնադրության և խորհուրդների կանոնակարգերի՝ նախատեսված է դասախոսական և ուսանողական համակազմերի ներկայացուցիչների ներգրավվածությունը ՄՈՒՀ-ի Հոգաբարձուների, Գիտական և ֆակուլտետային խորհուրդների կազմերում։ Դրանով ԲՊՀ-ն հնարավորություն է ստեղծում ներքին շահակիցների համար մասնակցելու կառավարման գործընթացներին։

Հոգաբարձուների խորհրդի կազմի 25%-ը ՊԴ կազմի ներկայացուցիչներ են, որոնց թեկնածությունները առաջադրում են բուհի կառուցվածքային ստորաբաժանումները, իսկ ընտրությունն իրականացվում է ԲՊՀ գիտական խորհրդում։ Ուսանողների ներկայացուցիչներին (նույնպես 25%) ընտրում է բուհի ուսանողական խորհուրդի նախագահությունը՝ ֆակուլտետների ուսանողական խորհուրդների առաջադրած թեկնածուներից։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ճգնաժամային կառավարում իրականացնող ժամանակավոր խորհրդում ներքին շահակիցները որևէ մասնակցություն չունեն, ավելին, ՄՈՒՀ-ի գործող ղեկավարությունը տեղեկացված չէ նոր Հոգաբարձուների խորհրդի ձևավորման ժամկետների մասին։

ԲՊՀ գիտական և ֆակուլտետային խորհուրդների անդամների թվի 25%-ը նույպես ուսանողներն են, որոնց առաջադրում են համապատասխան ֆակուլտետների ՈՒԽ-ները, իսկ ընտրությունն իրականացնում է, համապատասխանաբար, ՈՒԽ նախագահությունը կամ ֆակուլտետի ՈՒԽ-ն։ Ուսանողների շրջանում 2022թ. ՄՈՒՀ-ի կողմից անցկացված հարցման արդյունքների համաձայն՝ ուսանողների մեծ մասի մոտ ցածր է կառավարման մարմինների գործունեության վերաբերյալ տեղեկացվածությունը և ՈՒԽ կառույցներում ներգրավվելու ակտիվությունը։ Որպես պատճառաբանություն՝ ուսանողները հաճախ նշել են ժամանակի սղությունը և սեփական ուսումնառության վրա կենտրոնացման անհրաժեշտությունը, ինչպես նաև ՈՒԽ-ում ընդգրկվելու ոչ նպատակահարմարությունը։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն իրենց վերաբերյալ որոշումների մասին ամենից հաճախ տեղեկանում են ֆակուլտետների դեկանատներից։

Գործող կանոնակարգերի համաձայն՝ ԲՊՀ գիտական և ֆակուլտետային խորհուրդներում ընդգրկված դասախոսների թվաքանակն ավելի մեծ է, քան՝ ուսանողներինը, և, եթե հաշվի առնվեն ամբիոնների վարիչներին և ԳՈՒԿ-երի ղեկավարներին հատկացված տեղերը, նրանք կազմում են մեծամասնություն։ Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսներն իրենց վերաբերյալ կայացված որոշումների մասին տեղեկանում են ամբիոններից կամ համալսարանի միջանցքներում փակցված հրամաններից։ Կառավարման մարմինների որոշումները և

հրամանները ներքին և արտաքին շահակիցներին հասանելի դարձնելու նպատակով համալսարանի կայքի «Փաստաթղթեր» բաժնում ներկայացված են համապատասխան հրամաններ, Հոգաբարձուների խորհրդի,Գիտական խորհրդի որոշումներ և այլն: Կայքի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ռեկտորի վերջին հրապարակված հրամանը թվագրված է 2021թ. օգոստոս ամսով, Հոգաբարձուների խորհրդի որոշումը՝ 2022թ. հոկտեմբեր ամսով, իսկ Գիտական խորհրդի որոշումը՝ 2022թ. սեպտեմբեր ամսով:

Ինքնավերլուծության մեջ նշվում է, որ ԲՊՀ ղեկավարությունը պարբերաբար հանդիպումներ է ունենում ՊԴ, վարչական կազմի ներկայացուցիչների և ուսանողների հետ, լսում է բարձրաձայնված խնդիրները, քննարկում է կարծիքները և առաջարկությունները, որոնք էլ հաշվի են առնվում որոշումների կայացման ժամանակ: Փորձագիտական այցից և շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ նշված հանդիպումների ընթացքում հիմնականում խնդիրներ չեն բարձրաձայնվում, քանի որ շահակիցները չեն վստահում կայացվող որոշումների օբյեկտիվությանը:

2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

ԲՊՀ-ում **Երկարաժամկետ պլանավորումն** իրականացվում է հնգամյա ՌԾ-ի ու գործողությունների պլանի միջոցով, որով սահմանվում են ռազմավարական նպատակներն ու խնդիրները, դրանցից բխող գործողությունները և պատասխանատուները: Առկա է նաև գործողությունների համար «կատարման ժամկետներ» սյունակը, որտեղ մեծամասամբ գործողությունների իրականացումը ձգվում է ծրագրի ողջ տևողությամբ՝ 2019-23 թվականներ, որոշ գործողություններինը՝ 2020-23թթ.:

Միջնաժամկետ պլանավորումը ՄՈՒՀ-ում փաստացի բացակայում է. որպես **միջնաժամկետ պլանավորման** օրինակ վերջին հինգ տարիների համար ԲՊՀ-ն նշում է ՈԱԱԿ-ին ներկայացված նախորդ հավատարմագրման փորձագիտական խմբի խորհրդատվությունների հիման վրա մշակված թերությունների վերացման ծրագիրը/բարելավման պլանը: Փորձագիտական խումբը նշում է, որ վերը նշված պլանը չի կարող դիտարկվել միջնաժամկետ, քանի որ հնգամյա է և նախատեսված է 2019-23թթ. համար:

ԲՊՀ-ում մշակվում են ամբողջ ՄՈՒՀ-ի համար նախատեսված միասնական տարեկան գործունեության ծրագրեր, որոնցում տեղ են գտնում ինչպես բուհական համակարգին բնորոշ շարունակական գործընթացներ, այնպես էլ ՌԾ-ով նախատեսված գործողություններ: Յուրաքանչյուր վարչական ստորաբաժանում իր մասով մասնակցում է տարեկան ծրագրի կազմմանը և առաջնորդվում է դրանով՝ որպես տարեկան աշխատանքային կարճաժամկետ պլան: ՄՈՒՀ-ում կարճաժամկետ պլաններ են դիտարկվում նաև բյուջեն և հաստիքացուցակը, որոնք հաստատվում են Հոգաբարձուների խորհրդի կողմից: Բյուջեի կազմումը դիտարկվում է որպես տարեկան ֆինանսական, իսկ հաստիքացուցակի կազմումը՝ մարդկային ռեսուրսների պլանավորում: Ուսումնական գործընթացի պլանավորման համար կազմվում են տարեկան աշխատանքային պլաններ, որոնց հիման վրա իրականացվում են դասախոսների հաստիքների և ուսումնական բեռնվածության տարեկան պլանավորումը:

ՄՈՒՀ-ում մշտադիտարկման միակ գործող մեխանիզմը ստորաբաժանումների տարեկան հաշվետվություններն են, որոնք ձևավորվում են որպես ռեկտորի տարեկան հաշվետվության առանձին մասեր: Պետք է նշել, որ ստորաբաժանումների հաշվետվություններում եզակի են

դեպքերը, երբ ներկայացվում են բարելավման առաջարկներ: ՄՈՒՀ-ի ղեկավար կազմի հետ հանդիպման ժամանակ նշվեց, որ նախկինում հաշվետվությունները եղել են նկարագրողական, ներկայումս ավելացել են որոշ քանակական տվյալներ: 2019-2022թթ. ռեկտորի հաշվետվությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հիմնական ձևաչափը և ներկայացվող տվյալների խմբերը փոփոխության չեն ենթարկվել, որոշ քանակական աղյուսակային տվյալներ ներկայացվել են նաև գրաֆիկների տեսքով, օրինակ, բակալավրիատ և մագիստրատուրա ընդունված ուսանողների թվաքանակները՝ ըստ անվճար-վճարովի և առկա-հեռակա ուսուցման ձևերի, ԲՊՀ ընդունված ուսանողների թվաքանակը վերջին 4 տարիների համար, մագիստրոսի կրթական ծրագրով ընդունված սփյուռքահայ և օտարերկրացի ուսանողների թիվը և այլն: Բացի Ռազմավարական ծրագրի իրականացման վերաբերյալ ռեկտորի տարեկան հաշվետվությունից, ԲՊՀ-ն իրականացրել է ՌԾ-ի միջանկյալ գնահատում 2021թ., որի հիման վրա այն վերախմբագրվել է. միջանկյալ գնահատման արդյունքները հասանելի չեն բուհի շահակիցներին:

2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Նախորդ հավատարմագրման փորձագիտական խումբը ՄՈՒՀ-ին տրամադրել է խորհրդատվություն՝ պարբերաբար իրականացնել արտաքին և ներքին միջավայրերից ստացվող տեղեկատվության քանակական և որակական տեղեկատվության վերլուծություններ, ինչպես նաև ներդնել տվյալների ստացման մեթոդների արդյունավետության գնահատման մեխանիզմներ: Նշված խորհրդատվությունը տեղ է գտել «ԵՊԼՀ թերությունների վերացման գործողությունների 2019թ. ծրագրում», որտեղ 2020-2022թթ. համար ՄՈՒՀ-ի կողմից պլանավորվել է իրականացնել հետևյալ 2 գործողությունները՝

1. Արտաքին և ներքին միջավայրերի այն գործոնների վերհանում, որոնք ազդում են ԲՊՀ-ի գործունեության վրա և այդ գործոնների վերլուծություն:
2. Տվյալների ստացման աղբյուրների ցուցակագրում:

Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագրի հաշվետվության մեջ առկա չէ տեղեկատվություն այն մասին, թե ՄՈՒՀ-ը ինչպիսի տեղեկավություն է ցուցակագրել և վերլուծել իր վրա ազդող արտաքին և ներքին գործոնների վերաբերյալ:

Ըստ ինքնավերլուծության՝ ԲՊՀ-ն արտաքին գործոներից հաշվի է առել 2020-2021թթ. COVID 19 համավարակը և պատերազմական իրադրության ազդեցությունը: Այդ ընթացքում ՄՈՒՀ-ը վերանայել է ՌԾ-ն, առկա մարտահրավերներին դիմակայելու համար անցել է առցանց կրթության: ԲՊՀ-ն կատարում է նաև ֆինանսական ռիսկերի գնահատում տարեկան ներքին աուդիտի ընթացքում, որի արդյունքները ներառվում են <u>աուդիտորական եզրակացության</u> մեջ: Պետք է նշել, որ մի շարք գործոններ ՄՈՒՀ-ը դեռևս չի ուսումնասիրում, օրինակ՝ առկա համակարգում սովորող ուսանողների կրճատման և հեռակա համակարգում սովորողների ավելացման հիմնական պատճառները և դրան ուղղված համալսարանի քայլերը, օտար լեզուներ ուսումնասիրող խմբերում ուսանողների քանակի ավելացումը և այլն: Ֆինանսական ռիսկերի գնահատումն էլ իրականացվում է ՀՀ ֆինանսների նախարարության պահանջով բոլոր բուհերում, այսինքն ներկայացված վերլուծությունները իրականացվել են արտաքին պահանջներով:

Ամբիոնների և ԳՈՒԿ-երի գործունեության ինքնավերլուծության ձևաչափում առկա է SWOT վերլուծության պահանջ, որտեղ ստորաբաժանումները անդրադառնում են ՄՈՒՀ-ի ուժեղ և թույլ

կողմերին, արտաքին հնարավորություններին և վտանգներին: Միջավայրային գործոնների վերհանում, դարձյալ SWOT վերլուծության միջոցով, իրականացվել է նաև ՊԴ կազմի կողմից Որակի պահովման վերապատրաստումների շրջանակներում, SWOT վերլուծությունները հավաքագրվել և վերլուծության են ենթարկվել ՈԱԿ-ի կողմից, սակայն պետք է արձանագրել, որ արդյունքների կիրառությունը տեսանելի չէ:

Միջավայրային գործոնների գնահատման տեսանկյունից պարբերական բնույթ են կրում ՄԿԾ-ների բարելավման և նոր ՄԿԾ-ների մշակման նպատակով իրականացվող շուկայի վերլուծությունները, բենչմարքինգը, որոնք հիմք են հանդիսանում ՄԿԾ-ների վերանայման համար:

Որոշ տվյալներ դուրս են բերվում նաև ՈԱԿ-ի կողմից կազմակերպված հարցումների միջոցով, պետք է նշել, որ հարցումների գործընթացը կարգավորված չէ, ինչպես նաև հստակեցված չեն հասցեատերերը, իսկ հավաքագրված տվյալների նպատակային օգտագործման շղթան կտրված է. դրանք հիմնականում մնում են ստորաբաժանումներում կամ ՈԱԿ-ում: Այդ առումով ինքնավերլուծության մեջ ՄՈՒՀ-ն ինքն է նշում, որ անհրաժեշտ է գործունեության առանցքային ոլորտների և դրանց զարգացման վրա միջավայրային գործոնների ազդեցության առավել խորքային ուսումնասիրությունների համակարգվածության ապահովում, որով կամրապնդվի թիրախային ոլորտների գնահատման առավել միասնական և ինստիտուցիոնալ մոտեցում կիրառելու մշակույթը:

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

Ըստ ինքնավերլուծության՝ ԲՊՀ-ն գիտակցում է որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի կիրառման կարևորությունը կառավարման գործընթացներում: Ավելին, ՄՈՒՀ-ը պնդում է, որ կառավարման համակարգը գործում է ՊԻԳԲ շրջափուլով: Պետք է նշել, որ կառավարման և վարչարարության որակի ապահովման քաղաքականություն և առանձին մշակված ընթացակարգեր ՄՈՒՀ-ում առկա չեն, որևէ ղեկավար փաստաթղթում ամրագրված չէ ՊԻԳԲ շրջափուլի կիրառման պահանջը: Փորձագիտական խմբին հասանելի միակ փաստաթուղթը դեռևս մշակման փուլում գտնվող ՄՈՒՀ-ի Որակի ապահովման ձեռնակն է, որտեղ այլ եզրույթների հետ զուգահեռ ներկայացված են նաև ՊԻԳԲ շրջափուլի առանձին փուլերի նկարագրությունները:

Նախորդ հավատարմագրան արդյունքում մշակվել են մի շարք փաստաթղթեր, որոնք դեռևս գտնվում են իրականացման փուլում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երբեմն գնահատման գործընթացներ տեղի չեն ունենում, իսկ որոշումները կայացվում են արտաքինից եկող ինչ-որ ազդակներից, որոնք խորը վերլուծության չեն ենթարկվում, դրա ապացույցն է համալսարանի անվանափոխությունը, կառուցվածքային փոփոխությունները, առաքելության վերանայումը և այլն, որոնք մինչ օրս չեն ընկալվում շահակիցների կողմից:

ԲՊՀ-ն գնահատման պարբերաբար իրականացվող մեխանիզմ է դիտարկում հարցումները, որոնք պետք է նպաստեն արդյունքահենք և արդյունավետ որոշումների կայացմանն ու բարելավմանը միտված միջոցառումների պլանավորմանը: Պետք է նշել, որ հարցումների ընթացակարգերը բացակայում են, և դրանք անց են կացվում ոչ պարբերաբար: Ինչպես պարզ դարձավ փորձագիտական այցի հանդիպումներց, ՄՈՒՀ-ն ունի հավաքագրված, բայց չվերլուծված մեծաքանակ տվյալներ (առավել մանրամասն չափանիշ 10): Կանոնակարգված չեն նաև կուտակված տեղեկավությունը բարելավումներին ուղղորդելու մեխանիզմները:

2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

ԲՊՀ-ն կիրառում է իր գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման մի շարք մեխանիզմներ. հաշվետվություններ, հարցումներ, հանդիպումներ, ինքնավերլուծություններ, բենչմարքինգ, շուկայի ուսումնասիրություն, պետք է նշել, որ ներկայացված մեխանիզմներից ոչ մեկի արդյունավետությունը գնահատված չէ:

ՄՈՒՀ-ում առկա է դրական փորձ. ՈԱԿ-ի կողմից մշակված ձևաչափով ամբիոնները և ԳՈՒԿ-երն իրականացնում են ինքնավերլուծություններ: Ինքնավերլուծության ձևաչափով պահանջվում է տեղեկատվության հավաքագրում ամբիոնի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության, դասախոսական և ուսանողական համակազմերի, նյութատեխնիկական ապահովվածության վերաբերյալ: Ուսումնամեթոդական գործունեության բաժնում պահանջվում է որակական/քանակական տեղեկատվություն իրականացվող ՄԿԾ-ների վերջնարդյունքների, առարկայացանկի, առարկայական նկարագրերի և այլ առնչվող փաստաթղթերի բովանդակության հստակեցման և արդիականացման վերաբերյալ, ուսանողների գնահատման մեխանիզմների և մեթոդների վերանայման, բարելավման և արդիականացման վերաբերյալ, ինչպես նաև պրակտիկաների և պրակտիկումների վերաբերյալ: Ձևաչափում առկա է SWOT վերլուծության պահանջ, սակայն դրան հաջորդող բարելավման քայլերը չեն պլանավորվում:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

ԲՊՀ-ի գործունեության՝ այդ թվում ՄԿԾ-ների և շնորհվող որակավորումների վերաբերյալ հրապարակային տեղեկությունը, հասանելի է դառնում հասարակությանը բուհի պաշտոնական եռալեզու կայքէջի (www.brusov.am) և սոցիալական էջերի միջոցով: Կայքէջում սակավ են տարբեր գնահատումների և վերլուծությունների հրապարակումները, այդ թվում ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի վերաբերյալ: Համալսարանը չունի հրապարակումներ շրջանավարտների հաջողության պատմությունների վերաբերյալ, սակայն առկա են հրապարակումներ շարժունություն ապահոված ուսանողների հաջողությունների վերաբերյալ, որոնք կիսվում են իրենց փորձով արտասահմանում սովորելու առավելությունների մասին:

ԲՊՀ-ի կողմից շնորհվող որակավորումների գնահատման համար կարևոր մեխանիզմ է նաև շրջանավարտների շրջանում իրականացվող հարցումները և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանձնաժողովները հիմնականում գոհ են շրջանավարտների ցուցաբերած արդյունքներից, միևնույն ժամանակ հանդես են գալիս առաջարկություններով, օրինակ՝ «խստացնել հսկողությունը ավարտական աշխատանքների կատարման ընթացքի վրա, ուսանողներին ծանոթացնել գրծընթացի պահանջներին», վերջինիս խորհրդատվությունը պայմանավորված է եղել նրանով, որ 2022թ. «Քաղաքագիտություն» ՄԿԾ-ի 3 շրջանավարտներից 2-ը ստացել են անբավարար գնահատականներ:

Դատողություններ: Դրական է, որ ԲՊՀ-ն իր 2019-2023թթ. ռազմավարական ծրագրում նպատակադրվել է բարելավել իր կառուցվածքն ու վարչակառավարչական գործառույթները,

ինչպես նաև զարգացնել և արդիականացնել մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը, այնուամենայնիվ փորձագիտական խումբը նշում է, որ իրականացվել են մի շարք գործընթացներ՝ կառուցվածքային փոփոխություններ, ըստ այդմ պաշտոնների վերանայումներ, որոնք հիմնված չեն եղել հավաստի տվյալների և դրանց վերլուծությունների վրա, արդյունքում իրականացված բարեփոխումները համալսարանի համար դիտարկվել են ոչ արդյունավետ, և ԲՊՀ-ն այս պահին նույնպես հայտնվել է փոփոխությունների ժամանակահատվածում:

Համալսարանը ներկայումս գտնվում է ճգնաժամային կառավարման և խոշոր փոփոխությունների իրավիճակում. Հոգաբարձուների խորհրդի գործառույթները 2023թ. մարտ ամսից իրականացնում է ժամանակավոր խորհուրդը, կառավարումն իրականացնում է ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարը, տեղի են ունենում ղեկավար անձնակազմի փոփոխություններ: Ճգնաժամային կառավարմամբ պայմանավորված՝ այս պահին ԲՊՀ-ում առավելապես գերակշռում է ռեկտորի պաշտոնակատարի անձնական դերակատարումը:

Նախկին կառավարման համակարգի արդյունավետությունը չի գնահատվել, իսկ ներկայումս իրականացվող փոփոխությունների մասին ներքին շահակիցները ամբողջական պատկերացումներ չունեն, միևնույն ժամանակ երբեմն չեն վստահում այդ փոփոխություններին՝ ենթադրելով վտանգ ԲՊՀ-ում իրենց գործունեության շարունակականության համար: Կառուցվածքային նոր փոփոխությունները համալսարանում այլևս իրականություն են և փորձագիտական խումբն այս փուլում կարևորում է բուհի կողմից հաղորդակցության մեծացումը և թափանցիկության ապահովումը: Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ օպտիմալացման հիմքում դրվեն հստակ չափանիշներ, որոնք հիմնված կլինեն համապատասխան գործոնների վրա, ինչպիսիք են օրինակ՝ աշխատակիցների հմտությունները, կատարողականը և ՄՈՒՀ-ի կարիքները: Հակառակ պայմաններում կարող է վտանգի տակ դրվել նոր կառավարման համակարգի կայացվածությունը և շահակիցների համար ընդունելի լինելը:

Չնայած նրան, որ ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագիրը և փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման բուհի ծրագրերը հաստատվել են նույն ժամանակահատվածում՝ 2019թ., ԲՊՀ-ն իր 2019-23թթ. ռազմավարական ծրագրում չի անդրադարձել փորձագետների խորհրդատվություններին: Փորձագետների խորհրդատվությունները դուրս են մնացել ուշադրությունից, մինչդեռ դրանց հետևողական իրականացումը կարող էր էապես ազդել կառավարման գործընթացների արդյունավետության բարձրացման վրա: ՌԾ-ի նպատակների իրականացման առումով էլ հիմնական շեշտադրումը եղել է փաստաթղթերի մշակումը: Նախորդ հավատարմագրումից հետո դրական տեղաշարժ կարելի է համարել ստորաբաժանումների գործունեության կանոնակարգումը և պաշտոնի անձնագրերի մշակումը 2021թ. հաստատված կառուցվածքին համապատասխան:

Դրական է, որ ԲՊՀ-ն հաստատել է Բարեվարքության կանոնակարգ, ԳԽ-ին կից գործում է Էթիկայի մշտական հանձնաժողով: Ճիշտ է, կառավարման էթիկայի խնդիրների քննարկման դեպքերին հանձնժողովը չի անդրադարձել, բայց դասախոսների կողմից բարեվարքության կանոնների խախտման դեպքեր քննարկվել են:

Դրական է, որ ԲՊՀ-ն ունի համապատասխան ֆինանսական միջոցներ իր կրթական և մյուս գործընթացները կազմակերպելու համար, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ է ներդնել Ֆինանսների տնօրինման հստակ քաղաքականություն, որը հնարավորություն կընձեռի ԲՊՀ-ին իրականացնելու նաև ֆինանսական երկարաժամկետ պլանավորում՝ ապահովելով նաև ՌԾ նպատակների թիրախային իրականացումը: Փորձագիտական խումբը ՄՈՒՀ-ի ուշադրությունն է հրավիրում ՊԴ կազմին իրենց աշխատանքի և

գիտական գործունեության դիմաց տրամադրվող վարձատրության ուղղությամբ, ցածր աշխատավարձերը հետագայում կարող է խոչընդոտել որակյալ դասախոսական կազմի ներգրավմանը և գիտական արդյունքի ձեռքբերմանը:

Դրական է վերջին տարիներին ՌԾ-ի միջնաժամկետ գնահատման փորձը, ՌԾ-ի խնդիրներին համապատասխան ռեկտորի տարեկան հաշվետվությունների ձևաչափի աստիճանական ներդնումը և հաշվետվությունների վերլուծական բնույթի պահանջի առաջ քաշումը: Որոշակիորեն մտահոգիչ է այն, որ տարեկան պլանների ընթացիկ մշտադիտարկման գործընթացը ԲՊՀ-ում բացակայում է, իսկ տարեկան հաշվետվություններում հիմնականում բացակայում է բարելավումներին միտված առաջարկները: Տարեկան պլանների մշտադիտարկման մեխանիզմների ներդրումը հնարավորություն կընձեռի ՄՈՒՀ-ին հետևելու դրանց իրականացման ճիշտ ընթացքին:

ԲՊՀ-ն որոշակիորեն իրականացնում է ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրություններ, սակայն այդ գործոնների շրջանակը հստակեցված չէ, ինչպես նաև ուսումնասիրությունները չեն վերածվում խորը վերլուծությունների, որը կարող է հանգեցնել ունեցած ռեսուրսների ոչ ճիշտ կառավարմանը, ազդել տրամադրված կրթության որակի վրա և այլն:

ՌԾ-ի տարեկան ամփոփումը (հաշվետվությունը) իրենից ներկայացնում է առավել շատ արդյունքների թվարկում, սակայն ոչ ռազմավարական նպատակների իրականացման համապատասխանության վերլուծություն, իսկ վերլուծության բացակայությունը կարող է վտանգել ՌԾ-ի ամբողջական իրականացումը: Փորձագիտական խումբը գտնում է, որ հաշվետվությունների և ամբիոնային ինքնավերլուծությունների կիրառվող ձևաչափերը կարող են դառնալ ավելի արդյունավետ գործիքներ, եթե պահանջ դրվի դրանցում կիրառել ոչ միայն SWOT վերլուծություն, այլև ունենալ բարելավումների հիմնավորված առաջարկների բաժին: Կառավարման և վարչարարության համակարգում ՊԻԳԲ շրջափուլն ամբողջապես ներդրված չէ, ինչը կարող է վտանգել իրականացվող բարեփոխումների ընթացքը և չապահովել ակնկալվող արդյունքը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԲՊՀ-ն կիրառում է իրականացվող գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման մի շարք մեխանիզմներ, սակայն խնդրահարույց է, որ դրանցից ոչ մեկի արդյունավետությունը կառավարման որևէ մակարդակում չի գնահատվում: Բուհի կառավարման համակարգը խնդիր ունի հստակեցնելու և կանոնակարգելու ՄԿԾ-ների և այլ գործընթացների վերաբերյալ օբյեկտիվ, կայուն, վստահելի տեղեկատվության հավաքագրման մեխանիզմները, ապահովելու կիրառվող վերլուծության մեթոդների գիտականությունը և դրանց արդյունքների ներդրման մեխանիզմների աշխատանքը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԲՊՀ-ն հետևողական չի եղել նախորդ ինստիտուցիոնալ հավատարմագրման խորհրդատվությունների իրականացման գործում, վերջին 4 տարիներին տեղի են ունենում կառուցվածքային փոփոխություններ, որոնք հիմնականում խորը վերլուծված և հիմնավորված չեն, ներկայումս ԲՊՀ-ում իրականացվում է ճգնաժամային կառավարում և ներքին շահակիցները ամբողջապես իրազեկ չեն իրականացվող փոփոխություններից, առկա չէ ֆինանսների տնօրինման հստակ քաղաքականություն, առկա չէ միջաժամկետ պլանավորում, իսկ երկարաժամկետ և կարճաժամկետ պլանների իրականացման մշտադիտարկման հստակ մեխանիզմներ չեն գործում, կառավարչական տարբեր գործընթացներում լիարժեք ներդրված չէ ՊԻԳԲ շրջափուլը, որոշումները չեն կայացվում օբյեկտիվ տվյալների վերլուծության հիման վրա, չեն գնահատվում ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի վերաբերյալ

տեղեկատվության տարածման մեխանիզմները, փորձագիտական խումբը գտնում է, որ ԲՊՀ-ն չի բավարարում 2-րդ չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԲՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

ԲՊՀ-ի 2019-2023թթ. Ռազմավարական ծրագրով սահմանված առաքելության իրականացման համար սահմանված գերակա ոլորտներից է «Կրթական գործունեությունը»: Այս տեսանկյունից համալսարանը կարևորում է ուսումնական գործընթացի և կրթական ծառայությունների արդյունավետության բարձրացումը, ՄԿԾ-ների բարելավումը, արդիականացումը և բազմազանեցումը՝ համապատասխանեցնելով ՀՀ ՈԱՇ-ի բնութագրիչներին և աշխատաշուկայի պահանջներին, ինչպես նաև ուսումնական գործընթացի կառավարման համակարգի արդիականացումը՝ համապատասխան ռեսուրսների և կանոնակարգող փաստաթղթային հենքի ապահովմամբ:

Ըստ ինքնավերլուծության՝ ԲՊՀ-ում ուսումնական գործընթացն իրականացվում է 29 բակալավրական, 31 մագիստրոսական և 8 ասպիրանտական ՄԿԾ-ներով՝ առկա և հեռակա ուսուցման ձևերով, մասնագիտական հետևյալ ոլորտներում՝ **Կրթություն, Հումանիտար և Սոցիալական գիտություններ**: 2022-2023 ուստարում ՄՈՒՀ-ում կրթություն է ստացել 4388 ուսանող: Պետք է նշել, որ ԲՊՀ-ում իրականացվող բոլոր ՄԿԾ-ներում ուսուցանվում է երկու օտար լեզու, որը ՄՈՒՀ-ն իր համար դիտարկում է առավելություն և առանձնահատկություն:

2019 թ. վերանայվել են ԲՊՀ-ում իրականացվող ՄԿԾ-ների բովանդակությունը (այդ թվում՝ ուսումնառության վերջնարդյունքները), ՄԿԾ-ների ու դասընթացների նկարագրերը: ՄԿԾ-ների վերանայման աշխատանքներն իրականացնելու նպատակով հանդիպումներ են տեղի ունեցել գործատուների հետ, ուսումնասիրվել և համեմատական վերլուծություն է իրականացվել տարբեր համալսարանների ՄԿԾ-ների հետ: Արդյունքում վերանայվել կամ ավելացել են որոշ դասընթացներ, օրինակ՝ «Թարգմանչական գործ» ՄԿԾ-ում աճել է ոլորտային (իրավական, տնտեսագիտական և այլն) թարգմանություններին տրամադրվող ժամաքանակը: ՄԿԾ-ների վերանայումների ընթացքում շեշտադրվել է գործնական կարողություններ ձևավորող վերջնարդյունքները: Կրթական ծրագրերի բոլոր դասընթացներն ունեն նկարագրեր: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դրանք ամեն տարի վերանայվում են ամբիոններում: Դասընթացների նկարագրերը ներառում են նկարագրող հատված (կրթական ծրագիր, ամբիոն, դասախոս, կրեդիտ և այլն), նախապայմաններ, դասընթացի համառոտ նկարագիր, նպատակ, խնդիրներ, ուսումնառության վերջնարդյունքներ, գնահատման մեթոդներ/ձևեր, ուսումնասիրվող

թեմաներ, գրականության ցանկ, դասընթացի գնահատման ձև (ամփոփիչ ստուգում, վերլուծական աշխատանքի հանձնում և այլն) և գնահատման սանդղակ (վարկանիշային, թվային, տառային)։

Փորձաքննության ներկայացված ՄԿԾ-ների՝ «Քաղաքագիտություն», «Սերվիս», «Թարգմանչական գործ» ՄԿԾ-ների կրթական վերջնարդյունքները ՈԱՇ-ի բնութագրիչներին համապատասխանեցնելու նպատակով ՄՈՒՀ-ն իրականացրել է քարտեզագրում։ Պետք է փաստել, որ հասկանալի չէ, թե ՄԿԾ-ի որ վերջնարդյունքը ՈԱՇ-ի որ բնութագրիչն է ծածկում, քանի որ քարտեզագրման մեջ նշվում է միայն բնութագրիչի համարը՝ 1,2,3 և այլն, այլ ոչ թե նրա բովանդակությունը։

ՄԿԾ-ների և ուսումնական պլանների ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ առարկաների հերթակայությունը ընդհանուր առմամբ ունի ճիշտ տրամաբանություն և բխում է ՄԿԾ-ների սահմանված վերջնարդյունքներից։ Միայն անհրաժեշտ է փաստել, որ կան առարկաներ, որոնք բովանդակությամբ ամբողջովին հարմարեցված չեն տվյալ ՄԿԾ-ին. օրինակ՝ «Թարգմանչական գործ» ծրագրի շրջանակներում ուսումնասիրվում է «Հայ ժողովրդի պատմություն», «Հայոց լեզու», «Փիլիսոփայություն», «Տրամաբանություն» և այլ առարկաներ, որոնք չեն հարմարեցվում և ներկայացվում տվյալ ՄԿԾ-ների համատեքստում[9]։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները չեն տեսնում այդ առարկաների և իրենց մասնագիտության կապը՝ վերջիններս համարելով ոչ անհրաժեշտ։ Նման խնդիր առկա է նաև մյուս ՄԿԾ-ներում։ Մասնագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ՄԿԾ-ների ղեկավարները առավելապես ուշադրություն են դարձնում միայն իրենց ամբիոնների մասնագիտական առարկաների բովանդակությանը և հիմնականում դրանք են դառնում քննարկման առարկա, այլ ամբիոնների և ընդհանուր առարկաների բովանդակությունը չի քննարկվում և չի դիտարկվում, այլ թողնվում է տվյալ դասախոսի մասնագիտական պատասխանատվությանը։

Բակալավրական ՄԿԾ-ներում ներդրված են կամընտրական առարկաներ, օրինակ՝ «Թարգմանչական գործ» ՄԿԾ-ում ներդրված է 9 կամընտրական առարկա, դրանք են՝ «Հումորի թարգմանություն», «Բժշկական թարգմանություն», «Ռազմաքաղաքական թարգմանություն» և այլն։ «Սերվիս» ՄԿԾ-ում ներդրված են 4 կամընտրական առարկա՝ «Սպասարկման գործունեություն, հյուրընկալություն, մշակույթ», «Սպասարկման գործունեություն, զբոսաշրջություն, արվեստ» և այլն, իսկ «Քաղաքագիտություն» ՄԿԾ-ում՝ 4 կամընտրական առարկան, որոնք ուսումնական պլանում չեն երևում, պարզապես նշված են «կամընտրական»։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կամընտրական առարկաների ընտրության ժամանակ հաշվի են առնում առկա դասախոսական կազմի կարողությունները, երբեմն էլ՝ աշխատաշուկայից եկող արձագանքները[10]։

Բակալավրիատի և մագիստրատուրայի առարկայական ծրագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ երբեմն առկա են կրկնություններ նույն ՄԿԾ-ի երկու կրթական աստիճաններում, մասնավորապես, «Սերվիս» մասնագիտության բակալավր երկրորդ կուրսում դասավանվող «Զբոսաշրջության ոլորտի իրավական կարգավորում» դասընթացը բովանդակությամբ ունի որոշակի համընկնումներ մագիստրատուրայի երկրորդ կուրսում դասավանդվող «Զբոսաշրջության ու հյուրընկալության իրավական կառավարում» դասընթացի

[9] Նախադասությունը խմբագրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկումների արդյունքում։

[10] Նախադասությունը խմբագրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկումների արդյունքում։

հետ, «Հայկական գինու պատմություն» բակալավրական դասընթացն ունի որոշակի համընկնումներ մագիստրատուրայի «Գինու մշակույթ» դասընթացի բովանդակության հետ[11]:

Հետազոտական կրթաբլոկում ներառված 10 կրեդիտ /300 ժամ/ բեռնվածությամբ պրակտիկաների համար ինքնավերլուծության մեջ ներկայացված ծրագրերից ոչ մեկի դեպքում կրթական վերջնարդյունքներ սահմանված չեն:

Ինչպես նշվում է ինքնավերլուծությունում և ինչը պարզ դարձավ նաև փորձագիտական այցից և դասալսումներից, ԲՊՀ-ն կարևորում է ուսանողների գործնական կարողությունների ձևավորումը, ինչը նկատելի է հատկապես «Թարգմանչական գործ» ՄԿԾ-ի առարկայացանկում, դասաժամերի մոտ 70%-ը գործնական են, իսկ 30%-ը՝ տեսական, հաճախ պրակտիկ և գործնական մասերը արտահայտված են համադրության մեջ: Այլ է պատկերը «Սերվիս» ՄԿԾ-ում, դասաժամերը բաշխված են մոտ 20% գործնական, 80% տեսական հարաբերակցությամբ: «Քաղաքագիտություն» ՄԿԾ-ում ընդհանուր մասնագիտական դասընթացների կառուցամասում լսարանային ժամերի 87.5%-ը նախատեսված է դասախոսությունների համար, իսկ 12.5%-ը՝ գործնական պարապմունքների, հատուկ մասնագիտական դասընթացներում՝ 75%-ը և 25%-ը, համապատասխանաբար:

Ինչ վերաբերում է առարկանների կրեդիտների հաշվարկմանը կամ կրթամասերի միջև կրեդիտների բաշխմանը, ապա պետք է նշել, որ ԲՊՀ-ի կողմից ներկայացված չէ հստակ մոտեցում: «Մասնագիտության կրթական ծրագրի մշակման ուղեցույց փաստաթղթում» ներկայացված է կրեդիտի սահմանումը, սակայն նշված չէ, թե այդ սահմանումն ինչ մոտեցմամբ է տեղայնացվում ՄԿԾ-ներում:

3.2 ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Որպես այդպիսին ԲՊՀ-ում առկա չէ դասավարդման և ուսումնառության մեթոդների ընտրության հաստատված քաղաքականություն: Միայն «ԲՊՀ ՄԿԾ-ների մշակման ուղեցույց» փաստաթղթում կա անդրադարձ հետևյալ ձևակերպումով՝ «Ուսումնառության վերջնարդյունքները հիմք են հանդիսանում դասավանդման և ուսումնառության մեթոդների, գնահատման ձևերի որոշման համար»: ՊԴ կազմն ազատ է դասավանդման մեթոդների ընտրության հարցում: Դասալսումները ցույց տվեցին, որ օտար լեզուների դասավանդման գործընթացում ներդրված է հստակ մեթոդաբանություն և տրամաբանություն, օրինակ՝ «Թարգմանչական գործ» ՄԿԾ-ում ուսանողներին սովորեցնել թագմանության ճիշտ տեխնիկա: Նշված նպատակը կյանքի կոչելու համար ուսանողներին հանձնարարվում են բանավոր և գրավոր թարգմանություններ տարբեր ստեղծագործությունների բնագրերից, երգերից, թերթերից, ոլորտային բառապաշար պահանջող տեքստերից՝ իրավաբանություն, տնտեսագիտություն և այլն: Այս ՄԿԾ-ում հիմնականում կիրառվում են ինտերակտիվ մեթոդներ, որոնք զարգացնում են ուսանողի խոսքը, բառապաշարը և լսողությունը: «Սերվիս» ՄԿԾ-ում ուսանողներին հանձնարարվում են անհատական աշխատանքներ ՀՀ որևէ համայնքում ներկայացնել էկոտուրիզմը, ներկայացնել պայմանական տուրապրանք՝ գտնելով վերջինի շուկայի սեգմենտը և լրացնելով դասախոսի կողմից ներկայացված աղյուսակը և այլն: «Քաղաքագիտություն» ծրագրի շրջանակներում կիրառվում են

[11] Նախադասությունը խմբագրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկումների արդյունքում:

լսարանային հանդիպումներ, թեմատիկ մասնագիտական գրականության ընթերցում, թեմատիկ քննարկումներ, ամփոփիչ զեկուցումներ, անհատական և խմբային աշխատանքներ, վերջինիս դեպքում որպես դասավանդման մեթոդներ կիրառվում են մտագրոհը, նախագծերի վրա հիմնված ուսուցումը (project-based learning), մտավոր քարտեզը և այլն: Մեծ տեղ է տրվում տեսական վերլուծությունների իրականացմանը, օրինակ՝ ուսանողները իրականացնում են վերլուծական, անհատական աշխատանքներ տարբեր թեմաներով. օրինակ, «Տարածաշրջանային տնտեսական ինտեգրում.ԵՄ-ն և ՆԱՖՏԱ-ն, որպես տարածաշրջանային տնտեսական ինտեգրման կառույցներ», «Կոպենհագենյան չափանիշների զարգացումն ու ազդեցությունը ԵՄ ընդլայնման վրա» և այլն:

ՄԿԾ-ների առարկայական նկարագրերում առանձնացված են նաև դասավանդման մեթոդները, որոնք կիրառվում են տվյալ դասընթացի շրջանակներում, օրինակ՝ դասախոսություններ, թեմատիկ քննարկումներ, բանավեճի կազմակերպում, խթանման փուլ-մտագրոհ, խմբավորում, պրիզմա, 5-15 րոպեանոց ազատ շարադրանք և այլն: Պետք է նշել, որ մեթոդները տարանջատված չեն ըստ վերջնարդյունքների, պարզ չէ, թե որ մեթոդը որ արդյունքի ապահովման համար է նախատեսված: Դասավանդման և ուսումնառության ժամանակակից մեթոդների կիրառման նպատակով ԲՊՀ-ում առկա է անհրաժեշտ ռեսուրսային բազա՝ թիմային աշխատանքների համար նախատեսված լսարաններ, համակարգիչներ, պրոեկտորներ և այլն:

ՈՒսանողակենտրոն մոտեցումների կիրառման տեսակետից ԲՊՀ դասախոսական կազմը մի շարք խնդիրներ է տեսնում, որոնք վեր են հանված «2020-2021թթ. Որակի ապահովման կրթամասի վերապատրաստումների արդյունավետության գնահատման արդյունքների վերլուծություն» փաստաթղթում: Դասախոսները խնդիր են համարում տարբեր մասնագիտությունների ուսանողներին նույն խմբում ընդգրկելը կամ խմբերում ուսանողների ոչ ըստ ունակությունների տեղաբաշխումը, նաև լսարանների սակավությամբ պայմանավորված՝ հոսքերի/խմբերի բազմամարդությունը: Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դասախոսական կազմի այս մտահոգությունները հաշվի չեն առնվել, և 2022թ. հունիսին հաստատված ԲՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնական բեռնվածության տարեկան ծավալի և հաշվարկի նորմերում սահմանված է, որ դասախոսությունների հոսքերը ընդգրկում են 60-75 սովորող, իսկ գործնական խմբերը՝ 20-25 սովորող: Լեզուների դասավանդման առանձնահատկություններով պայմանավորված խմբերի համար բացառություններ չեն նախատեսված:

3.3 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

ԲՊՀ-ում ուսանողների գնահատումն իրականացվում է ըստ 2019թ. վերախմբագրված «Բակալավրի և մագիստրատուրայի ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման և գնահատման կանոնակարգի», որում հստակ սահմանված են բուհում երաշխավորվող գնահատման ձևերը, մեթոդները և մեթոդաբանությունը, նկարագրված են գնահատման և բողոքարկման գործընթացները: ՄԿԾ նկարագրերում առանձնացված է **«**գնահատում**»** բաժինը, որը տարբեր ՄԿԾ-ներում տարբեր ձև է ներկայացված: Օրինակ՝ «Քաղաքագիտություն» ծրագրում աղյուսակով ներկայացված են վարկանիշային գնահատականների առավելագույն և նվազագույն արժեքները, այդ միջակայքերին համապատասխանող թվային և տառային գնահատականները: «Թարգմանչական գործ (անգլերեն - հայերեն)» և «Սերվիս» ՄԿԾ-ներում ներկայացված են գնահատման մեթոդները՝ ընթացիկ գնահատում, թղթապանակ, ամփոփիչ ստուգում, թեստեր, կուրսային աշխատանքներ և այլն:

Առանձին դասընթացների համար ուսանողների ամփոփիչ գնահատականը ձևավորող բաղադրիչները ներկայացված են տվյալ դասընթացի նկարագրում: Պետք է նաև նշել, որ դասընթացների նկարագրերում տեսանելի չէ, թե տվյալ վերջնարդյունքը ինչպիսի առաջադրանքով է գնահատվելու:

ԲՊՀ-ում գործում է գնահատման միասնական տառաթվային /0-100, D-A+/ սանդղակ: Ինքնավերլուծության մեջ ներկայացված կրթական ծրագրերի դասընթացներում հստակ սահմանված չեն գնահատման չափանիշները, և դասընթացների մակարդակում գնահատման ռուբրիկներ չեն կիրառվում, որոնց միջոցով ուսանողի համար հստակ կլիներ թվային գնահատականի արժեքը:

Ուսանողների գիտելիքների և կարողությունների ընթացիկ ստուգումը կատարվում է թեստերի, անհատական, վերլուծական, հետազոտական աշխատանքների, բանավոր և գրավոր շարադրանք ենթադրող քննությունների միջոցով: Փորձագիտական այցից և շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ բոլոր ՄԿԾ-ներում կարևորվում է օտարալեզու գրականության ուսումնասիրությունը և վերլուծությունը, ուսանողների գործնական կարողությունների զարգացումը: Այդ նպատակով ուսանողներին առաջադրվում են անհատական, թիմային աշխատանքներ, օրինակ՝ «Թարգմանչական գործ» ՄԿԾ-ում ուսանողներն իրականացնում են մասնագիտական և առօրեական տեքստերի թարգմանություններ, վերլուծություններ և քննարկումներ: «Սերվիս» ՄԿԾ-ում «Զբոսաշրջության մարքեթինգ» առարկայի շրջանակներում ուսանողները իրավիճակային խնդիրների միջոցով փորձում են կազմել մարքեթինգային պլան հստակ սահմանված թիրախային խմբերի համար: «Գինու տուրիզմ» դասընթացի ընթացքում ուսանողները խմիչքի համտես են իրականացնում՝ փորձելով ներկայացնել դրանց տարբերությունները: Վերջինիս կատարման համար գնահատման չափանիշներ սահմանված չեն:

Մասնագիտական առանձնահատկություններից ելնելով՝ ամբիոններում նույնպես մշակվել են գնահատման հայեցակարգեր և պահանջներ, օրինակ՝ «Քաղաքագիտություն» ՄԿԾ-ում վերլուծական աշխատանքների գնահատման համար մշակվել է հայեցակարգ, որտեղ առանձնացվում են հետևյալ հինգ բաղադրիչները՝ աշխատանքի կառուցվածք, նպատակի ու խնդիրների ձևակերպում, վերլուծություն, եզրակացություն, օգտագործված գրականություն: Յուրաքանչյուր բաղադրիչի համար տրամադրվում է 20-ական միավոր: «Թարգմանչական գործ» ՄԿԾ-ում գրավոր և բանավոր թարգմանությունների, մասնագիտական բառապաշարի գնահատման համար սահմանված են հստակ պահանջներ և տոկոսային միավորներ. օրինակ՝ բանավոր թարգմանության համար կարևորվում է լսողական հմտությունների, լեզուների հաջորդական փոփոխության կարողությունների ճիշտ կիրառումը /30%/, համապատասխան մասնագիտական տեքստերի անգլերենից հայերեն և հակառակը թարգմանությունը՝ առավելագույնս պահպանելով իմաստը հիմնանշանակային և հարանշանակային շերտերում /30%/, համապատասխան բառապաշարի, քերականական կառույցների և լեզվական ոճի կիրառումը/համարժեք փոխադրում՝ /20%/, Մասնագիտական էթիկայի պահպանումը /10%/:

Պրակտիկաների գնահատումը տեղի է ունենում ուսանողների հաշվետվությունների կամ օրագրերի հիման վրա, պրակտիկայի ղեկավարի կողմից: Պրակտիկայի գնահատման հստակ չափանիշներ սահմանված չեն, չնայած դրանց պահանջը կա ԲՊՀ ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կանոնակարգում:

Բակալավրիատում ամփոփիչ ատեստավորումը և մագիստրատուրայում թեզերի պաշտպանությունը իրականացվում է համապատասխանաբար ըստ «ԲՊՀ բակալավրիատի ուսանողների ավարտական աշխատանքի պատրաստման, հրապարակային պաշտպանության կարգի և ավարտական աշխատանքի պատրաստման մեթոդական ուղեցույցի» և «ԲՊՀ մագիստրատուրայի ուսանողների մագիստրոսական թեզի պատրաստման, հրապարակային պաշտպանության կարգի և թեզի պատրաստման մեթոդական ուղեցույցի»: Ավարտական աշխատանքների ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ երբեմն (խոսքը վերաբերում է «Սերվիս» ՄԿԾ-ին) հստակորեն ձևակերպված չէ աշխատանքի նպատակը, սահմանված չեն խնդիրներ, առկա չեն վերլուծություններ, ուսանողի ինքնուրույն աշխատանքի տեսակարար կշիռը փոքր է, իսկ որոշ դեպքերում աշխատանքի եզրակացության բաժնում տրված են եզրակացություններ, որոնց վերաբերյալ աշխատանքում անդրադարձ չկա: «Թարգմանչական գործ» ՄԿԾ-ի ավարտական աշխատանքներում առանձնացված է գործնական մաս, որը ենթադրում է ուսանողի ինքնուրույն աշխատանքը թարգմանությունների տեսքով, որը գնահատման գերակա մաս է: Պետք է միայն նշել, որ աշխատանքների թեմաների ձևակերպումները ունեն որոշակի անհարթություններ, օրինակ՝ Բոնարարի և զոհի մեջ հաղորդակցության համարժեք փոխադրման խնդիրները հայերեն թարգմանված:

Ըստ ինքնավերլուծության՝ ԲՊՀ-ն Erasmus+ -Minerva միջազգային ծրագրերի շրջանակում մասնակցություն է ունեցել ՀՀ-ում գրագողության բացահայտման էլեկտրոնային համակարգի մշակման աշխատանքներին, որոնք ընթացիկ փուլում են և նախատեսվում են ամփոփվել 2023թ. ավարտին, ծրագրի գործարկման վերաբերյալ հստակ տեղեկատվություն առկա չէ: Նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների արդյունքում ԲՊՀ-ն իր թերությունների վերացման ծրագրում 2021թ. նախատեսել էր ունենալ Ակադեմիական ազնվության պահպանման կարգ, որը փաստացի առկա չէ: 2020թ. մշակված «ԲՊՀ հիմնադրամի բարեվարքության կանոնակարգում» որպես սկզբունք նշված է «ակադեմիական ազնվության ապահովումը և գրագողության բացառումը», իսկ սովորողների պարտավորությունների մեջ ներառված է հատուկ կետ՝ «պահպանել ակադեմիական ազնվություն. ուսումնառության կամ հետազոտական գործունեության ընթացքում չզբաղվել գրագողությամբ»: Բացի այդ, ավարտական աշխատանքների և թեզերի պատրաստման և պաշտպանության կարգերով սահմանված է «գրագողություն» եզրույթը, և դրա ապացուցման դեպքում՝ ուսանողը գրավոր ծանուցվում է այդ մասին և նրան թույլ չի տրվում մասնակցել ամփոփիչ ատեստավորմանը: Հավաստելու համար, որ ավարտական աշխատանքը կամ մագիստրոսական թեզը ինքնուրույն է կատարված՝ ուսանողները տիտղոսաթերթին նշում են կատարում, որ աշխատանքն արտագրված չէ:

Փորձագիտական այցից պարզ դարձով, որ որոշ դասախոսներ գրագողության դեմ պայքարում են անհատական հանձնարարականներ տրամադրելով, օրինակ՝ «Թարգմանչական գործ» ՄԿԾ-ում թարգմանված գրականությունից ընտրվում են պատմվածքներ, ուսանողները դուրս են բերում օտարաբան կառույցները, լեզվական շեղումները և այլն:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը, միջազգայնացմանը:

ԲՊՀ-ում բենչմարքինգային հետազոտության իրականացման համար հիմք է ծառայում «ԲՊՀ մասնագիտության կրթական ծրագրերի բենչմարքինգի իրականացման» կարգը: ՄՈՒՀ-ն իրականացրել է համեմատական վերլուծություններ ինչպես տեղական, այնպես էլ միջազգային

բուհերի նմանատիպ կրթական ծրագրերի հետ: Համեմատական վերլուծություններ իրականացվել են հայկական, ռուսական, գերմանական, բրիտանական, չինական, դանիական բուհերի հետ: Բենչմարքինգի նպատակները եղել են ՄԿԾ-ների անվանումների, մուտքային պահանջների, ուսումնառության արդյունքների, ուսումնական պլանների, ծրագրերի տևողության համեմատությունները: Ուսումնասիրության արդյունքում ուսումնական պլաններում վերանայվել են որոշ առարկաններ, օրինակ՝ «Սերվիս» ՄԿԾ-ում «Իրավագիտության հիմունքներ» դասընթացը վերափոխվել է «Հյուրընկալության ոլորտի իրավական կարգավորում» դասընթացի, վերանայվել է ուսանողներին տրամադրվող գրականության ցանկը, ավելացվել են ուսումնասիրվող լեզվի երկրի մշակույթի և քաղաքակրթությունն ուսումնասիրող դասընթացներ և այլն: «Քաղաքագիտություն» ՄԿԾ-ն բենչմարքինգի է ենթարկվել 3 միջազգային և 3 հայկական բուհերի ծրագրերի հետ: Համալսարանը եզրակացրել է, որ այն համադրելի է Մեծ Բրիտանիայում քաղաքագիտության ոլորտում հինգ լավագույն համալսարանների ցուցակում գտնվող Էսսեքսի համալսարանում առաջարկվող կրթական ծրագրի հետ և էապես տարբերվում ՀՀ բուհերի կողմից առաջարկվող նմանատիպ ծրագրերից: Միևնույն ժամանակ 5-ից ավել տարիների ընթացքում չեն վերանայվել կրթական ծրագրի վերջնարդյունքները և առարկայացանկը: Ըստ ամբիոնի ինքնավերլուծության՝ փոփոխման ենթակա են առարկայական նկարագրերը, այն էլ «առաջարկվող գրականության ցանկը նոր աղբյուրներով համալրելու միջոցով»:

Ուսանողական կազմի շարժունության տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք հիմնականում տեղի են ունենում Erasmus+ դրամաշնորհային ծրագրերի և ներքին հուշագրերի շրջանակներում: 2020թ ԲՊՀ-ում շարժունություն է ապահովել 16 ուսանող (10 ուսանող ուղարկվել է, 6 ուսանող՝ ընդունվել), 2021թ՝ 14 ուսանող (12 ուսանող ուղարկվել է, 2 ուսանող՝ ընդունվել), 2022-2023 թթ՝ 43 ուսանող (34 ուսանող ուղարկվել է, 9 ուսանող՝ ընդունվել): Փոխանակման ծրագրեր տեղի են ունենում Գերմանիայի, Ավստրիայի, Չինաստանի, Իսպանիայի, Բուլղարիայի, Բելգիայի, Ռումինիայի բուհերի հետ: Իսկ ինչ վերաբերում է դասախոսական կազմի շարժունությանը, ապա պատկերը հետևյալն է՝ 2019 թ. 15 դասախոս, 2020թ.2 դասախոս, 2021. 11 դասախոս, 2022թ՝ 18 դասախոս արձանագրել է շարժունություն:

3.5 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

Նախորդ հավատարմագրման գործընթացի փորձագիտական խմբի կողմից տրամադրված խորհրդատվության համաձայն՝ ԲՊՀ-ն կրթական ծրագրերի մշակման, մշտադիտարկման, գնահատման և վերանայման համար սահմանել է ընդհանուր մոտեցում՝ կիրառելով ՄՈՒՀ-ում առկա հաջողված փորձը: Խորհրդատվությունը հաշվի առնելով՝ ՄՈՒՀ-ը 2022 թ մշակել է «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում մասնագիտության կրթական ծրագրի մշակման կամ վերանայման, մշտադիտարկման և գնահատման» կարգը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ամբիոնների մեծ մասը սկսել են ՄԿԾ-ների վերանայման գործընթացները դեռևս 2019 թ-ից: Որպես գնահատման գործիքներ կիրառվում են հարցումները, դասալսումները, բենչմարքինգը, ոլորտային մասնագետների և գործատու դասախոսների կարծիքները: ՄԿԾ-ների մշտադիտարկման արդյունքում տեղի են ունեցել փոփոխություններ ուսումնական պլաններում՝ ավելացվել են նոր կամընտրական դասընթացներ, փոփոխվել են ժամաքանակներ, ներդրվել են նոր առարկաններ, թարմացվել է ուսանողներին տրամադրվող գրականության ցանկերը և այլն: Փորձաքննության ներկայացված ՄԿԾ-ներից «Քաղաքագիտություն» ՄԿԾ-ն դեռևս չի վերանայվել, իսկ «Սերվիս» ՄԿԾ-ում մշտադիտարկման

համակարգային գործընթացներ չեն իրականացվել, հիմնական փոփոխությունները պայմանավորված են գործատու դասախոսների առաջարկներով: Փորձագիտական այցից և հանդիպումներից պարզ դարձավ, որ վերանայված ՄԿԾ-ները հավանության են արժանացել շահակիցների կողմից:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ նախորդ հավատարմագրման արդյունքում ՄՈՒՀ-ն իրականացրել է ՄԿԾ-ների բարելավման աշխատանքներ, ինչպես նաև համակարգել է տարբեր գործընթացներ համապատասխան կանոնակարգերի մշակման և կիրառման միջոցով: ԲՊՀ-ն կարևորում է իր առանձնահատկությունը՝ լեզուների խորացված ուսուցումը տարբեր կրթական ծրագրերում, որը որոշակիորեն մրցակցային առավելություն է տալիս ՄՈՒՀ-ի շրջանավարտներին աշխատաշուկայում իրացվելու տեսանկյունից:

Դրական է, որ ՄՈՒՀ-ն իրականացրել է նաև ՄԿԾ վերջնարդյունքների քարտեզագրում ՈԱՇ-ի բնութագրիչներին համապատասխան, այնուամենայնիվ բնութագրիչների չնշված լինելը ամբողջապես տեսանելի չի դարձնում համապատասխանության պատկերը: Իսկ ինչ վերաբերում է կրեդիտների բաշխմանը, ապա փորձագիտական խումբը կարևորում է, որ ամբիոնների կողմից դիտարկվեն տվյալ դասընթացի վերջնարդյունքները և այդ արդյունքներին հասնելու համար ուսանողի կատարած լսարանային և ոչ լսարանային աշխատածավալը: Վերջնարդյուքների ձեռքբերման և կրեդիտների հաշվարկման տեսանկյունից արդյունավետ կլինի, որպեսզի նախապես սահմանվեն ուսանողին տրամադրվող բոլոր առաջադրանքները, ինչպես նաև դրանց վրա ծախսվող ուսանողի աշխատածավալը, վերջնս կնպաստի ուսանողի բեռնվածքի հիմնավոր հաշվարկմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև պրակտիկաների վերջնարդյունքների մշակումը և ներդրումը կրթական ծրագրերում, որը կնպաստի ուսանողի ապագա կարիերայի պատրաստմանը, գործնական հմտությունների ձեռքբերմանը:

Պարտադիր դասընթացները (տրամաբանություն, փիլիսոփայություն, հայոց լեզու և այլն) ուսանողների համար ապահովում են հիմնարար գիտելիքներ և վերլուծական միտք, կարևոր է, որ դրանք ուսանողներին տրվեն մասնագիտության համատեքստում, որը կնպաստի ուսանողի կողմից այդ գիտելիքների արժևորմանը, տվյալ առարկան սովորելու դրդապատճառի բարձրացմանը:

Չնայած նրան, որ ՄՈՒՀ-ում առկա չէ դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության հստակ քաղաքականություն, այուամենայնիվ դրական է, որ դասախոսական կազմի կողմից կիրառվում են այնպիսի մեթոդներ, որոնք նպաստում են ուսանողների մոտ վերլուծական և հաղորդակցական կարողությունների զարգացմանը: Մյուս կողմից, տարբեր մասնագիտությունների ուսանողներին նույն խմբում ընդգրկելը, խմբերի մեծաքանակությունը և խմբերում ուսանողների ոչ ըստ ունակությունների տեղաբաշխումը գործնականում անհնարին կդարձնի ինտերակտիվ և ուսանողակենտրոն դասավանդման մեթոդների ավելի ակտիվ կիրառումը դասախոսների կողմից: Մինչդեռ այդ մոտեցումները էապես կբարձրացնեին ուսուցման արդյունավետությունը:

Դրական է, որ ՄԿԾ-ների առանձնահատկություններից ելնելով, ամբիոնները մշակել են ուսանողների ընթացիկ գնահատման չափանիշներ, փորձագիտական խումբը նշում է, որ պրակտիկաների գնահատման հստակ չափանիշների մշակումը կնպաստի ուսանողների պրակտիկայում ձեռք բերած գործնական կարողությունների օբյեկտիվ գնահատմանը: Ի հավելումն

այս ամենի, խումբն ընդգծում է նաև ակադեմիական ազնվության պահպանմանն ուղղված հստակ մեխանիզմների ներդրումը, որն իսկապես կբացառի արտագրությունները և ակադեմիական անազնվությունները՝ ապահովելով ուսանողի գնահատման թափանցիկությունը:

Հատկանշական է նաև ՄՈՒՀ-ի իրականացրած համեմատական վերլուծություններն այլ բուհերի ՄԿԾ-ների հետ, որը նպաստել է նոր և կամընտրական դասընթացների ներդրմանը, գրականության ցանկի ավելացմանը և այլն, ինչը կարող է նպաստել ուսանողների մասնագիտական հետաքրքրությունների բավարամանը: Իսկ ինչ վերաբերում է շարժունության տվյալներին, ապա դրական է, որ վերջին տարիներին ընդհանուր առմամբ նկատելի է շարժունության տվյալների աճ, սակայն որոնշ ՄԿԾ-ներում բենչմարքինգի իրականացումը չի նպաստել շարժունության աճին, վերջինիս պատճառների ուսումնասիրությունը կարող է նպստել խոչընդոտների բացահայտմանը և լուծմանը:

Դրական է, որ 2019թ.-ից ՄՈՒՀ-ը մեկնարկել է ՄԿԾ-ների վերանայման աշխատանքներ, իրականացված գործընթացները նաև որոշակիորեն հիմք են հանդիսացել «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում մասնագիտության կրթական ծրագրի մշակման կամ վերանայման, մշտադիտարկման և գնահատման» կարգի մշակման համար: Բոլոր ՄԿԾ-ների կանոնակարգված վերանայումները կնպաստեն բոլոր մասնագիտությունների շարունակական բարելավմանը և արդիականացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, նախորդ հավատարմագրման արդյունքում ՄԿԾ-ները որոշակիորեն վերանայվել և բարելավվել են, կիրառվում են դասավանդման, ուսումնառության գնահատման բազմաձև մեթոդներ, որոնք նպաստում են ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերմանը, իրականացվել են ՄԿԾ-ների համեմատական վերլուծություններ, առկա են շարժունության գործընթացներ ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսների շրջանում, փորձագիտական խումբը գտնում է, որ ԲՊՀ-ն բավարարում է չափանիշ 3-ի պահանջները:

Եզրակացություն: Բրյուսովի պետական Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

ԲՊՀ-ում ներդրված են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ: Ուսանողներին հավաքագրելու նպատակով ՄՈՒՀ-ի Կարիերայի կենտրոնը կազմակերպում է «Բաց դռների» օրեր, մասնագիտական տոնավաճառներ և ցուցահանդեսներ, այցեր տարբեր դպրոցներ և այլն: Ընդունելության վերաբերյալ տեղեկատվության տրամադրման հարթակ է ԲՊՀ պաշտոնական կայքէջը, որտեղ առկա է դիմորդ

բաժինը, որի միջոցով ցանկացած անձ կարող է ծանոթանալ ՄՈՒՀ-ում իրականացվող կրթական ծրագրերին, ՄԿԾ մասնագրերին, վարձավճարներին և այլն:

ԲՊՀ-ում ընդունելությունն իրականցվում է՝ հիմք ընդունելով ՀՀ օրենսդրությունը և ՄՈՒՀ-ի ներքին իրավական ակտերը: Բակալավրիատի առկա ուսուցմամբ ընդունելությունն իրականացվում է մրցութային հիմունքներով՝ միասնական քննությունների հայտագրմամբ: Մագիստրատուրայում ընդունելությունը կատարվում է ՀՀ բուհերում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգի և ԲՊՀ-ի մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության կարգի համաձայն:

Օտարերկրյա քաղաքացիների ընդունելությունն իրականացվում է ՀՀ բուհեր օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգի համաձայն: 2022 թ. դրությամբ ԲՊՀ-ում ուսանում է մոտ 109 օտարերկրյա քաղաքացի, որոնք հիմնականում ազգությամբ հայեր են: Ըստ 2018-2021 թթ. ՈԱԿ-ի կողմից իրականացված հարցումների արդյունքների՝ ուսանողները ԲՊՀ-ն հիմնականում նախընտրում են համալսարանի «պետական» լինելու, կրթության բարձր որակի, ընկերների և բարեկամների խորհուրդների, ՄՈՒՀ-ի բարձր վարկանիշի, վարձավճարների մատչելի լինելու պատճառներով:

2021-2022 թվականների ընդունելության ցուցանիշներից նկատվում է բակալավրիատի առկա համակարգի ուսանողների թվի նվազում (2021 թվականին՝ 1177 ընդունված ուսանող, իսկ 2022 թվականին՝ 1070 ուսանող), իսկ հեռակա համակարգում նկատվում է ընդունելության որոշակի աճ՝ (2021 թվականին՝ 97 ուսանող, իսկ 2022 թվականին՝ 184 ուսանող): Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հեռակա բաժինների նկատմամբ ուսանողների առավել մեծ հետաքրքրվածությունը պայմանավորված է ուսանողների աշխատելու հանգամանքով: Իսկ ինչ վերաբերում է մագիստրատուրային, ապա 2021 թվականին ընդունվել է 192 ուսանող, իսկ 2022 թվականին՝ 100 ուսանող առկա և հեռակա համակարգերում: Պետք է նշել, որ նախորդ հավատարմագրման փորձագիտական խումբը խորհրդատվություն է տրամադրել ԲՊՀ-ին ներդնել մագիստրատուրայի ընդունելության հստակ չափանիշներ, որը փաստացի չի իրականացվել: Ինչպես պարզ դարձավ փորձագիտական այցից, մագիստրատուրա ընդունվող ուսանողները երբեմն ունենում են ցածր մուքային տվյալներ (օրինակ՝ օտար լեզուների իմացության ցածր մակարդակ), որը հետագայում լրացուցիչ խոչընդոտներ է առաջացնում ուսուցման կազմակերպման ընթացքում:

4.2 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:

ԲՊՀ-ում ուսանողների կրթական կարիքների վերհանման նպատակով իրականացվում են հարցումներ, քննարկումներ: Հարցումների միջոցով ուսանողները բարձրաձայնում են կրթական որոշ կարիքներ, օրինակ՝ պրակտիկաների ժամաքանակի ավելացման, տրամադրվող գրականության քանակի և բազմազանեցման մասին, ստացված տվյալները փոխանցվում են համապատասխան ստորաբաժանումներ: ՄՈՒՀ-ում կարիքների բացահայտման մեխանիզմ է դիտարկվում նաև ՈՒսանողական խորհուրդը, ներդրված է ուսանողների ՈՒԽ դիմումների ընդունման ընթացակարգ, որի համաձայն ուսանողներն իրենց դիմումները կարող են ներկայացնել ՈՒԽ-ին գրավոր ձևով (ցանկության դեպքում անանուն): Դիմումը ստանալուց 3 աշխատանքային օրվա ընթացքում, ըստ համապատասխան ընթացակարգի, պարտավորվում է ընթացք տալ դիմումին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն ՈՒԽ ներկայացուցիչներին այս մեխանիզմով դիմում են հիմնականում դասախոս-ուսանող տարաձայնությունների դեպքում, դիմելու դեպքերը շատ չեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն իրենց

կարիքներով առավելապես դիմում են դասախոսներին, ամբիոններին, դեկաններին և դեկանատի աշխատակիցներին՝ կապված կրեդիտների փոխանցման (շարժունություն ապահովված ուսանողների դեպքում), զեղչերի ստացման, հետազոտական աշխատանքների թեմաների փոփոխության, իսկ օտարազգի ուսանողները դիմում են Կարիերայի կենտրոնին:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

Ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար ԲՊՀ-ն ստեղծում է լրացուցիչ պարապմունքներ ունենալու հնարավորություններ՝ կազմակերպվելով օտար լեզուների (չինարեն, կորերեն, հունարեն և այլն) ուսուցման տարբեր դասընթացներ:

Ըստ ինքնավերլուծության՝ միջանկյալ և ամփոփիչ ստուգումներին նախընթաց, ամբիոնները ուսանողների համար սահմանում են խորհրդատվական ժամեր, որոնք անցկացվում են համապատասխան դասընթացները վարող դասախոսների կողմից: Ուսանողների հետ տարվում են նաև խորհրդատվական աշխատանքներ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի իրականացման շրջանում, վերջինս մտնում է դասախոսի ընդհանուր բեռվածության մեջ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները երբեմն հնարավորություն ունեն բացակայության դեպքում միանալ դասընթացներին Zoom հարթակով (լսարանային պամանների թույլատրման պայմաններում): Բացակայությունների դեպքում ՄՈՒՀ-ն ուսանողներին հնարավորություն է ընձեռում նաև մասնակցելու տվյալ դասընթացին այլ խմբերի հետ:

Ըստ ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված տվյալների՝ ուսանողների 79%-ը տեղեկացված է խորհրդատվական ծառայություններից:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

Ըստ ինքնավերլուծության՝ ԲՊՀ ռեկտորը, պրոռեկտորները և դեկաններն ունեն ուսանողների ընդունելության սահմանված հստակ ժամանակացույց: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ռեկտորը հանդիպումներ է ունենում ուսանողների հետ, իսկ դեկաններին և մնացյալ վարչական անձնակազմին ուսանողները կարող են դիմել օրվա ցանկացած ժամի: Ուսանողներին հետաքրքրող հարցերը հիմնականում կապված են փաստաթղթերի հետ՝ փոխանակման ծրագրով արտերկրում ուսանելու, զեղչերի ստացման և այլն: Ըստ ԲՊՀ ՈԱ բաժնի վերլուծությունների՝ ուսանողների 66%-ը վարչական օժանդակություն ստանալու նպատակով դիմում է դեկանատի աշխատակիցներին, 35%՝ համապատասխան ֆակուլտետի դեկանին: Ըստ շահակիցների՝ վարչական անձնակազմը պատրաստակամ է առաջացած յուրաքանչյուր խնդրի և հարցի դեպքում աջակցություն և խորհրդատվություն տրամադրելուն:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

ԲՊՀ-ում ուսանողների կարիերային նպաստող աշխատանքները, ՄՈՒՀ-աշխատաշուկա, ՄՈՒՀ-շրջանավարտ կապը ապահովվում է Կարիերայի կենտրոնի կողմից: Ուսանողների համար կազմակերպվում են դասընթացներ, թե ինչպես ներկայանալ հարցազրույցի, ունենալ գրագետ և մրցունակ ինքնակենսագրականներ: ԲՊՀ-ում գործում է «Կարիերայի և տեղեկատվության օրեր ԲՊՀ-ում» ծրագիրը, որի շրջանակներում տեղի են ունեցել գործատուների, ձեռնարկատերերի և հասարակական կազմակերպությունների հետ հանդիպումներ, ծրագրի շրջանակներում

սովորողներին և շրջանավարտներին ներկայացվել են տեղեկատվություն գործատուների պահանջների, թափուր աշխատատեղերի վերաբերյալ: Կարիերայի կենտրոնի կողմից պարբերաբար հանդիպումներ են կազմակերպվում ոլորտային գործատուների հետ, կենտրոնը նաև փնտրում և գտնում է հավելյալ պրակտիկաների հնարավորություններ ուսանողների և շրջանավարտների համար:

2021թ. Որակի ապահովման բաժնի և Կարիերայի կենտրոնի համատեղ ջանքերով իրականացվել են հարցումներ 2018-2021թթ. բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի շրջանավարտների շրջանում (1539 հարցվող) ուսանողների զբաղվածության վերաբերյալ: Վերլուծությունները ցույց են տվել, որ ԲՊՀ շրջանավարտների 65%-ն աշխատում են: Աշխատող շրջանավարտների 50%-ն աշխատանք է գտել ուսումնառության տարիներին, 51%-ն աշխատում են իրենց մասնագիտությամբ, իսկ 49%-ը՝ ոչ իրենց: Հարցման արդյունքներով ամենապահանջված մասնագետները շուկայում եղել են լեզվաբանության, մանկավարժության և թարգմանչության բաժինների շրջանավարտները: Իսկ 2022թ. հետազոտության (ներգրավված է եղել 1499 շրջանավարտ) արդյունքները ցույց են տալիս, որ աշխատանք գտնող շրջանավարտները կազմում են 80%, որից իրենց մասնագիտությամբ աշխատողները կազմում են 52%-ը, իսկ ոչ մասնագիտական կամ հարակից ոլորտներում աշխատանք գտնողները՝ 48%:

Erasmus+ ծրագրի շրջանակներում ԲՊՀ-ում ձևավորվել է «SMART caffe» ձեռներեցության կենտրոնը, որի նպատակն է զարգացնել ուսանողների, շրջանավարտների ձեռնարկատիրական կարողությունները և հմտությունները: Բացի այդ, Կարիերայի կենտրոնի, «Կառավարում» մագիստրոսական կրթական ծրագրի, կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի և Smart Café ձեռնարկատիրական կենտրոնի նախաձեռնությամբ ՄՈՒՀ-ում իրականացվում են «Խելացի զրույցներ» (SMART talks) ծրագիրը, որի շրջանակներում հրավիրվում են աշխատաշուկայից ներկայացուցիչներ, որոնք հանդես են գալիս դասախոսություններով, օրինակ՝ «Սթարթափի նախաձեռնում Covid-19-ի պայմաններում», «Առաջնորդությունը ժամանակակից աշխարհում», «Վենչուրային ֆինանսավորում սթարթափների համար», «Տեղեկատվական տեխնոլոգիաները և մտավոր սեփականությունը. իրավական խնդիրներ և պաշտպանություն» և այլն: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ Եվրոպական կրթական հիմնադրամի կողմից ներկայացված «Կարիերայի զարգացման աջակցման ազգային համակարգի զեկույց»-ում, ԲՊՀ կարիերայի կենտրոնի և SMART ձեռնարկատիրական կենտրոնի գործունեությունը դիտարկվել է որպես հաջողված փորձ:

Ըստ ՄՈՒՀ-ի տրամադրած տվյալների՝ ուսանողների 89%-ը տեղյակ է ԲՊՀ-ում գործող Կարիերայի կենտրոնի գործունեության մասին, իսկ նրանցից 24%-ն է օգտվում է կենտրոնի ծառայություններից:

4.6 ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

Ըստ ինքնավերլուծության՝ ԲՊՀ-ն կարևորում է ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում: ՄՈՒՀ-ում գործում են ներքին դրամաշնորհային ծրագրեր, որոնցում պահանջ է մագիստրատուրայի 1 ուսանողի ներգրավվածությունը: Ուսանողների հետազոտական կարողությունների զարգացման նպատակով բակալավրիատի և մագիստրատուրայի որոշ ՄԿԾ-ներում, որոնց ընտրությունը ՄՈՒՀ-ի կողմից չի հիմնավորվում, 2019-2020թթ.-ից ներառվել է «Հետազոտության մեթոդներ» դասընթացը: Դասընթացի ներդրման արդյունավետության գնահատում դեռևս չի իրականացվել:

ԲՊՀ-ն հնարավորություն է ընձեռում ուսանողներին անվճար հրապարակել հոդվածներ համալսարանի «Բանբեր» գիտական պարբերականում: Ըստ ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված տվյալների՝ 2020-22թթ. պարբերականում ուսանողների կողմից տպագրվել է 34 հոդված: Պետք է նշել, որ տպագրված հոդվածների հեղինակները մեծամասամբ եղել են հայցորդներ և ասպիրանտներ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԲՊՀ Ուսանողական խորհրդի շրջանակներում գործել է նաև Ուսանողական գիտական ընկերություն, վերջին ժամանակահատվածում ընկերությունը չի գործում: ԲՊՀ գործունեության տարեկան ծրագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դեռևս 2019թ.-ից ՄՈՒՀ-ը ցանկանում է վերստեղծել Ուսանողական գիտական ընկերություն և Երիտասարդ գիտնականների խորհուրդ, սակայն հստակ արդյունքներ մինչ օրս գրանցված չեն:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

Ուսանողներն իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկանում են ՄՈՒՀ-ի և ուսանողների միջև կնքվող պայմանագրից, Ուսանողի ուղեցույցից (հրապարակված 2022թ.), ինչպես նաև իրազեկող տարբեր միջոցառումներից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Ուսանողական խորհրդի անդամների կողմից ամեն տարի 1-ին կուրսեցիների համար կազմակերպվում են իրազեկող միջոցոռումներ, որոնց շրջանակներում ուսանողները տեղեկացվում են նաև իրենց իրավունքների և պարտականությունների մասին:

Ուսանողների շահերի պաշտպանության համար պատասխանատու մարմինը ԲՊՀ-ում Ուսանողական խորհուրդն է, որի նախագահի ընտրությունը տեղի է ունեցել փորձագիտական այցի նախաշեմին: Փորձագիտական այցի ընթացքում շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ կառույցը խնդիր ունի ուսանողների շրջանում վստահության բարձրացման տեսակետից, քանի որ այս փուլում ՈՒԽ-ն ամբողջովին չի դիտարկվում որպես ուսանողների իրավունքները պաշտպանող մարմին: ՈՒԽ զարգացման ծրագրում որպես կառույցի հիմնական նպատակներ նշված են ուսանողների և շահերի պաշտպանությունը, ուսանողների ներգրավվածության ապահովումը կառավարման համակարգում, ուսանողների՝ իրեց իրավունքների մասին իրազեկումը և այլն: Միևնույն ժամանակ, որպես կառույցի գերակայություններ, նշված են ուսանողակենտրոն ուսուցումը և ԲՊՀ կրթական առաքելության ընդլայնումը, կրթություն, գիտություն և նորարարություն միահյուսումը, ակադեմիական շարժունության խթանումը: Պետք է նշել, որ որպես գերակայություն շեշտադրված չէ ուսանողների իրավունքների և շահերի պաշտպանությունը: Ինչպես փաստեց նաև փորձագիտական այցը, ՈՒԽ-ն՝ որպես ուսանողների պաշտպանության հիմական կառույց շեղվել է իր հիմնական ուղղուց:

Փաստաթղթերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախկինում ՈՒԽ աշխատանքները համակարգված բնույթ չեն կրել, աշխատանքները հստակորեն չեն պլանավորվել, նիստերը չեն արձանագրվել: ՈՒԽ անդամները ընդգրկված են ՄՈՒՀ-ի գիտական խորհուրդներում (այս պահին Հոգաբարձուների խորհրդում ուսանողներ ներգրավված չեն), Էթիկայի հանձնաժողովում: Կայացված որոշումների մասին ուսանողները տեղեկացվում են կայքէջի և ֆակուլտետային ժողովների միջոցով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տեղեկատվության ստացման նպատակով ուսանողները նախընտրում են դիմել դեկաններին, դեկանատներին և ամբիոններին:

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

ԲՊՀ-ում ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման նպատակով ամբիոնները և ԳՈՒԿ-երը իրականացնում են ինքնավերլուծություններ, որտեղ ներառում են ուսանողներին տրամադրվող կրթական, խորհրդատվական ծառայությունների արդյունավետությունը խոչընդոտող հիմնախնդիրները:

Որակի ապահովման մեխանիզմների օրինակ է նաև ինստիտուցիոնալ (ԲՊՀ ուսանողների հարցում) և ծրագրային (ՄԿԾ-ների ուսանողների հարցում) մակարդակներում իրականացվող հարցումները:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ԲՊՀ-ի քայլերը ուսանողների հավաքագրման ուղղությամբ, որը ապահովում է ընդունելության թվերի կայունությանը: Իսկ ինչ վերաբերում է հեռակա բաժինների ընդունելության աճին և առկա ուսուցմամբ սովորելու ուսանողների ցանկության նվազմանը, ապա դա կարող է ԲՊՀ-ի համար ազդակ դառնալ, որ ուսանողների սպասումները համալսարանական կրթության վերաբերյալ փոխվում են: Փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ է, որպեսզի ԲՊՀ-ն դիտարկի այս խնդիրը՝ հեռակա համակարգում սովորող ուսանողների համար նույն որակի կրթության ապահովման համար:

Մագիստրոսական ծրագրերում ուսանողների ունեցած ցածր մուտքային տվյալները կարող են խոչընդոտել ՄՈՒՀ-ի կողմից առաջարկվող դասընթացների լիարժեք ըմբռնմանը և կրթական ծրագրերով սահմանված վերջնարդյունքների ձեռքբերմանը: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ ԲՊՀ-ն աշխատանքներ իրականացնի՝ դիտարկելով ուսանողների համար լրացուցիչ դասընթացների կազմակերպումը և սահմանելով համապատասխան մուտքային պահանջներ, որը կնպաստի բոլոր ուսանողների մոտ վերջնարդյունքների ձեռքբերմանը:

Հեռակա համակարգում սովորող ուսանողների աճը նպաստելու է խորհրդատվական ծառայությունների անհրաժեշտության մեծացմանը, այս տեսանկյունից կարևոր է, որ խորհրդատվությունների տրամադրումը լինի կանոնակարգված, չմնա ուսանողների և դասախոսների նախաձեռնողականությանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Կարիերայի կենտրոնի ակտիվ աշխատանքը, ուսանողների և շրջանավարտների համար պարբերաբար կազմակերպվող միջոցառումները: Շրջանավարտների շրջանում զբաղվածության բարձր մակարդակը ցույց է տալիս, որ համալսարանի կողմից տրամադրվող կրթությունն ու վերապատրաստումներն ընդհանուր առմամբ արդյունավետ են ուսանողներին աշխատաշուկային նախապատրաստելու և նրանց անհրաժեշտ հմտություններով ապահովելու տեսանկյունից: Միևնույն ժամանակ խումբը կարևորում է նաև շրջանավարտների կարիերայի հետագծի ուսումնասիրությունները, հաշվի առնելով մի շարք գործոններ՝ որքանով են աշխատատեղերը համապատասխանում համալսարանի և շրջանավարտի ակնկալիքներին, առկա են կարիերայի առաջխաղացման հնարավորություններ և այլն[12]: Այս գործոնների համակարգային և ամբողջական ուսումնասիրությունները հնարավորություն կընձեռի ԲՊՀ-ին գնահատելու զբաղվածության բարձր ցուցանիշների բովանդակային կողմը:

[12] Նախադասությունը խմբագրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկումների արդյունքում:

Փորձագիտական խմբի համար որոշակիորեն մտահոգիչ է ՈՒԽ-ին որպես ուսանողների իրավունքները ներկայացնող և պաշտպանող մարմնի չընկալումը ՄՈՒՀ-ի ուսանողական հանրույթի կողմից, որը կարող է հանգեցնել ուսանողների և Խորհրդի միջև կապի խզմանը, ուսանողների կարիքների ոչ արդյունավետ լուծմանը: Նշված ռիսկերը մեղմելու համար խումբը կարևորում է ուսանողական կառույցի կողմից հաղորդակցության միջոցներ գտնելու ջանքերի ներդրումը և վստահության մթնոլորտի ձևավորումը, ինչպես նաև իր գործունեության առանցքում ուսանողի իրավունքի և շահի պաշտպանության գաղափարի ներդրումը: Միայն այս դեպքում ՈՒԽ-ն կկարողանա լիարժեքորեն իրագործել ուսանողների իրավունքների պաշտպանության հանձնառությունը:

Ողջունելի են ԲՊՀ-ի քայլերը ուսանողներին ներքին դրամաշնորհային ծրագրերում ընդգրկելու ուղղությամբ, այնուամենայնիվ ծրագրերի սակավ լինելը թվով շատ քիչ ուսանողների է նման հնարավորություն ընձեռում: Մինչդեռ կարևոր է նշել, որ գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ընդգրկվածությունը նպաստի ուսանողների՝ խնդիրներին լուծումներ գտնելու, տվյալների հավաքագրման և վերլուծման գործիքներին տիրապետելու, նոր գաղափարներ առաջադրելու կարողությունների զարգացմանը, որը կնպաստի ուսանողի՝ հետագայում որպես շրջանավարտի գրավչության բարձրացմանը:

Եզրահանգում: Կարևորելով այն, որ ԲՊՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ, որի արդյունքում ուսանողների թվի աճ է գրանցվում, ԲՊՀ-ն ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար, ինչպես նաև ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԲՊՀ-ն բավարարում է չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: Բրյուսովի պետական Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

ԲՊՀ-ում ՊԴ կազմի ընտրությունը իրականացվում է ըստ «ԲՊՀ ՊԴ կազմի պաշտոնների բնութագրիչների, պաշտոններին հավակնորդների մրցութային ընտրության և պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոններում նշանակման» 2020թ.-ի կարգի համաձայն: Ըստ կարգի՝ կան պաշտոններ, որոնք համալրվում են մրցութային ընտրության կարգով և կան

հատուկ պաշտոնների համախումբ, որոնք համալրվում են ռեկտորի կողմից հրավերով և նշանակմամբ: Հատուկ պաշտոններն են՝ խորհրդատու դոցենտ և խորհրդատու պրոֆեսոր, համատեղող դասախոս, ավագ դասախոս, դոցենտ և պրոֆեսոր (մինչև 0.5 դրույք ներքին կամ դրսի բուհերից ու կազմակերպություններից):

Ըստ ԲՊՀ-ի տրամադրած տվյալների՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմը բաղկացած է 453 աշխատակցից, որից հիմնական հիմունքներով աշխատում են 270-ը (մոտ 60%), համատեղությամբ՝ 168-ը (մոտ 37%), պայմանագրային՝ 8-ը (մոտ 1.6%), ներքին համատեղությամբ՝ 7-ը (մոտ 1,4%): ՊԴ կազից 10-ը (մոտ 2%) գիտությունների դոկտորներ են, իսկ 184-ը (40%-ը) ՝ գիտությունների թեկնածուներ: Պետք է նշել, որ ամբիոններում և գիտաուսումնական կենտրոններում ներգրավված են 1-3 դոկտորներ, պրոֆեսորներ, կան նաև ամբիոններ և ԳՈՒԿ-եր, որտեղ վերջիններս ընդհանրապես ներգրավված չեն, օրինակ՝ Սերվիսի ամբիոնը, Լրագրության գիտաուսումնական կենտրոնը: ԲՊՀ-ն ունի նաև լեզվակիր, օտարազգի դասախոսներ: Պետք է նշել, որ օտարազգի մասնագետներով համալրման միտումը հիմնականում նկատվում է լեզուների ուսուցման որոշ ամբիոններում՝ գերմաներեն, Ասիական լեզուների և այլն: ՄՈՒՀ-ի այս փորձառությունը դեռևս մեծ տարածում չի գտել, այնուամենայնիվ փորձագիտական այցից պարզ դարձավ, որ լեզվակիր դասախոսական կազմ ունենալու ցանկությունը մեծ է հատկապես ուսանողների մոտ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ համատեղող դասախոսական կազմի ընտրության ժամանակ կարևորում են գիտական աստիճանը և կոչումը: ԲՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմում մեծամասնություն են կազմում նաև երիտասարդ աշխատակիցները, որոնք չունեն գիտական ասիճան կամ կոչում, սակայն ունեն աշխատանքային փորձառություն:

Մրցութային կարգով ընդունված ՊԴ կազմի հետ ՄՈՒՀ-ը պայմանագիր է կնքում առաջին փուլում 3, ապա 5 տարի ժամկետով, իսկ ոչ մրցութային կարգով ընդունվածների հետ՝ 1 տարի ժամկետով: Ըստ ԲՊՀ-ի տրամադրած տվյալների՝ 2019-20 ուստարում ընդունվել է 329 դասախոս, ազատվել՝ 337-ը, 2020-21 ուստարում՝ ընդունվել է 285 դասախոս, ազատվել՝ 221-ը, 2021-22 ուստարում ընդունվել է 260 դասախոս, ազատվել՝ 236-ը:

ՄՈՒՀ-ը 2019 թվականին ընդունել է վարչական և ուսումնաօժանդակ կազմերի ընդունման կարգը, որով և իրականցնում է տվյալ հաստիքների ընտրությունը: Ըստ կարգի՝ վարչական և ուսումնաօժանդակ կազմի տեղակալումը իրականացվում է ռեկտորի կամ համապատասխան ստորաբաժանման ղեկավարի ուղիղ ընտրությամբ կամ մրցութային կարգով: Պետք է նշել, որ կարգում առանձնացված չեն այն պաշտոնները, որոնք զբաղեցվում են մրցույթով, և նրանք, որոնք ընտրվում են ղեկավար կազմի կողմից: ԲՊՀ-ն ունի համապատասխան վարչական, և ուսումնաօժանդակ կազմ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի կառուցվածքային փոփոխությունները հանգեցնելու են վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի կրճատման:

5.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Նախորդ հավատարմագրման արդյունքում փորձագիտական խումբը խորհրդատվություն է տրամադրել ՄՈՒՀ-ին յուրաքանչյուր դասընթացի համար սահմանել դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ և գործնական հմտությունների գնահատման չափանիշներ: Խորհրդատվությունը ընդունվել է ՄՈՒՀ-ի կողմից, սակայն

պահանջները չեն մշակվել և կիրառվել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի ղեկավար անձնակազմը գիտակցում է չափանիշների մշակման անհրաժեշտությունը՝ կարևորելով մասնագիտական և մանկավարժական փորձառություն ունեցող կադրերի ներգրավումը:

ՄՈՒՀ-ում մշակված են ՊԴ կազմի պաշտոնի անձնագրեր: ՊԴ կազմի նշանակման ժամանակ հաշվի են առնում դասախոսի գիտական աստիճանը և կոչումը, աշխատանքային ստաժը, մասնագիտական գիտելիքները և մանկավարժական հմտությունները, վերջին 5 տարում անցած վերապատրաստումները, գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքի արդյունքները: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ ոչ բոլոր ամբիոններում է առկա հստակ պահանջ օտար լեզու դասավանդող դասախոսի մասնագիտական գիտելիքների և կարողությունների վերաբերյալ, օրինակ՝ լեզվի իմացության միջազգայնորեն ճանաչելի հավաստագիր կամ իր դասավանդող առարկաների շրջանակներում իրականացված գիտական հետազոտություններ, հրապարակված ուսումնամեթոդական ձեռնարկներ և այլն:[13]

Փորձագիտական այցից և հանդիպումներից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը ՄԿԾ-ների իրականացման համար կարևորում է նաև ոլորտում գործնական փորձառություն ունեցող մասնագետների ներգրավումը:

5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Ըստ ինքնավերլուծության՝ ԲՊՀ-ն վերամշակում է «ՊԴ կազմի կատարողականի գնահատման կարգը», որով նախատեսվում է սահմանել ՊԴ կազմի կատարողականի գնահատման նպատակներն ու խնդիրները, մեթոդներն ու հաճախականությունը, հիմնական սկզբունքներն ու պահանջները: Կարգը քննարկման փուլում է և նախատեսում է հաստատել 2023թ. ավարտին:

Որպես ՊԴ կազմի գնահատման հիմնական մեխանիզմներ՝ ՄՈՒՀ-ում կիրառվում են դասալսումները, ՈԱԲ-ի կողմից կազմակերպված ուսանողական հարցումների արդյունքները, ամբիոնի վարիչների/սեկցիայի ղեկավարների կողմից իրականացվող դասալսումները, ինչպես նաև փոխադարձ դասալսումները: Դասալսումները կազմակերպվում են ըստ ժամանակացույցի, որոնք նախապես քննարկվում են ամբիոններում և ԳՈՒԿ-երում, կարող են լինել նաև չպլանավորված դասալսումներ: ԲՊՀ-ում 2019 թվականից մշակվել է «Դասալսումների կազմակերպման, անցկացման և գնահատման կանոնակարգը», որտեղ առկա է նաև դասալսումների անցակացման արդյունքների գնահատման օրինակելի ձևաչափ: Դասի բովանդակության գնահատում իրականացնելիս դասալսողը դիտարկում է նյութի համապատասխանությունը, դասավանդողի խոսքի մշակույթի առկայությունը և հարցադրումների ժամանակ բարյացակամության դրսևորումը, նյութի մատուցման պարզությունը, հետևողական և տրամաբանական շարադրումը, տրամաբանական կապը դասի նախորդ և հաջորդ թեմաների հետ, ուսանողների ինքնուրույն, ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացման խթանումը և այլն: Դասալսումներ կարող են իրականացնել ամբիոնի վարիչները, պրոֆեսորները, մենթորները և այլն: Դասալսման արդյունքները քննարկվում են սեկցիաներում, ամբիոններում: Բանավոր մակարդակում առաջարկություններ են արվում, արդյունքում կարող են փոխվել դասավանդման մեթոդները, առաջադրանքները, տրամադրվող գրականության ցանկը:

[13] Նախադասությունը խմբագրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկումների արդյունքում:

Պետք է նշել, որ ՊԴ կազմի արդյունավետության գնահատման բաղադրիչ չի դիտարկվում նրանց կողմից ստեղծված գիտական արդյունքը:

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

ԲՊՀ-ն 2022թ. վերջին հաստատել է «ՊԴ կազմի վերապատրաստումների իրականացման կարգը», համաձայն որի դասախոսական կազմը 5 տարին մեկ պարտավորվում է վերապատրաստվել, որի ընդհանուր ժամաքանակը պետք է կազմի 72 ժամ (18 կրեդիտ): ՄՈՒՀ-ում գործում է Համալսարանական շարունակական կրթության բաժին (ՀՇԿ), որը ՊԴ կազմի կատարելագործման նպատակով կազմակերպում է տարբեր ներքին վերապատրաստումներ: 2021-2022 ուստարվա ընթացքում կառույցի կողմից վերապատրաստվել է ՊԴ կազմի 93 ներկայացուցիչ, իսկ 2022-2023 ուստարում՝ 74: Վերապատրաստման թեմաները եղել են հետևյալը՝ որակի ապահովում, միջազգայնացում, մանկավարժական մեթոդներ և այլն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերապատրաստողները եղել են ԲՊՀ-ի տվյալ բաժինների ղեկավարները և մասնագետները: ՈԱ կենտրոնի կողմից վերապատրաստումների արդյունավետության գնահատման հարցումները ցույց են տվել, որ վերապատրասվածների 84%-ը գոհ են եղել վերապատրաստումներից:[14] Իսկ ինչ վերաբերում է արտաքին վերապատրաստումներին, ապա փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս ուղղությամբ ՄՈՒՀ-ի կողմից հետևողականորեն քայլեր չեն ձեռնարկվում: Ֆինանսական միջոցներ չեն ներդրվում ոլորտի լավագույն մասնագետներին հրավիրելու համար: Կան ամբիոններ, որոնք առավել շահեկան վիճակում են գտնվում և իրենց ունեցած արտաքին կապերի և միջազգային ծրագրերի շրջանակներում հնարավորություն են ստանում վերապատրաստվել նաև արտերկրում, օրինակ՝ Ռոմանական լեզուների ամբիոնը, Գերմաներենի ամբիոնը: Պետք է նշել, որ նմանատիպ վերապատրաստումների տեսանկյունից ամբիոնները նույն դիրքավորումը և հնարավորությունները չունեն: Բացի այդ, վերապատրաստումները տեղի չեն ունեում բացահայտված կարիքի հիման վրա:

Ըստ ինքնավերլուծության՝ ԲՊՀ-ի ՊԴ, վարչական և ՈՒՕ կազմերը ակտիվորեն մասնակցել են 1000-ից ավել մասնագիտական տարբեր միջոցառումների, գիտաժողովների և սեմինարների, ներկայացրել են զեկուցումներ, հանդես են եկել դասախոսություններով ազգային և միջազգային մակարդակներում:

Կազմակերպվում են տարբեր միջոցառումներ, սակայն այդ միջոցառումների մեծաքանակության մեջ քիչ են գիտական միջոցառումները, որոնց արդյունքները տպագրվում են բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում:

5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

Ըստ ԲՊՀ-ի տրամադրած տվյալների՝ ուսանողների աճով պայմանավորված վերջին երեք տարվա ընթացքում դասախոսական անձնակազմը ավելացել է 92-ով: Ինչպես նշում է ՄՈՒՀ-ն իր

[14] Նախադասությունը խմբագրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկումների արդյունքում:

ինքնավերլուծությամբ, այս տարիներին կարևորություն է տրվել գործնական դաշտից մասնագետների ներգրավմանը՝ նպատակ ունենալով ամրապնդել աշխատաշուկա-բուհ հաղորդակցումը: Վերջին տարիներին նկատելի է դասախոսական կազմի երիտասարդացման դինամիկա, դասախոսական կազմի միջին տարիքը 47-ն է: Պետք է նշել, որ երիտասարդ դասախոսների մեծ մասը չունեն գիտական կոչում և աստիճան, ՄՈՒՀ-ը այս բացը փորձում է լրացնել հրավիրյալ մասնագետների միջոցով: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ԲՊՀ-ի ղեկավար անձնակազմի համար խնդիր է դիտարկվում երիտասարդ դասախոսների գիտական աստիճան և կոչում ձեռք բերելու ոչ մեծ ցանկությունը, որը պայմանավորված է նաև ՊԴ կազմի գերբեռնվածությամբ:

Ինչպես նշում է ՄՈՒՀ-ն իր ինքնավերլուծությունում, մասնագիտական բարձր որակներ ունեցող երիտասարդ կադրերի ներգրավմանը խոչընդոտում է ՊԴ կազմի ցածր վարձատրությունը, որը նաև չի խրախուսում երիտասարդներին ձեռք բերելու գիտական կոչում և աստիճան:

Անձնակազմի կառավարման և զարգացման վարչությունը մշակել է բազա, որտեղ ներառված են ԲՊՀ-ում աշխատած և աշխատող բոլոր մասնագետների տվյալները: Բազայում առկա են բազմաքանակ դասախոսների տվյալներ:

Պետք է նաև նշել, որ ՄՈՒՀ-ում ՊԴ կազմին տրամադրվող վճարները ցածր են, այս հանգամանքը ԲՊՀ-ն նույնպես ռիսկային է համարում ՊԴ կազմի հոսունության համար, չնայած նրան, որ աշխատավարձերին տրամադրվող ֆոնդը վերջին տարիներին միջինում10%-ով աճել է:

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ԲՊՀ-ում մշակված է ՊԴ կազմի տարակարգերի պաշտոններին հավակնող թեկնածուներին ներկայացվող պահանջներ, ՄՈՒՀ-ում գործում են հետևյալ տարրակարգերը՝ դասախոս, ավագ դասախոս, դոցենտ և պրոֆեսոր: Թեև փորձագիտական այցին նշվեց, որ ՊԴ կազմի որակավորման բարձրացմանը խթանելու համար սահմանված է աշխատավարձերի տարանջատում, ինչպես նաև բեռնվածության նորմերի տարբերություններ, այնուամենայնիվ ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ տարբերակված աշխատավարձերը միմյանիցից էականորեն չեն տարբերվում:

ԲՊՀ-ում ներդրված են գիտությամբ զբաղվելուն միտված խրախուսման որոշ մեխանիզմներ, մասնավորապես ՄՈՒՀ-ի աշխատակիցների գիտահետազոտական արդյունքների հրատարակման համար տրամադրվում են լրավճարներ, պետք է փաստել, որ խոսքը բավականին փոքր գումարների մասին է: Միջազգային շտեմարաններում ընդգրկված և ազդեցության գործակից ունեցող միջազգային պարբերականներում («Web of Science», «Scopus») տպագրվելու համար ՄՈՒՀ-ը տրամադրում է 30.000 դրամ, արտասահմանյան բուհերի կամ գիտահետազոտական ինստիտուտների և կենտրոնների գիտական պարբերականներում տպագրվելու համար՝ 15. 000 դրամ, իսկ ՀՀ ԲՈԿ-ի կողմից երաշխավորված հայաստանյան պարբերականներում հոդված տպագրելու համար՝ 10.000 դրամ լրավճար:

Ըստ ինքնավերլուծության՝ ԲՊՀ-ում կատարվում են նաև մենթորական աշխատանքներ, 5 նորանշանակ դասախոսի բաժին է ընկնում 1 մենթոր: Մենթորության համակարգի կանոնակարգման և բարելավման անհրաժեշտության մասին նշում է նաև ՄՈՒՀ-ը իր ինքնավերլուծության մեջ:

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

ԲՊՀ աշխատակազմը բաղկացած է չորս հիմնական ենթախմբերից՝ վարչական, ՊԴ և ՈՒՀ, սպասարկող/տեխնիկական կազմեր: Ըստ ինքնավերլուծության՝ վարչական և ՈՒՀ կազմերի գերծանրաբեռնվածությունը դժվարացնում է կատարողականի արդյունավետության բարձրացումը: ԲՊՀ-ն դեռևս չի գնահատել եղած վարչական և ՈՒՀ կազմերի աշխատանքի արդյունավետությունը՝ գործող ռազմավարական ծրագրի և կառուցվածքի իրականացման տեսանկյունից: Անհրաժեշտ է միայն արձանագրել, որ որոշ վարչական կարևոր պաշտոններ թափուր են, օրինակ՝ գիտության բաժինը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ որակյալ և մրցունակ կադրերի ներգրավման նպատակով ԲՊՀ-ում ներդրվել է պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության մրցութային կարգը: Միևնույն ժամանակ խումբը նշում է, որ անհրաժեշտություն կա գնահատելու ներդրված կարգի արդյունավետությունը՝ հասկանալու համար, թե այն որքանով է թույլ տալիս ներգրավելու մասնագիտական բարձր որակներ ունեցող անձնակազմ:

Հատկանշական է, որ համալսարանում առկա է ՊԴ կազմի բազմազանություն, վերջին տարիներին նկատելի են պրակտիկ ոլորտի մասնագետների ներգրավում, որը կարող է նպաստել ուսանողների գործնական կարողությունների զարգացմանը: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, գիտնականների և գիտության դոկտորների առավել շատ ներգրավումը կարող է բարձրացնել ԲՊՀ-ի հետազոտական կարողությունները, նպաստել համալսարանի ակադեմիական հեղինակությանը և գիտության ոլորտում ամբիոնների համազոր զարգացմանը, նամանավանդ այն պարագայում, երբ գիտությունը և հետազոտությունը համալսարանի առաջնահերթություններից է:

Գովելի է, որ համալսարանում դասավանդում են նաև օտարերկրացի լեզվակիր դասախոսներ, որը նպաստում է ուսանողների լեզվական կարողությունների և տվյալ երկրի մշակութային առանձնահատկությունների փոխանցմանը՝ նպաստելով ուսանողների լեզվամտածողության զարգացմանը: Փորձագիտական խումբը խրախուսում է օտարազգի լեզվակիր դասախոսների ներգրավումը լեզու դասավանդող բոլոր ամբիոններում:

Չնայած նրան, որ նախորդ հավատարմագրման արդյունքում ԲՊՀ-ին տրամադրվել է խորհրդատվություն դասընթացների իրականացման համար սահմանել ՊԴ կազմին ներկայացվող պահանջներ, այնուամենայնիվ խորհրդատվությունը լիարժեքորեն չի իրականացվել: Փորձագիտական խումբը ևս մեկ անգամ շեշտադրում է, որ այդ պահանջների առկայությունը կնպաստի առավել որակյալ և կարողունակ մասնագետների ներգրավմանը, օրինակ՝ օտար լեզու դասավանդելու համար լեզվի իմացության մակարդակը գնահատող (C1 կամ C2) միջազգային հավաստագրի առկայությունը:

Դրական է, որ դասախոսական անձնակազմի համար մշակվել են պաշտոնի անձնագրեր, որոնք որոշակիորեն նպաստել են դերերի և պարտականությունների հստակեցմանը:

Համալսարանը վերամշակում է «ՊԴ կազմի կատարողականի գնահատման կարգը», այս տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է ՊԴ կազմի գնահատման բազմագործոն մոտեցումը՝ կարևորելով դասավանդման արդյունավետությունը, մասնագիտական կարողությունները և փորձառությունը, ուսանողի առաջընթացի ապահովումը, նորարարությունների իրականացումը, գիտական արդյունքը և այլն: Այս բոլոր գործոնները համապարփակ ձևով գնահատելու համար անհրաժեշտ կլինեն ներդնելու նոր մեխանիզմներ, որոնք առավելագույնս կապահովեն հավասարություն և թափանցիկություն, միայն այդ պարագայում գնահատման գործընթացը ՊԴ կազմի համար կդիտարկվի հուսալի և արդյունավետ:

Բացի գնահատման գործընթացից, կարևոր է նաև արժևորման գործընթացը, համալսարանն անհրաժեշտություն ունի վերանայելու ունեցած խրախուսման մեխանիզմները՝ դրանք դարձնելով առավել գրավիչ ՊԴ կազմի համար։

Դրական է, որ ՊԴ կազմի կատարելագործման նպատակով ԲՊՀ-ն ձեռնամուխ է եղել իրականացնելու ներքին վերապատրաստումներ։ Փորձագիտական խումբը կարևորում է կարիքների վերհանումը, որոնք կնպաստեն վերապատրաստումների առավել թիրախային և արդյունավետ լինելուն[15]։ Իսկ ինչ վերաբերում է մասնագիտական վերապատրաստումներին, ապա գովելի է, որ որոշ ամբիոններ դասախոսական կազմի համար ստեղծում են հնարավորություններ վերապատրաստվելու ոչ միայն տեղական մակարդակում, այլև՝ արտերկրում, սակայն այդ հնարավորությունները հավասար չեն բոլորի համար, որը կարող է հանգեցնել ՊԴ կազմի ոչ հավասարաչափ զարգացմանը։

Դրական է, որ ԲՊՀ-ում որոշակիորեն ներդրված է մենթորության համակարգ, վերջինիս կայացումը կնպաստի նոր ընդունված մեծաքանակ դասախոսական կազմի լիարժեք ինտեգրմանը և նրանց կողմից համալսարանի ունեցած քաղաքականությունների որդեգրմանը։

Դրական է, որ ՊԴ կազմը համեմատաբար կայուն է, չնայած նրան, որ համատեղող դասախոսները բավականին շատ են։ Որոշակիորեն խնդրահարույց է դասախոսական կազմի աշխատավարձերի ցածր լինելը, որը բերում է ՊԴ կազմի հոսունությանը։ ԲՊՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԲՊՀ-ում գործում է ՊԴ և ՈւՕ կազմերի ընտրության հստակ քաղաքականություն և ընթացակարգեր, ՊԴ կազմը բազմազան է, ներգրավված են ինչպես պրակտիկ ոլորտի ներկայացուցիչներ, այնպես էլ գիտության թեկնածուներ և դոկտորներ, առկա են օտարազգի լեզվակիր դասախոսներ, որոշակիորեն ներդրված են ՊԴ կազմի գնահատման մեխանիզմներ, առկա է ՊԴ կազմի զարգացման և կատարելագործման միջավայր, քայլեր է իրականացնում ՊԴ կազմի կայունության ապահովման ուղղությամբ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԲՊՀ-ն բավարարում է Չափանիշ 5-ի պահանջներին։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԲՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

[15] Նախադասությունը խմբագրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկումների արդյունքում։

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

ԲՊՀ 2019-2023թթ. ՌԾ 2-րդ նպատակը նվիրված է ՄՈՒՀ-ի գիտահետազոտական գործունեությանը: Այս ոլորտում ԲՊՀ նպատակներն են՝

- Մշակել եւ ներդնել ԲՊՀ գիտահետազոտական գործունեությունը խթանող նորարարական մեխանիզմներ, տեխնոլոգիաներ ու մեթոդներ՝ արդյունավետորեն օգտագործելով բուհի գիտահետազոտական և նորարարական ներուժը, նպաստելով սովորողների գիտական և նորարարական ակտիվության ու ստեղծագործական նախաձեռնությունների և ազգային մակարդակում գիտելիքահենք տնտեսության զարգացմանը:
- Մշակել ԲՊՀ գիտահետազոտական գործունեության գերակա ուղղությունների, նպատակների, խնդիրների և դրանց լուծմանն ուղղված միջոցառումների համալիր ծրագիր՝ միտված ԲՊՀ գիտակրթական գործունեության զարգացմանը ու օտարերկրյա մրցունակ համալսարանների գիտահետազոտական գործունեության հետ համադրելիության և մրցունակության ապահովմանը:
- Ապահովել ԲՊՀ գիտահետազոտական գործունեության միջազգայնացումը և միջազգային գիտակրթական համագործակցության համակողմանի զարգացումը
- Բարձրացնել ԲՊՀ հիմնարար և կիրառական հետազոտությունները կրթական գործընթացում ներդնելու գործընթացի արդյունավետությունը:

ՌԾ պլան ժամանակացույցում առանձնացված են ՌԾ նպատակներին հասնելու 5 խնդիրներ, որոնց համար առանձնացված են 13 գործողություններ, բոլոր գործողությունների համար որպես կատարման ավարտ նշված է 2023թ.: Բոլոր գործողությունների համար մշակված են նաև գործողությունների արդյունքներ: Պետք է նշել, որ դրանք բոլորն էլ հիմնականում ընդհանրական են, օրինակ՝ ՌԾ խնդիր 1 գործողություն 4-ի համար, այն է՝ «Մեծացնել ազգային և միջազգային շտեմարաններում ընդգրկված հանդեսներում ԲՊՀ ՊԴ կազմի կողմից հրապարակվող հոդվածների թվաքանակը» որպես արդյունք նշվում է «Ազգային և միջազգային շտեմարաններում ընդգրկված հանդեսներում ԲՊՀ ՊԴ կազմի կողմից հրապարակված հոդվածների թվաքանակի աճ»: Պարզ չէ, թե քանի տոկոս աճ է նախատեսում ՄՈՒՀ-ը՝ ըստ տարիների: Առկա չեն հստակ չափելի արդյունքներ:

Ըստ ինքնավերլուծության՝ գիտական գործունեության հիմնական ուղղություններին համապատասխան ամբիոնները և ԳՈՒԿ-երը մշակել և իրականացրել են իրենց քաղաքականությունը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որպես այդպիսին նման քաղաքականություններ ամբիոններում առկա չեն:

ԲՊՀ 2019-2023 թթ. ՌԾ-ի գործողությունների պլանում ներկայացված են բուհի գիտահետազոտական 8 հիմնական ուղղությունները՝ լեզվաբանություն, հայրենագիտություն, բանասիրություն/գրականագիտություն, մանկավարժություն և օտար լեզուների դասավանդման մեթոդիկա, կառավարում, քաղաքագիտություն, տուրիզմ: Հիմնական ուղղությունների համար առանձնացված են 53 հարակից միջգիտակարգային ուղղություններ: Փորձագիտական այցի ընթացքում գիտության բաժնի ղեկավարի հաստիքը թափուր է եղել և հնարավոր չի եղել պարզել,

թե ինչպես են ընտրվել վերը նշված ուղղությունները: Ըստ ինքնավերլուծության՝ գիտական գործունեության զարգացման նպատակով ԲՊՀ ամբիոններն ու ԳՈՒԿ-երն ակտիվ փոխհամագործակցում են: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հիմնականում առկա չեն համատեղ գիտական նախագծեր, միջամբիոնային համագործակցության արդյունքում առկա չեն միջոլորտային գեներացված գիտական հոդվածներ:

2021թ. համեմատ 2022թ. գիտական գործունեության համար նախատեսված բյուջեն ավելացել է՝ 6 մլն դրամից կազմելով 14 մլն: Բյուջեի ավելացումը մեծապես կապված է ներքին դրամաշնորհային ծրագրերի ներդրմամբ:

6.2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

2019-23թթ. ՌԾ-ի «Գիտահետազոտական գործունեություն» բաժնում որպես ռազմավարական նպատակների իրականացման նախանշվող վերջնարդյունք ակնկալվում է, «Մշակել ԲՊՀ գիտահետազոտական գործունեության գերակա ուղղությունների, նպատակների, խնդիրների և դրանց լուծմանն ուղղված միջոցառումների համալիր ծրագիր»: Փաստացի նման համալիր ծրագիր չի մշակվել:

Ըստ ինքնավերլուծության՝ հետազոտական ոլորտում ԲՊՀ երկարաժամկետ և միջնաժամկետ հետաքրքրություններն արտահայտված են 2019-2023 թթ. ռազմավարական ծրագրում և գործողությունների պլանում, իսկ կարճաժամկետ հետաքրքրություններն ու դրանց իրականացման ժամկետները սահմանվում են ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր տարվա գործունեության ծրագրով: Տարեկան պլանների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ամբիոնների և գիտաուսումնական կենտրոնների վրա դրված չէ հստակ պահանջ, թե յուրաքանչյուր ամբիոն ինչպիսի գիտական արտադրանք պետք է ապահովի՝ պայմանավորված իր գիտական ներուժով և աշխատակիցների քանակով: ԲՊՀ գործունեության տարեկան պլաններում նշված է՝ ապահովել ԲՊՀ-ի գիտական հանդեսների հրատարակությունների համապատասխանությունը ՀՀ ԲՈԿ-ի և միջազգային շտեմարանների չափանիշներին ու պահանջներին, սակայն պարզ չեն պատասխանատուները և ՄՈՒՀ-ի ակնկալվող արդյունքները:

ԲՊՀ-ում առկա են կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հետազոտական որոշ ծրագրեր: Կարճաժամկետ հետազոտական ծրագրերն ունեն մեկ տարվա տևողություն՝ ինչպիսիսն է, օրինակ՝ «ԲՊՀ-ում սովորող ապագա մանկավարժների պրոֆեսիոնալ կիրառական ֆիզիկական պատրաստության գործընթացի կատարելագործման մեթոդիկայի հետազոտությունը», միջնաժամկետ ծրագրերն ունեն մոտ 2-4 տարվա տևողություն, իսկ երկարաժամկետներն ունեցել են մինչև 9 տարվա տևողություն: Անհրաժեշտ է նշել, որ 2018թ.-ից մինչ օրս ԲՊՀ-ում գործել և գործում է 18 գիտահետազոտական ծրագիր:

ԲՊՀ-ում գիտական գործունեության աշխատանքները համակարգվում է Գիտության բաժնի կողմից, որի ղեկավարի պաշտոնը 2023թ. հունիս ամսից թափուր է:

6.3 ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

Նախորդ հավատարամագրման գործընթացի շրջանակներում փորձագիտական խումբը ՄՈՒՀ-ին խորհրդատվությունն է տրամադրել իրականացնել հետազոտությունների արդյունավետության համապարփակ վերլուծություն ըստ բուհի հետազոտական

գերակայությունների՝ նախանշելով տիրույթի բարելավմանը միտված գործընթացները: Ըստ բարելավման պլանի՝ վերլուծությունը պետք է իրականացվի 2020-2023թթ. ընթացում, պետք է նշել, որ նշված վերլուծության սկսված լիելու վերաբերյալ տեղեկավություն առկա չէ:

Նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների արդյունքում, ՄՈՒՀ-ը ՊԴ կազմի խրախուսման նպատակով 2021 թ. ներդրվել է հավելավճարների տարբերակված համակարգ ՀՀ և արտասահմանյան գիտական հանդեսներում հրապարակումներ ունեցող ՊԴ կազմի համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տրամադրվող հավելավճարները մյուս բուհերի համեմատ ցածր են և գրավիչ չեն ՊԴ կազմի համար:

Ըստ ինքնավերլուծության՝ ՊԴ կազմը վերջին 3 տարիների ընթացքում մասնակցել է ավելի քան 796 գիտաժողովների, կոնֆերանսների, սեմինարների, վերապատրաստումների և գիտակրթական այլ միջոցառումների: Պետք է նշել, որ հստակ չէ, թե այդ միջոցառումները որքանով են տեղայնացվում երկարաժամկետ ռազմավարության և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերի համատեքստում: ՊԴ կազմին խրախուսելու նպատակով վերջին տարիներին ԲՊՀ-ն ֆինանսավորում է «Բանբեր» գիտական հանդեսներում տպագրությունները:

2021թ. ՄՈՒՀ-ում ներդրվել են ներքին դրամաշնորհային ծրագրեր, վերջինիս դիմել են 11 ծրագրով, 11-ն էլ ֆինանսավորվել են: Ներհամալսարանական դրամաշնորհային ծրագրերն իրականացվում են հետևյալ թեմաներով՝ «Քարանձավային տուրիզմի զարգացման հիմնախնդիրները և հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում», «ՀՀ-ում ապագա մանկավարժների մեդիակրթության իրականացման ուղիները», «Թարգմանվածքի, որպես թարգմանական խոսույթի, նշանագիտական առանձնահատկությունները՝ գրական աղբյուրի սոցիալ-մշակութային նշանների ապակոդավորման համատեքստում», «Զանգվածային ոճրագործությունների կանխարգելման խոչընդոտներն ու հնարավորությունները ՀՀ ազգային անվտանգության ապահովման համատեքստում» և այլն: Անհրաժեշտ է նկատել, որ դրամաշնորհային ծրագրերում հիմնականում բացակայում են միջգիտակարգային թեմաները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, դրամաշնորհային ծրագրերի ավարտին տպագրվում են գիտական հոդվածներ/աշխատանքներ, որոնց գիտական արժեքը որոշվում է տվյալ հանդեսի խմբագրական խորհրդի կողմից, դրամաշնորհների իրականացման արդյունավետության գնահատման այլ մեխանիզմներ ԲՊՀ-ում ներդրված չեն: Ներդրված ներքին դրամաշնորհային ծրագրերը ՄՈՒՀ-ի համար չեն դիտարկվում որպես հավելյալ ֆինանսական միջոցների ձեռքբերման հնարավորություն:

Ըստ ԲՊՀ-ի ինքնավերլուծության՝ 2018-2022թթ. ՊԴ կազմի կողմից հրատարակվել են 914 գիտական և ուսումնամեթոդական տարբեր աշխատություններ, որից 24-ը՝ մենագրություն, 811-ը՝ գիտական հոդված, այդ թվում՝ «Web of Science», «Scopus», «РИНЦ» և ազդեցության բարձր գործակից ունեցող այլ շտեմարաններում ընդգրկված հանդեսներում: Միջազգային ամսագրերում հրատարակվել է ընդհանուր առմամբ 35 գիտական հոդված: Ըստ ՄՈՒՀ-ի տվյալների՝ հոդվածների տպագրման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2022թ., ՊԴ կազմի կողմից տպագրվել է 190 հոդված, եթե դիտարկենք, որ ԲՊՀ-ում ՊԴ կազմը բաղկացած է 453 անդամից, ապա ստացվում է, ՊԴ կազմի առավելագույնը 42%-ն է զբաղվում հետազոտություններով: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ ՄՈՒՀ-ը չի վերլուծել, թե հետազոտություններով զբաղվում են նույն անձիք, թե ոչ, կամ որ ԳՈՒԿ-երը կամ ամբիոններն են առավել ակտիվ հետազոտական աշխատանքներում:

ԲՊՀ 3 պարբերականներ՝ «Բանբեր», «Հայկական քաղաքագիտական» և «Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրներ», ընդգրկված են ՀՀ ԲՈԿ-ի համար ընդունելի պարբերական

գիտական հրատարակությունների ցուցնկում: ՊԴ կազմին խրախուսելու նպատակով ԲՊՀ-ն վերջին տարիներին ֆինանսավորում է ՊԴ կազմի տպագրական աշխատանքները «Բանբեր» պարբերականում:

2019-2021 թթ. ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվել են գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման 3 ծրագիր և պայմանագրային թեմատիկ ֆինանսավորման գիտական 1 թեմա: 2022 թ. ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվում է միայն «Բուհի ուսանողների ֆիզիկական դաստիարակության գործընթացի կատարելագործման ուղիները» գիտական թեման:

6.4 ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

ԲՊՀ-ն իր հետազոտական գործունեության միջազգայնացման կարևորությունը տեսնում է 2019-2023թթ. ռազմավարական ծրագրում՝ «Ապահովել ԲՊՀ գիտահետազոտական գործունեության միջազգայնացումը և միջազգային գիտակրթական համագործակցության համակողմանի զարգացումը»:

Ըստ ԲՊՀ տվյալների՝ ՊԴ կազմի կողմից ազդեցության բարձր գործակից ունեցող միջազգային շտեմարաններում («Scopus», «Web of Science»), 2022թ. հրատարակվել է 7 գիտական հոդված, 2021թ.՝ 5, 2020 թ.՝ 9, իսկ 2019 թ.՝ 4: Բարձր վարկանիշ ունեցող գիտական այլ հետազոտական ժողովածուներում (Springer) 2021թ. հրապարակվել է 2 հետազոտություն և 1 վերլուծություն (Freedom House), իսկ 2022 թ. 11 գիտական հոդված: Ինչպես նշում է ԲՊՀ-ն իր ինքնավերլուծությունում, ազդեցության բարձր գործակից ունեցող միջազգային շտեմարաններում ընդգրկված ամսագրերում հրատարակումների թվային ցուցանիշների բարձրացման առումով ՄՈՒՀ-ը դեռևս բարելավման աշխատանքներ է իրականացնում:

ԲՊՀ «Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրները» հանդեսը ընդգրկված է ՌԴ ՌԻՆՑ (РИНЦ) շտեմարանում:

ԲՊՀ Միջգիտակարգային ուսումնասիրությունների կենտրոնը միջազգային հանդեսներում տպագրությունների աճին նպաստելու նպատակով 2021-2022 թթ. ԲՊՀ ասպիրանտների և հայցորդների համար կազմակերպել է տեղեկատվական սեմինարներ՝ «Ինչպե՞ս տպագրել հոդված միջազգային գիտական հանդեսներում» խորագրով: ՄՈՒՀ-ի կողմից սեմինարների ազդեցությունը տպագրությունների ավելացման վրա չի գնահատվել:

Ըստ ինքնավերլուծության՝ վերջին տարիներին ԲՊՀ-ն կազմակերպել է միջազգային և հանրապետական 210 գիտակրթական միջոցառում, պետք է նշել, որ առկա չեն վերլուծություններ, թե այս միջոցառումները ինչպես են նպաստել գիտության միջազգայնացմանը:

6.5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

ԲՊՀ-ն իր հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության անհրաժեշտությունը շեշտադրում է 2019-23թթ. ՌԾ-ով, որով որպես նպատակ սահմանվում է «Բարձրացնել ԲՊՀ հիմնարար և կիրառական հետազոտությունները կրթական գործընթացում ներդնելու գործընթացի արդյունավետությունը»:

Ուսանողների ուսումնառության ընթացում հետազոտական բաղադրիչն արտահայտվում է ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի, ինքնուրույն հետազոտական աշխատանքների իրականացմամբ և ներքին դրամաշնորհային ծրագրերին մասնակցությամբ,

պետք է նշել, որ վեջինիս պարագայում ծրագրերին մասնակցել է միայն 11 ուսանող։ Մագիստրոսական որոշ ծրագրերում ներդրվել է «Հետազոտության մեթոդներ» դասընթացը, որի նպատակը ուսանողների հետազոտական կարողությունների զարգացումն է։

Հետազոտական գործունեության մեխանիզմ է նաև համարվում ՊԴ կազմի կողմից իրականացված հետազոտությունների, գիտական հոդվածների կիրառումը ուսումնառության ընթացքում որպես ուսումնառության նյութ։

Դատողություններ: Դրական է, որ ԲՊՀ-ն 2019-2023 թթ. ՌԾ-ում արտահայտել է իր գիտահետազոտական հավակնությունները, որի իրականացման համար առանձնացվել են խնդիրներ, գործողություններ և վերջնարդյունքներ, այնուամենայնիիվ սահմանված վերջնարդյունքների ընդհանրական լինելը հնարավորություն չի ընձեռում գնահատելու ձեռք բերված արդյունքների բավարար կամ ոչ բավարար լինելը։ Հետզոտության ոլորտում հստակ ցուցիչների ներդրումը հնարավորություն կընձեռի առավել տեսանելի դարձնել ԲՊՀ-ի գրանցած առաջընթացը։ Իսկ ինչ վերաբերում է բոլոր արդյունքների համար մինչև վերջնաժամկետ 2023թ. սահմանելը, փորձագիտական խումբը նշում է, որ դա կարող է ռիսկային լինել կատարողականի ապահովման տեսանկյունից։

Դրական է, որ վերջին ժամանակահատվածում ավելացել է գիտությանն ուղղված ֆինանսական միջոցները, որը նպաստել է նաև ներքին դրամշնորհային ծրագրերի իրականացմանը, այնուամենայնիվ փորձագիտական խումբը նշում է, որ դեռևս տեսանելի չեն դրամաշնորհային ծրագրերի գիտական արդյունքները և դրանց ազդեցությունը ոլորտի զարգացման համար, առավել նպատակային կլիներ, եթե առավել մանրամասն պլանավորվեր, թե դրամաշնորհային ծրագրերի որակական արդյունքները ինչպես են գնահատվելու և ինչպես են հետագայում կիրառվելու համալսարանին նոր հնարավորություններ ապահովելու տեսանկյունից, որը կարդարացնի նաև իրականացված ներդրումները։

Թեև ԲՊՀ-ում գործող գիտահետազոտական աշխատանքները խրախուսելու և ՊԴ կազմին այդ հետազոտություններում ընդգրկելու համար սահմանվել են որոշակի ընթացակարգեր և մեխանիզմներ, այնուամենայնիվ դրանք դեռևս բավարար չեն անհրաժեշտ արդյունքի հասնելու համար։ Գիտական աշխատանք իրականացնելը և գիտական արժեք ստեղծելը դեռևս ԲՊՀ ՊԴ կազմի համար հրապուրիչ և շահավետ չի դիտարկվում, որը կարող է խոչընդոտել համալսարում գիտական մտքի զարգացմանը։

Դրական է, որ համալսարանի որոշ դասախոսներ զբաղվում են գիտական հետազոտություններով, այնուամենայնիվ համալսարանի մակարդակով շատ քիչ դասախոսներ են տպագրվում միջազգային բարձր ինդեքսավորում ունեցող հանդեսներում, որը կարող է խոչընդոտել հետազոտությունների միջազգայնացմանը։ Փորձագիտական խումբը նշում է, որ ԲՊՀ-ի կարևոր ուժեղ կողմերից մեկը ՊԴ կազմի լեզուների իմացությունն է, որն առավել մեծ հնարավորություն է ընձեռում միջազգային հայտնի պարբերականներում տպագրվելու համար, փորձագիտական խումբը կարևորում է նաև բուհի քաղաքականությունն աջակցելու դասախոսներին միջազգային պարբերականներում տպագրվելու գործում։

Փորձագիտական խումբը նշում է, որ ԲՊՀ-ի կողմից խորքային գիտական ներուժի և իրականացված հետազոտության որակի գնահատման և խորքային վերլուծության իրականացումը կնպաստի ոլորտի մասին իրավիճակի դուրսբերմանը և, ըստ դրա, արդյունավետ պլանավորմանը։ Կարևոր է նաև մշակել հետազոտությունների արդյունավետության գնահատման որակական ցուցանիշներ, որը կնպաստի ոչ միայն հետազոտական

աշխատանքների քանակական աճին, այլև՝ որակի ապահովմանը: Իսկ միջամբիոնային հետազոտությունների իրականացումը կնպաստի միջոլորտային հետազոտությունների զարգացմանը, ամբիոնների հավասարաչափ զարգացմանը և դասախոսական կազմի համագործակցության ապահովմանը:

Հետազոտական աշխատանքներ իրականացնելու ուսանողների ցածր մասնակցությունը և դասախոսական կազմի մոտիվացիայի պակասը հետազոտական աշխատանք իրականացնելու կարող են վտանգել ուսումնառողների հետազոտական կարողությունների ու հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԲՊՀ ամբիոններում և ԳՈՒԿ-երում առկա չեն միջնաժակետ և կարճաժամկետ ծրագրեր, սահմանված չեն հետազոտության ոլորտում արդյունքների գնահատման չափելի ցուցիչներ, ներդրված չեն ներքին դրամաշնորհային ծրագրերի արդյունավետության գնահատման մեխանիզմներ, ՊԴ և ուսանողական համակազմերը մոտիվացված չեն հետազոտական աշխատանք իրականացնելուն, հետազոտական աշխատանքներում ՊԴ կազմին խրախուսելու և ներգրավելու մեխանիզմներն արդյունավետորեն չեն գործում, գիտահետազոտական աշխատանքների միջազգայնացման ուղղությամբ տեսանելի չէ հստակ քաղաքականություն, փորձագիտական խումբը գտնում է, թույլ է արտահայտված հետազոտություն և ուսումնառություն կապը, փորձագիտական խումբը գտնում է, որ ԲՊՀ-ն չի բավարարում չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԲՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

Նախորդ հավատարմագրման փորձագիտական խումբը այս չափորոշիչի շրջանակներում տրամադրել է հետևյալ խորհրդատվությունը՝ իրականացնել յուրաքանչյուր կրթական ծրագրի արդյունավետ իրականացման և միջազգայնացման համար անհրաժեշտ ռեսուրսային ապահովվածության վերլուծություն: «ԵՊԼՀ թերությունների վերացման գործողությունների 2019թ. ծրագրում» համալսարանը պլանավորել է «վերլուծել ռեսուրսային ապահովվածությունը» և «ելնելով կարիքներից՝ ձեռք բերել նոր գույք»: Իսկ 2019-23թթ. ԲՊՀ ռազմավարական ծրագրում առանձնացվել են «գիտական գրադարան» և «ենթակառուցվածքների, շենքային պայմաններ և նյութատեխնիկական բազա» բաժինները, որոնց ռազմավարական նպատակները և համապատասխան գործողություններն ուղղված են եղել ուսումնական միջավայրի արդիականացմանը և բարելավմանը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԲՊՀ-ն հետևողական է եղել ՌԾ-ում սահմանված նպատակների իրակացման գործում: Վերանորոգվել են լսարանները և սանհանգույցները, տեխնիկապես վերազինվել են քսանից ավելի լսարաններ և կաբինետներ, ձեռք են բերվել համակարգիչներ և տեսասարքեր:

ԲՊՀ-ում առկա 8 մասնաշենքերից 6-ն օգտագործվում է ուսումնական նպատակներով: Փոքր մասնաշենքը հիմնականում ծառայում է հրավիրված դասախոսների համար որպես հյուրանոց-հանրակացարան: Ծաղկաձորի հանգստյան տան գործարկումը բուհը 2019թ. դիտարկել է որպես ռազմավարական խնդիր, սակայն հետագայում հանգստյան տան շահագործումը նպատակահարմար չի համարել:

Ուսումնական մակերեսների սղության և ընդունելության թվաքանակի աճի պայմաններում բուհը դասապրոցեսը կազմակերպում է երկհերթ, ինչը որոշակի խնդիրներ է առաջացնում ուսանողների համար: Ըստ դասախոսների՝ լսարանների սակավությամբ պայմանավորված հոսքերի և խմբերի բազմամարդությունը ազդում է դասավանդման և քննական գործընթացի կազմակերպման արդյունավետության վրա: Մյուս կողմից նույն պատճառով դասախոսները չունեն հանգստի տարածք և աշխատելու առանձին սենյակի հնարավորություն:

ԲՊՀ-ն ունի երկու մարզադահլիճ՝ մեկը գտնվում է համալսարանի տարածքում, իսկ մյուսը՝ Հովսեփ Էմին 123 հասցեում գտնվող մասնաշենքում: Երկուս մարզադահլիճներն էլ գործարկվում են, պետք է նշել, երկրորդը հեռավորության պատճառով որոշակի խնդիրներ է առաջացնում ուսանողների համար տեղափոխման տեսանկյունից: Մարզադահլիճներում առկա է անհրաժեշտ մարզական գույք, դրանց կից գործում են հանդերձարանները, որոնք փոքր են և չունեն սանհանգույցներ, լոգախցիկից կարող է օգտվել միայն դասախոսական կազմը: Դահլիճը և հանդերձարանները հիմնանորոգման կարիք ունեն:

Տարբեր դրամաշնորհային ծրագրերով (ԾԻԳ, Նորարարությունների հիմնադրամ, Համաշխարհային բանկ), հովանավորների և համագործակցող կազմակերպությունների միջոցներով վերանորոգվել են համալսարանի մեծ և փոքր դահլիճները, արաբերենի լսարանը, պարսկերենի, չինարենի, ռուսաց լեզվի և գրականության կաբինետները, ֆրանկոֆոնիայի և հունական կենտրոնները, համակարգչային քննական լսարանները և այլն: Դրանք կահավորվել են ժամանակակից տեխնիկայով, սակայն ՈԱ վերապատրաստումների ամփոփման հարցումների ժամանակ դասախոսները շարունակում են բուհի համար որպես թույլ կողմ նշել «բուհում տեխնիկապես հագեցած լսարանների և ՏՀՏ-ների սակավությունը», «մասնագիտական լաբորատորիաների սղությունը»:

Ընդլայնվել է մասնաշենքերի ուսումնական ու այլ տարածքների համացանցային անլար (WiFi) կապով ծածկույթը՝ 75 Մբիթ/վրկ արագագործությամբ, սակայն դասախոսական կազմը որպես թույլ կողմ դեռևս նշում է համացանցի սահմանափակ հասանելիությունը:

Համալսարանը համակարգային ձևով յուրաքանչյուր ՄԿԾ-ի համար չի վերլուծել անհրաժեշտ ուսումնական միջավայրի բավարարությունն ու արդյունավետությունը, միայն ամբիոնային ինքնավերլուծություններում առկա է առանձին կետ, որտեղ ամբիոնները ներկայացնում են ամբիոնի/ԳՈՒԿ-ի նյութատեխնիկական բազայի համալրումը. առկա ռեսուրսների և նյութատեխնիկական բազայի համալրմանն առնչվող տեղեկատվությունը, կարիքների վերլուծությունը, արտաքին միջոցների հաշվին ձեռքբերած ռեսուրսների մասին տեղեկատվությունը: Այս դրական մոտեցումը համալսարանի կողմից չի համակարգվել, քանի որ ոչ բոլոր ամբիոններն են իրականացնում ինքնավերլուծություններ, և համալսարանական մասշտաբով վերլուծությունների ամփոփում չի իրականացվել:

ԲՊՀ գրադարանն իրականացնում է ակտիվ գործունեություն: Այն Հայաստանի թվային գրադարանների ասոցիացիայի անդամ է: Ստորագրված համաձայնագրերի, միջազգային ծրագրերի և նախաձեռնությունների արդյունքում ԲՊՀ-ի աշխատակիցների համար ավելացել են հասանելի միջազգային գիտական շտեմարանները /2018թ.՝ 8, 2022թ.՝ արդեն 40/, որոնք հասանելի են ԲՊՀ պաշտոնական կայքում:

ԲՊՀ գրադարանային ֆոնդը 2021թ. դրությամբ կազմում է 185684 կտոր գիրք, որը ներառում է մեծածավալ օտարալեզու գրականություն: Օտարալեզու գրականության շարքում կարելի է առանձնացնել գերմաներենով գրականության մեծածավալ ֆոնդի առկայությունը /2021թ. հունիսի դրությամբ՝ 4213 անուն գիրք/, ինչը պայմանավորված է ԲՊՀ գրադարանի կազմում գործող Ավստրիական գրադարանով: Դասախոսները և ուսանողները նշում են, որ օտարալեզու գրականության շարքում սակավաթիվ է արևելյան /չինարեն, կորեերեն, պարսկերեն, արաբերեն և այլն/ լեզուներով գրականությունը: Ռեսուրսների պակասը մասամբ լրացվում է ամբիոններում և ԳՈՒԿ-երում, ինչպես նաև համապատասխան կենտրոններում («Կոնֆուցիուս» ինստիտուտ, կորեերենի, հոլանդերենի, իտալերենի, հունարենի, պարսկերենի, հնդկերենի, լեհերենի կենտրոններ) առկա գրականությամբ:

Ըստ ինքնավերլուծության տվյալների՝ 2019-2022 թթ. գրադարանի աշխատանքը բնութագրող քանակական ցուցանիշներում արձանագրված է դրական շարժ, բացի գրքերի քանակից, ինչը ոլորտի մասնագետները բացատրում են հին և չկիրառվող գրականության արխիվացմամբ: ԲՊՀ ամբիոնների և ԳՈՒԿ-երի հետ համագործակցությամբ գրադարանը կատարում է հարցում անհրաժեշտ գրքերի պահանջարկի վերաբերյալ՝ գրադարանի համալրման աշխատանքները կազմակերպելու նպատակով: Առաջարկվող ծառայությունների և առկա ռեսուրսների մասին ԲՊՀ ներքին շահակիցներին գրադարանը պարբերաբար տեղեկություն է տրամադրում համալսարանի ներքին ցանցով, պաշտոնական կայքում և սոցկայքերում:

Աշխատանքներ են տարվում նաև թվային պահոցի և գրադարանի զարգացման ուղղությամբ: ԲՊՀ գրադարանի համակարգչային սրահում անվճար հասանելի է Bookshare առցանց գրադարանը, որը տրամադրում է մոտ 10.000 էլեկտրոնային գրքերի անվճար հասանելիություն: Գրադարանը նաև թվայնացրել է մի շարք դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ՝ ներքին օգտագործման համար, որոնք նույնպես հասանելի են գրադարանի համակարգչային սրահում: Թվայնացվում են Վ. Բրյուսովյան գիտական կենտրոնի նյութերը. այդ գործընթացն ապահովում է նրա գրքային ֆոնդի պահպանումը, որը տեղ է գտնելու համալսարանական էլեկտրոնային պահոցում:

Ինքնավերլուծության մեջ բուհը նշում է, որ ներդրվել է առցանց պատվերների ծառայություն, որի շնորհիվ ընթերցողները մի քանի ժամվա ընթացքում սպասարկման բաժնից ստանում են պատասխան՝ պատվիրած գրականության առկայության մասին: Ներդրվել է գրադարանային ռեսուրսների կառավարման «ԿՈՀԱ» համակարգը: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողները հիմնականում գիրք պատվիրում են գրադարան այցելելով, իսկ առցանց համակարգից հազվադեպ են օգտվում: ՊԴ կազմը գրադարանից առավել քիչ է օգտվում, իսկ անհրաժեշտ գրականությունը և նյութերը ձեռք են բերում համացանցից:

Ըստ ԲՊՀ ուսանողների շրջանում իրականացված հարցումների արդյունքների՝ գրադարանի կողմից ցուցաբերած օժանդակությունից բավարարված է 51%-ը, իսկ առցանց պատվերի որակից՝ 55%-ը: Ըստ հարցումների արդյունքների՝ համալսարանը եկել է այն

եզրակացության, որ մասնագիտական հայերեն և օտար լեզվով գրականությունը մասմբ է բավարար կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար:

Ռեսուրսների ամբողջական գնահատման տեսակետից անհրաժեշտ է նշել, որ ԲՊՀ-ի տարածքում առկա չէ բուֆետ կամ ճաշարան, ուսանողները սնվում են համալսարանի տարածքից դուրս:

7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Նախորդ հավատարմագրման փորձագիտական խումբը այս չափորոշիչի շրջանակներում տրամադրել է հետևյալ խորհրդատվությունը՝ ֆինանսական ռեսուրսների բաշխումն իրականացնել բուհի ռազմավարական նպատակներին համահունչ, որին որպես արձագանք «ԵՊԼՀ թերությունների վերացման գործողությունների 2019թ. ծրագրում» համալսարանը պլանավորել էր յուրաքանչյուր ռազմավարական նպատակի համար նախահաշվի կազմում: Բացի այդ, ԲՊՀ 2019-23թթ. ռազմավարական ծրագրում առանձնացվել է «Ֆինանսական գործունեություն» բաժինը, որտեղ նախատեսված գործողությունները պետք է ապահովեին՝

- ԲՊՀ բարելավված ֆինանսական կայունություն, ընդլայնված և բազմազանեցված ֆինանսական հոսքեր,
- ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարման և նպատակային բաշխման մեխանիզմներ,
- նորարարությունների խթանման նպատակով ձևավորված ֆինանսավորման մեխանիզմներ:

Ինքնավերլուծության մեջ համալսարանը նշում է, որ կարողացել է բարելավել իր ֆինանսական կառավարման քաղաքականությունը՝ այն համապատասխանեցնելով ՌԾ-ով սահմանված գերակա նպատակներին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հաստատված ֆինանսական քաղաքականություն ԲՊՀ-ն դեռևս չունի: Ավելին, ԲՊՀ 2019-23թթ. ռազմավարական ծրագրում և տարեկան պլաններում առկա չէ տեղեկատվություն ռազմավարական նպատակների կամ խնդիրների իրականացման համար նախատեսվող ծախսերի մասին: Ֆինանսական միջոցների կառավարումն իրականացվում է մեկ տարվա համար եկամուտների և ծախսերի նախահաշվի/բյուջեի/ կազմման և հաշվետու տարվա ավարտին բյուջեի փաստացի կատարողականի վերլուծության միջոցով, իսկ այս փաստաթղթերը և բյուջեի հավելվածները կառուցված չեն ըստ ռազմավարական նպատակների:

Վերջին 3 տարիների բյուջեների և դրանց կատարողականի ուսումնասիրությունները ցույց են տալիս եկամուտների և ծախսերի դրական դինամիկա համալսարանի գործունեության ոլորտներում:

Բյուջեի մուտքերը ձևավորվում են պետական բյուջեից հատկացված գումարներից և ուսման վճարներից, ձեռնարկատիրական գործունեությունից, դրամաշնորհային ծրագրերից և Կոնֆուցիուսի ինստիտուտի մուտքերից: Պետական բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցների ծավալները աճել են՝ պայմանավորված ուսանողների թվի ավելացմամբ, սակայն եկամուտների հիմնական տողը /63-70%/ կազմում են մուտքերը վճարովի ուսուցման ծառայություններից, որի ցուցանիշները նույն պատճառով ավելացել են: Տարբեր տարիների 11-17% տատանվող չափերով մուտքեր են եղել դրամաշնորհային ծրագրերից, ձեռնարկատիրական

և Կոնֆուցիուսի ինստիտուտի գործունեությունից: Փաստացի մուտքերի էական դիվերսիֆիկացիա տեղի չի ունեցել. գիտության ապրանքայնացումից և հրատարակչական գործունեությունից մուտքեր չեն լինում, նվազել են նաև գիտական դրամաշնորհներից ստացվող գումարները:

Եթե վերջին 5 տարում ԲՊՀ եկամուտները աճել են շուրջ 50%-ով, ապա ծախսերն ավելացել են 36%-ով: Ծախսերի հիմնական հոդվածը աշխատավարձն է, ինչը միջինը աճել է տարեկան 10%-ով: Մոտ 2 անգամ ավելացվել են նաև գիտական գործունեությանը ուղղված ծախսերը. ավելացել է գիտական գործունեության խրախուսման հոդվածով հատկացվող գումարի սահմանաչափը: ԲՊՀ-ն իր եկամուտների հաշվին 2018թ. ձևավորել է անձեռնմխելի դրամագլուխ, որը 2022թ. կազմել է մոտ 25,8 մլն. դրամ:

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականության բացակայության պայմաններում կիրառվում է բյուջեի ծախսերի նախահաշվի կազմման հետևյալ մեխանիզմը. յուրաքանչյուր տարի կառուցվածքային բոլոր ստորաբաժանումները ԲՊՀ ֆինանսական վարչություն են ներկայացնում իրենց բնականոն գործունեությունը և հաջորդող տարում պլանավորվող ծրագրերն իրականացնելու համար գույքի ու այլ անհրաժեշտ միջոցների հայտերը և աշխատանքների նկարագրերը: Այնուհետև, բուհի ռեկտորի հրամանով ձևավորված աշխատանքային խումբը դրանց հիման վրա կատարում է բյուջեի առանձին հոդվածներով ծախսերի հաշվարկը:

Ֆինանսական միջոցների ծախսերի պլանավորումը ռեկտորի ներկայացմամբ հաստատվում է Հոգաբարձուների խորհրդի կողմից, իսկ ընթացիկ մոնիտորինգը՝ ծախսերի նպատակայնությունը և արդյունավետությունը վերահսկում և կառավարում է բուհի ֆինանսական վարչությունը:

Ֆինանսական միջոցների բաշխման համալսարանի կողմից կիրառվող մոտեցման վերլուծություն ՄԿԾ-ների նպատակների իրականացման ու շարունակականության երաշխավորման տեսակետից չի իրականացվում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԲՊՀ-ն ՄԿԾ-ներն իրականացնող ստորաբաժանումներին հատկացնում է նյութական ու ֆինանսական համապատասխան ռեսուրսներ իրենց բնականոն գործունեությունն ապահովելու համար:

Տարեկան ֆինանսական գործունեության հաշվետվություն ԲՊՀ ռեկտորը ներկայացնում է Հոգաբարձուների խորհրդին, որը խորհրդի կողմից հաստատվելուց հետո հրապարակվում է: Բացի 2022թ. կատարողականի հաշվետվությունից՝ դրանք հասանելի են շահակիցների համար համալսարանի կայքէջում:

Ֆինանսական գործունեության վերահսկման մեկ այլ կիրառվող մեխանիզմ է անկախ աուդիտորական գնահատումը, որը պետք է իրականացվի առնվազն տարին մեկ անգամ: ԲՊՀ կայքէջում հասանելի է միայն 2020թ. իրականացված աուդիտի հաշվետվությունը:

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

ԲՊՀ-ն չի վերլուծել որակի շարունակական բարելավումն ու կայունությունը ապահովելու նպատակով բուհի ռեսուրսային բազայի արդյունավետությունը, ռեսուրսների ժամանակին բաշխելու մեխանիզմները, գործընթացները և ընթացակարգերը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԲՊՀ-ի ռեսուրսային բազան հիմնականում ընձեռում է հնարավորություն կրթական գործընթացների կազմակերպման և իրականացման համար:

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

ԲՊՀ 2019-23թթ. ռազմավարական ծրագրում առկա է «Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ» բաժինը, որտեղ նախատեսված խնդիրների լուծումները պետք է ապահովեին նաև «ՏՀՏ-ի ընդլայնված և արդյունավետ կիրառում ԲՊՀ-ի կրթական, ներքին կառավարման և աշխատանքային գործընթացներում» վերջնարդյունքը:

Փաստաթղթավորման գործընթացի կառավարումն իրականացվում է «Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի փաստաթղթավարության կանոնակարգով», որով սահմանված են թղթային և էլեկտրոնային թաստաթղթերի վարման ընթացակարգը: ԲՊՀ-ի մասին տեղեկատվության տարածումը, ինչպես նաև համալսարանի մասին դրական հանրային կարծիքի և վարկանիշի ձևավորումը Հանրային կապերի և լրատվության բաժնի պատասխանատվությունն է, որը գործում է իր կանոնադրության հիման վրա: Հանրային կապերի և լրատվության բաժինն է պարտավոր ապահովել նաև ԲՊՀ-ի համացանցային կայքի բովանդակային թարմացումը:

Նախորդ հավատարմագրումից հետո ԲՊՀ-ն որոշակի ֆինանսական և մարդկային ռեսուրսներ է ներդրել տեղեկատվական համակարգերի և համակարգչային ցանցի տեխնիկական հագեցվածությունը ավելացնելու և գործառույթները բազմազանեցնելու առումով: Բուհում կիրառվում են «Հայկական ծրագրեր» և Mulberry 2.0 էլեկտրոնային գործիքները, ներդրվել է ներքին կառավարման UMS էլեկտրոնային համակարգը:

ԲՊՀ-ի կողմից ստացվող բոլոր թղթային մտից գրությունները և առաքվող ելից գրությունները գրանցվում, շրջանառության մեջ են դրվում և պահպանվում Ընդհանուր բաժնի կողմից: Mulberry 2.0 էլեկտրոնային գործիքի միջոցով իրականացվում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը, որի կազմակերպումը նույնպես ԲՊՀ ընդհանուր բաժնի գործառույթներից է, որին հասանելիություն ունեն Անձնակազմի կառավարման և զարգացման վարչությունը, Ֆինանսական վարչությունը, գիտության և ուսումնական բաժինները և մյուս հիմնական ստորաբաժանումները: Mulberry համակարգը կառավարվում է ԲՊՀ տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների բաժնի կողմից:

ԲՊՀ-ում ներդրվում է նաև UMS համակարգը, որի նպատակն է ուսումնական գործընթացի ավտոմատացումը, կառավարման դյուրացումը, ճկունության և արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև տեղեկատվական միասնական բազայի ստեղծումը: Ներդրմանը զուգահեռ այն ենթարկվում է փոփոխությունների՝ հարմարեցվելով ԲՊՀ-ի առանձնահատկություններին: Համակարգի հնարավորությունները դեռևս ոչ ամբողջությամբ են օգտագործվում, սակայն, ըստ ինքնավերլուծության, արդեն 2021թ. ներբեռնվել է ուսանողների և ուսումնական գործընթացի կառավարման համար անհրաժեշտ մեծաքանակ տեղեկատվություն:

ԲՊՀ-ում 2011 թ. -ից ի վեր արդյունավետորեն գործառվում է «Կրեդիտային համակարգը» (credit.brusov.am), որի միջոցով ավտոմատացված կերպով մուտքագրվում են ուսանողների

առաջադիմության տվյալները (ներառյալ ՄՈԳ-երի), ուսումնառության արդյունքները, և ուսանողները խմբավորվում են ըստ փոխատեղման (ռոտացիայի):

Համալսարանի և աշխատակիցների միջև, ինչպես նաև աշխատակիցների միջև անմիջական կապը և տեղեկության փոխանցումն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով 2022թ. ԲՊՀ աշխատողների համար կիրառության մեջ է դրվել Outlook նամակարգրության միասնական համակարգը:

7.6 ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

Նախորդ հավատարմագրման փորձագիտական խումբը այս չափորոշիչի շրջանակներում տրամադրել է հետևյալ խորհրդատվությունը՝ Հարմարեցնել ԲՊՀ-ի ենթակառուցվածքային ռեսուրսները հատուկ կարիք ունեցող շահակիցների կարիքներին: Իրականացնելով այս խորհրդատվությունը՝ ԲՊՀ-ում կառուցվել են թեքահարթակներ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների և աշխատակիցների համար: Թեքահարթակներ առկա են միայն մուտքերի մոտ, իսկ շենքի ներսում դրանք դեռևս բացակայում են, ինչպես նաև առկա չէ վերելակ, լսարանների դռները հարմարեցված չեն հատուկ կարիքներ ունեցող շահառուների կարիքներին:

ԲՊՀ-ում գործում է շուրջօրյա անվտանգության ծառայություն, որն իրականացնում է մասնաշենքերի և գույքի պահպանությունը, ապահովում է ուսանողների ու աշխատակիցների անվտանգությունը: ԲՊՀ-ի երկու հիմնական մուտքերում ուսանողների և աշխատակազմի մուտքը կազմակերպվում է անհատական անցաքարտերով, ինչի միջոցով արգելակվում է օտարների չթույլատրված մուտքը համալսարանի մասնաշենքեր: Անվտանգության բաժինը գործում է բուհի աշխատակազմում՝ ըստ իր կանոնադրության, որով սահմանված են բաժնի խնդիրները և գործառույթները:

ԲՊՀ-ն ապահովում է անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պայմաններ, իսկ աշխատակզմի և ուսանողության առաջնային բուժօգնությունը ապահովում են Առաջին օգնության կենտրոնի 2 աշխատակիցները /1 բժիշկ և 1 բուժքույր/: Կենտրոնի համար առանձնացված է հատուկ տարածք, կենտրոնն ապահովված է առաջին բուժօգնության համար անհրաժեշտ դեղորայքով:

Բուհում որոշակի գործընթացներ են իրականացվել նաև հակահրդեհային անվտանգության և սեյսմիկ նորմերի ապահովման տեսակետից. փակցված են տարհանման պլանները, լիցքավորվել են առկա կրակմարիչները կամ փոխարինվել են նորերով, ԲՊՀ 1-ին և 2-րդ մասնաշենքերի գլխավոր մուտքերի դռները փոխարինվել են դեպի դուրս բացվող դռներով, աշխատակիցներին և ուսանողներին տարհանման ձևերը և կանոնները ուսուցանելու համար անցկացվել են վարժանքներ:

Փորձագիտական այցի ընթացքում ԲՊՀ աշխատակիցների կողմից որպես խնդիրներ նշվել է սոցփաթեթների/բժշկական ապահովագրության բացակայությունը, Ծաղկաձոր քաղաքի ԲՊՀ հանգստյան տան անգործությունը և բուհի տարածքում ճաշարանի բացակայությունը: Չնայած Ծաղկաձորի հանգստյան տան վերանորոգումը 2019-23թթ. ՌԾ-ով սահմանվել է որպես ռազմավարական խնդիր՝ այնուամենայնիվ հանգստյան տան վերանորոգում չի իրականացվել:

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

ԲՊՀ-ում շահակիցների շրջանում 2022թ. ՈԱԿ-ի կողմից իրականացված առցանց հարցումներում այլ հարցերի շարքում տեղ են գտել նաև հարցադրումներ համալսարանի ռեսուրսներից ուսանողների և ՊԴ կազմի բավարարվածության վերաբերյալ:

Ուսանողական հարցման 6-րդ բաժինը, իսկ դասախոսական հարցման 3-րդ բաժինը վերաբերում են ԲՊՀ ռեսուրսներից և ծառայություններից բավարարվածության գնահատմանը: Երկու հարցաշարերում էլ առաջարկվում է գնահատել՝

- ԲՊՀ գրադարանի կողմից մատուցվող հետևյալ ծառայությունների որակը,
- անվտանգության ծառայության և առաջին օգնության կենտրոնի ծառայությունների որակը,
- ԲՊՀ-ի ռեսուրսային ապահովվածությունը, լսարանային պայմաններն ու տեխնիկական հագեցվածությունը:

Ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման հարցեր հարցաշարերում առկա չեն: Այլ տարիների հարցումների արդյունքների վերլուծություններ փորձագիտական խմբին չեն տրամադրվել:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ նախորդ հավատարմագրման արդյունքում ԲՊՀ-ն նախաձեռնել և իրականացրել է ենթակառուցվածքների և ուսումնական միջավայրի բարելավման աշխատանքներ, որը նաև տեսանելի և գնահատելի է ներքին շահակիցների համար:

ԲՊՀ-ն անհրաժեշտություն ունի գնահատելու առաջարկվող մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի բավարարությունն ու արդյունավետությունը, որը կնպաստի ռեսուրսների թիրախային ձեռքբերմանը և ուսանողների գործնական կարողությունների զարգացմանը: Դրական է, որ ամբիոններն իրենց ինքնավերլուծություններում անդրադառնում են նաև ռեսուրսային բավարարվածությանը, այնուամենայնիվ ընտրված մեխանիզմը տարածման և զարգացման կարիք ունի, որը հնարավորություն կընձեռի ամբողջ համալսարանի մակարդակով գնահատելու ՄԿԾ-ների ռեսուրսային ապահովվածությունը:

Դրական է, որ ԲՊՀ գրադարանն իրականացնում է ակտիվ գործունեություն: 2019-2022 թթ. գրադարանի աշխատանքը բնութագրող քանակական ցուցանիշներում արձանագրված է դրական շարժ: Լուրջ քայլեր կան թվային պահոցի և թվային գրադարանի զարգացման, տարբեր առցանց գրադարանային ցանցերի հասանելիության ապահովման ուղղություններով: Աճել է ուսանողների բավարարվածությունը գրադարանի կողմից ուսանողներին ցուցաբերած օժանդակությունից, ընթերցասրահի սպասարկումից, առցանց պատվերների ծառայության որակից: Բայց խնդիր է մնում մասնագիտական հայերեն և օտար լեզվով գրականության պակասը, մանավանդ նոր ներդրված ծրագրերի համար անհրաժեշտ և արևելյան լեզուներով գրականությունը: Բացառություն է գերմաներենով գրականության մեծածավալ և որակյալ ֆոնդի առկայությունը, ինչը պայմանավորված է Ավստրիական գրադարանի առկայությամբ: Տարեկան ծախսերի նախահաշվով բուհը հատկացնում է գումարներ անհրաժեշտ գրքերի ձեռքբերման համար, սակայն դրանք սովորաբար չեն իրացվում, այլ խնայվում են:

Փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը ավելի հետևողական պետք է լիներ նախորդ հավատարմագրման ժամանակ տրամադրված խորհրդատվությունը իրականացնելու առումով. օգտագործել ոլորտային գործատուների ռեսուրսային բազաները՝ բուհի կրթական ծրագրերի կարիքներին ծառայեցնելու նպատակով:

Ֆինանսական կայունության և ֆինանսների կառավարման տեսակետից բուհը ունի որոշակի առաջընթաց: Դրա մասին են վկայում բյուջեի մուտքերի և ծախսերի ծավալների աճը, ֆինանսական անվտանգային բարձիկի ձևավորումը, աշխատավարձերի բարձրացումը, գիտությանը տրամադրվող գումարների աճը և այլն: Փորձագիտական խումբը գտնում է, որ ֆինանսների կառավարման արդյունավետության բարձրացման համար բուհը հաստատված ֆինանսական քաղաքականության կարիք ունի, որի հիման վրա էլ կիրականացվի երկարաժամկետ պլանավորում ըստ համալսարանական առաքելության ոլորտների /կրթություն, գիտություն և ծառայություն հասարակությանը/ և ռազմավարական նպատակների ու խնդիրների:

Բուհում գործում է ֆինանսական միջոցների բաշխման պլանավորման և իրականացման որոշակի ընթացակարգ, սակայն կիրառվող մեխանիզմը միջնորդավորված է առնչվում առաջարկվող ՄԿԾ-ների նպատակների իրականացման ու դրանց շարունակականության երաշխավորման խնդրին: Ըստ տարիների բյուջեների նախահաշիվների և դրանց կատարողականների ուսումնասիրությունները փորձագիտական խմբին թույլ են տալիս եզրակացնել, որ հիմնական ծախսային հոդվածներն ուղղված են ուսումնական գործընթացների անխափան իրականացմանը և բուհի զարգացմանը:

Դրական է, որ ԲՊՀ-ում իրականացվում է կանոնակարգված թղթային և էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն, կիրառվում են տարբեր էլեկտրոնային գործիքներ տեղեկատվության հավաքագրման և կառավարման համար, որը նպաստում տարբեր գործընթացների կազմակերպման թափանցիկությանը և արդյունավետությանը: Գովելի է, որ հատուկ կարիքներ ունեցող ուսանողների շարժն ապահովելու համար կառուցվել են թեքահարթակներ, փորձագիտական խումբը խրախուսում է ԲՊՀ-ին կատարել նաև հաջորդ քայլերը բոլոր ենթակառուցվածքները կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողներին և աշխատակիցներին հասանելի դարձնելու համար: Բուհում գործող առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունները ապահովում են անվտանգ միջավայր, ինչից հիմնականում բավարարված են ներքին շահակիցները: Փորձագիտական խումբը գտնում է, որ ԲՊՀ-ն կարիք ունի իրականացնելու առողջության և անվտանգության պահպանման ծառայությունների վրա կատարվող ծախսերի վերլուծության՝ դրանց արդյունավետությունը գնահատելու համար, ձեռք առնել միջոցներ սննդի կետի բացման և աշխատակիցների բժշկական ապահովագրության կազմակերկման համար:

Դրական է, որ ռեսուրսների բավարարվածության վերաբերյալ իրականացվում են ուսանողների և ՊԴ կազմի կարծիքների ուսումնասիրություն: Փորձագիտական խումբը նշում է, հարցաշարերը կարելի է կազմել այնպես, որ ոչ միայն տեսանելի լինի շահակիցների բավարարվածության թվային ցուցանիշներ, այլև նրանք հնարավորություն ունենան ներկայացնելու բարելավումների առաջարկություններ, որը կնպաստի նաև կարիքի հիման վրա ռեսուրսի ձեռքբերմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրման արդյունքում ԲՊՀ-ն իր 2019-23թթ. ռազմավարական զարգացման ծրագրում առանձնացրել է մի շարք նպատակներ և գործողություններ՝ ուղղված ուսումնական միջավայրի բարելավմանը և հետևողականորեն իրականացրել է դրանք, առկա են դրական քայլեր թվային պահոցի և թվային գրադարանի զարգացման, տարբեր առցանց գրադարանային ցանցերի հասանելիության ապահովման ուղղություններով, առկա է որոշակի առաջընթաց ֆինանսական կայունության և ֆինանսների կառավարման տեսակետից, աճել են բյուջեի մուտքերի, ծախսերի և ֆինանսական անվտանգային

բարձիկի ծավալները, գործում են ֆինանսական միջոցների բաշխման պլանավորման, իրականացման, վերհսկման որոշակի ընթացակարգեր, իրականացվում է կանոնակարգված թղթային և էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն, գործող առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունները ապահովում են անվտանգ միջավայր, ներքին շահակիցները հիմնականում բավարարված են ՄՈՒՀ-ի տրամադրած ռեսուրսներից, փորձագիտական խումբը գտնում է, որ ԲՊՀ-ն բավարարում է 7-րդ չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԲՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

ԲՊՀ հաշվետվողականության համակարգը կանոնակարգվում է ԲՊՀ կանոնադրությանամբ, ռազմավարական ծրագրով և Հանրային կապերի և լրատվության բաժնի կանոնադրությամբ: ՄՈՒՀ-ում առկա է ներքին և արտաքին հաշվետվողականության համակարգ: Ներքին հաշվետվողականության համակարագը բազմամակարդակ է, որն ապահովում է հաշվետվողականության ներքևից վերև մոտեցում: Հաշվետվություններ են ներկայացնում ամբիոնների վարիչները, գիտառուսումնական կենտրոնները, վարչական ստորաբաժանումները, որի հիման վրա ձևավորվում է նաև ռեկտորի տարեկան հաշվետվությունը, վերջինս քննարկվում է Գիտական խորհրդում և Հոգաբարձուների խորհրդում: Պետք է նշել, որ ստորաբաժանումների հաշվետվություններում եզակի են դեպքերը, երբ ներկայացվում են բարելավման առաջարկներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որ նախկինում հաշվետվությունները եղել են նկարագրողական, ներկայումս ավելացվել են քանակական տվյալներ և վերլուծական բաղադրիչ, ինչպես նաև ռեկտորի տարեկան հաշվետվությունները ներկայացվում են ՌԾ նպատակներին համապատասխան:

Պետք է նշել, որ հաշվետվությունները հրապարակվում են ՊԲՀ պաշտոնական կայքէջում, բացառությամբ ռեկտորի 2022թ. հաշվետվության:

ՄՈՒՀ-ը, ըստ սահմանված կարգի, հաշվետվություններ է ներկայացնում նաև Պետական եկամուտների կոմիտե, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, ՀՀ ԿԳՄՄՆ, Գիտության կոմիտե և այլն:

8.2 ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը հասարակությանը:

ԲՊՀ ընթացակարգերի, գործընթացների հրապարակայնության և տեղեկատվության թափանցիկության հասանելի դարձնելու հիմնական գործիքներ են ԲՊՀ-ի պաշտոնական կայքէջը (brusov.am), ֆեյսբուքյան, ինսթագրամյան էջերը, ուսանողի ուղեցույցը, ՄՈՒՀ-ի վերաբերյալ բուկլետները, ներքին էլեկտրոնային ցանցը նախատեսված ներքին շահակիցների համար և ԶԼՄ-ները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ առանձին ֆակուլտետներ և ստորաբաժանումներ ունեն նաև իրենց առցանց խմբերը, սոցիալական հարթակները, որոնցով նույնպես լուսաբանվում են տեղեկատվություն ՄՈՒՀ-ում իրականացված միջոցառումների վերաբերյալ: Ստորաբաժանումների սոցիալական հարթակներով իրականացված հրապարակումները կանոնակարգված չեն և անկախ են Հանրային կապերի և լրատվության բաժնի կողմից իրականացվող գործընթացներից: ՄՈՒՀ-ն ունի նաև յութուբյան ալիք, որտեղ ներկայացվում են ԲՊՀ մասնագիտությունները, շարժունություն ապահոված ուսանողների հաջողության պատմությունները և այլն: Կրթական ծրագրերի վերաբերյալ գովազդային հոլովակների պատրաստմանը մասնակցում են նաև ՄՈՒՀ-ի այն դասախոսները, ովքեր մեդիահարթակում ունեն ծանոթելիություն:

ԲՊՀ կայքէջը եռալեզու է (հայերեն, ռուսերեն, անգլերեն), պետք է նշել, որ կայքէջի ռուսերեն և անգլերեն լեզուներով հատվածն առավել քիչ է հագեցված ՄՈՒՀ-ի վերաբերյալ տեղեկավությամբ: Կայքէջի «Փաստաթղթեր» բաժնում ներկայացված կանոնադրությունները, քաղաքականությունները և ընթացակարգերը, որոնք հասանելի են միայն հայերեն լեզվով, նույնը կարելի է նշել ՄՈՒՀ-ի վերաբերյալ ընթացիկ նորությունների հրապարակման վերաբերյալ: Անհրաժեշտ է նաև նշել, որ կայքէջում տեղադրված փաստաթղթերի մի մասի վրա ներկայացված է ՄՈՒՀ-ի նախկին անվանումը՝ ԵՊԼՀ: Բացի այդ, բացակայում են Գիտական խորհրդի որոշումները 2022թ. սեպտեմբեր ամսից հետո և ռեկտորի հրամանները 2021թ. օգոստոս ամսից հետո:

Ըստ ՄՈՒՀ-ի տրամադրած տվյալների՝ ԲՊՀ կայքէջում հրապարակումները և լուսաբանումներն ունեցել են հետևյալ դինամիկան՝ 2019թ. 635 հրապարակում, 2020թ.՝ 338, 2021թ՝ 523 իսկ 2022թ՝ 625: 2020թ. առավել սակավ հրապարակումները ՄՈՒՀ-ը պայմանավորում է COVID 19-ով և պատերազմական իրավիճակով: Ըստ ԲՊՀ-ի ներկայացրած վերլուծությունների՝ կայքէջը ունեցել է ամսական միջինը 14 900 այցելու և 75 485 դիտում:

8.3 ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

ԲՊՀ-Ի գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածման և հետադարձ կապի ձևավորման աշխատանքներն իրականացվում է Հանրային կապերի և լրատվության բաժնի (ՀԿԼ) կողմից: ՄՈՒՀ-ում հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներից հարկ է նշել ԲՊՀ-ի պաշտոնական կայքէջի «Կապ մեզ հետ» բաժինը, ֆեյսբուքյան էջը, էլեկտրոնային փոստի հասցեները: Շրջանավարտների և գործատուների հետ կապի ապահովման տեսանկյունից կարևոր դերակատարում ունի նաև Կարիերայի կենտրոնը, որը համագործակցելով շրջանավարտների միության հետ, կազմակերպում է տարբեր հանդիպումներ, աշխատաժողովներ և ապահովում կապ ուսանող-գործատու, դպրոց-ԲՊՀ հարաբերություններում:

8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

ԲՊՀ-ում հասարակությանը գիտելիք փոխանցելու նպատակով գործում են մի շարք մեխանիզմներ։ Հասարակության տարբեր խմբերի համար նախատեսված են վճարովի և անվճար դասընթացներ։ ՄՈՒՀ-ում գործում է նաև Համալսարանական շարունակական կրթության բաժինը, որը կազմակերպում է մի շարք դասընթացներ կապված տարբեր օտար լեզուների ուսուցման, աշակերտների համար ԲՊՀ ընդունելության նախապատրաստման և այլնի վերաբերյալ։ Նույն բաժնի կողմից 2019 թ. սկսած կազմակերպվում են մասնագիտական վերապատրաստումներ ՀՀ գրադարանավարների, ինչպես նաև հերթական ատեստավորման ենթակա ՀՀ բոլոր դպրոցների ռուսերենի, անգլերենի, ֆրանսերենի և գերմաներենի ուսուցիչների համար։ Լրացուցիչ դասընթացներ են կազմակերպվում նաև բանկերի աշխատակիցների, լրագրողների և այլ կազմակերպությունների ներկայացուցիչների համար։

ՄՈՒՀ-ում գործում են գիտաուսումնական և լեզվամշակութային շուրջ 10 կենտրոններ (գերմաներենի, իտալարենի, իսպաներենի, չինարենի, կորեերենի և այլն), որոնք իրականացնում են կարճաժամկետ և երկարաժամկետ լեզվի ուսուցման դասընթացներ։ Մի շարք լեզուների, մասնավորապես՝ (TOPIK) միջազգային քննություններն անցկացվում է ԲՊՀ-ում։

Հասարակությանը գիտելիք փոխանցելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն նաև ԲՊՀ պատմության և Վ. Բրյուսովի թանգարանները, Բրյուսովյան գիտական կենտրոնը։ Google Cultural Institute-ի հետ համագործակցության շրջանակներում ԲՊՀ-ն ընդլայնել է թանգարանի թվային հավաքածուները՝ ապահովելով Բրյուսովյան գիտական կենտրոնի նյութերի հասանելիությունը գիտական հանրությանը, նյութերը տեղադրվում են կայքէջում (Բրյուսովի թանգարան (brusov.am)։

Դատողություններ։ Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԲՊՀ-ում գործում է ներքևից վերև և վերևից ներքև հաշվետվողականության համակարգ։ Ստորաբաժանումների հաշվետվություններում առաջարկությունների կամ բարելավման կողմերի ներկայացման պահանջը կնպաստի ստորաբաժանումների և ԲՊՀ գործունեության առաջխաղացմանը, ինչպես նաև համալսարանի աշխատանքի նկատմամբ աշխատակիցների քննադատավերլուծական մտքի զարգացմանը։ Վերջին տարիներին ռեկտորի տարեկան հաշվետվությունները կազմվում են ՌԾ նպատակներին համապատասխան, որը հետագայում կարող է դառնալ լավ գործիք ՌԾ նպատակների իրականացումը գնահատելու համար։

Դրական է, որ ԲՊՀ-ն իր գործունեության թափանցիկության ապահովման նպատակով կիրառում է տարբեր մեխանիզմներ՝ կայքէջ, սոցիալական հարթակներ, ԶԼՄ-ներ և այլն, սակայն փորձագիտական խումբը նշում է, որ ստորաբաժանումների ունեցած սոցիալական էջերի և դրանցով հրապարակվող տարբեր նյութերի նկատմամբ վերահսկողության բացակայությունը կարող է բացասաբար անդրադառնալ ԲՊՀ հեղինակության և վարկանիշի վրա։

Դրական է, որ ԲՊՀ-ն ունի եռալեզու կայքէջ, որտեղ հիմնականում հայերեն լեզվով հրապարակված և ներկայացված է ՄՈՒՀ-ի վերաբերյալ կարևոր և անհրաժեշտ տեղեկատվություն, այնուամենայնիվ փորձագիտական խումբը կարևորում է նաև օտարալեզու բաժինների թարմացումը, նամանավանդ այն դեպքում, որ համալսարանը թարգմանությունների իրականացման խոչընդոտներ չունի, վերջինիս իրականացումը կարող է նպաստել համալսարանի տեսանելիության բարձրացմանը նաև միջազգային գործընկերների և այլ շահակիցների շրջանում։ Բացի այդ, պետք է նշել, որ վերջին ժամանակահատվածում փաստաթղթերի հրապարակումներ տեղի չեն ունենում, որը կարող է խոչընդոտել ՄՈՒՀ-ի մասին տեղեկատվության տարածմանը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում նաև այն, որ ՄՈՒՀ-ում առկա է հասարակության հետ հետադարձ կապի ապահովման կայուն համակարգ, որը նպաստում է շահակիցների հետ հաղորդակցմանը և նրանց կարիքների բացահայտմանը:

Կարևոր է, որ հասարակությանը գիտելիք փոխանցելու նպատակով ԲՊՀ-ում իրականացվում են տարբեր դասընթացներ և վերապատրաստումներ, գիտելիքների և արժեքների փոխանցման տեսանկյունից փորձագիտական խումբը խրախուսում է ՄՈՒՀ-ին կենտրոնանալ նաև սեփական հետազոտությունների հանրայանցման վրա, որը հնարավորություն կընձեռի առավել կիրառական դարձնել գիտական արդյունքները՝ նպաստելով նաև հասարակության կրթական մակարդակի բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԲՊՀ-ում առկա է ներքին և արտաքին հաշվետվողականության կայուն համակարգ, գործում են հետադարձ կապի ապահովման տարբեր մեխանիզմներ, իր գործընթացների թափանցիկությունն ապահովելու նպատակով գործում են տարբեր հարթակներ, հասարակությանը գիտելիքներ և արժեքներ փոխանցելու նպատակով կազմակերպվում են բազմաթիվ դասընթացներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԲՊՀ-ն բավարարում է չափանիշ 8-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԲՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

ԲՊՀ 2019-23թթ. զարգացման ՌԾ-ի նախաբանում նշվում է, որ ՄՈՒՀ-ը ռազմավարական զարգացման վերոնշյալ ժամանակահատվածում, կրթական և գիտահետազոտական գործընթացների հետ միասին, առանձնահատուկ կարևորում է միջազգայնացման գործընթացների բարելավումը: Միջազգայնացման ուղղությամբ ԲՊՀ-ի գործունեության առանցքային ոլորտներն են՝ կրթական, գիտահետազոտական, Կարիերայի կառավարման, Կրթության որակի ապահովման գործընթացների միջազգայնացումը:

ՌԾ 7-րդ բաժնում /Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն/ առանձնացված են 4 նպատակ՝ 5 խնդիրներով, համապատասխան գործողություններով և պատասխանատուներով: Գործողությունների ժամկետները հստակեցված չեն. բոլոր գործողությունների համար հիմնականում նախատեսված է 2019-23 թթ. : Ռազմավարական նպատակների նախանշվող վերջնարդյունքներ բաժնում առանձնացված են որակական ցուցանիշներ, ինչպիսիք են՝ շարժունությանը օժանդակող գործընթացների առկայություն, միջազգային փոխանակման և

շարժունության ծրագրերի իրականացման և մասնակցության աճ, համատեղ իրականացված գիտական հետազոտությունների, գիտաժողովների, շարունակաբար կազմակերպված միջազգային լեզվական քննությունների աճ, համատեղ իրականացվող կրթական ծրագրերի ավելացված թվաքանակ, միջազգային մասնագետների ներուժի ներգրավում կրթական ծրագրերում, օտարերկրացի և սփյուռքահայ սովորողների թվաքանակի աճ, ԲՊՀ ՄԿԾ-ների համակազմում օտար լեզուներով դասավանդվող ՄԿԾ-ներ, օտարերկրյա սովորողների ներհոսքի աճ և այլն: Քանակական ցուցիչներ առկա չեն, հստակ չէ, թե աճը որքան է իրենից ենթադրում:

Ըստ ինքնավերլուծության՝ ԲՊՀ-ն ՌԾ գործողությունների պլանը, Արտաքին կապերի և միջազգային համագործակցության (ԱԿՄՀ) վարչության կանոնադրությունը (հաստատված 2019թ.) դիտարկում է որպես ոլորտում ՄՈՒՀ-ի ռազմավարությունը ներառող փաստաթղթեր: Միևնույն ժամանակ, ՌԾ գործողությունների պլանի ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ ՌԾ հետևյալ խնդրի՝ ապահովել և ընդլայնել միջազգային բարձրագույն կրթական տարածքներին ԲՊՀ ինտեգրման գործընթացները, գործողության վերջնարդյունք նշված է հաստատված միջազգայնացման ռազմավարություն և մշտադիտարկման մեխանիզմներ ու գործընթացներ ունենալը, որի կատարման ժամկետ նշված է 2019-2021թթ.: Պետք է փաստել, որ մինչ օրս ԲՊՀ-ում նման հաստատված ռազմավարություն առկա չէ: Իսկ ինչ վերաբերում է մշտադիտարկման մեխանիզմներին, ապա իրականցվում են հարցումներ շարժունության ծրագրերին մասնակցած ուսանողների և դասախոսների շրջանում, ինչպես նաև հարցաշարի միջոցով ներքին շահակիցները գնահատում են միջազգային գործընթացները համակարգող կառույցի արդյունավետությունը: Ռեկտորի տարեկան հաշվետվություններում ներկայացված են նաև տվյալներ, թե յուրաքանչյուր տարի ինչ քայլեր են իրականացվել միջազգայնացմանն ուղղված յուրաքանչյուր խնդրի իրականացման համար, սակայն առկա չեն հստակ վերլուծություններ, թե այդ քայլերը որքանով են բավարում ՄՈՒՀ-ի ակնկալիքները:

ԲՊՀ-ում գործում է 2021թ. հաստատված «ԲՊՀ միջազգային շարժունության կարգը», որտեղ սահմանված են դասախոսների և ուսանողների շարժունության ապահովման ընթացակարգերը: Կանոնակարգված են միջազգային շարժունության նպատակները, ձևերը, տեսակները, տևողությունը, ֆինանսավորումը, աշխատակիցների և ուսանողների մասնակցության կազմակերպումն ու պայմանները: Շարժունության համար հիմք են հանդիսանում միջազգային կառույցների հետ կնքված մեծաքանակ պայմանագրերը և դրամաշնորհային ծրագրերը: Ըստ ԲՊՀ-ի կողմից տրամադրած տվյալների՝ 2020թ.-ից ի վեր փոխանակման ծրագրերի մասնակցել է 86 ուսանող և 31 աշխատակից: Պետք է փաստել, որ հատկապես վերջին տարում նկատելի է շարժունության ծրագրերի մասնակցության ակտիվացում:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

ԲՊՀ-ում գործում է Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչությունը (այսուհետ՝ ԱԿՄՀ վարչություն), որն իրականացնում է իր կանոնադրությամբ (հաստատված 2019թ.) սահմանված գործառույթները: Վարչության ներսում բաժիններ առկա չեն: Անշխատակազմը բաղկացած է 4 աշխատակցից՝ վարչության պետ, պետի տեղակալ և 2 առաջատար մասնագետներ: Աշխատակազմի գործառույթները, պահանջվող մասնագիտական որակավորումները, լիազորությունները, իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են աշխատանքային պայմանագրերով, համապատասխան պաշտոնների անձնագրերով: Վարչությունը հաշվետու է ԲՊՀ ռեկտորին:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ միջազգային գործընթացների զարգացմանը նպաստում են նաև նաև ստորաբաժանումները (Կարիերայի կենտրոնը, Գրադարանը), ֆակուլտետները և ամբիոնները՝ նպաստելով ոլորտային գործընկերների թիրախավորմանը:

Վարչությունը պատասխանատու է պրոֆեսորադասախոսական կազմի, սովորողների և հետազոտողների միջազգային շարժունության ծրագրերի համակարգման, ԲՊՀ-ի ուսանողներին, պրոֆեսորադասախոսական և վարչական կազմերին միջազգային ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման և այլնի համար: Փորձագիտական այցից և շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ միշտ չէ, որ ՊԴ և ուսանողական կազմերը լիովին տեղեկացված են լինում գործող ծրագրերից և իրենց մասնակցության հնարավորություններից:

ԲՊՀ-ում գործող արտաքին կապերի և միջազգայնացման զարգացման մոտեցումների և ընթացակարգերի բարելավման նպատակով ԱԿՄՀ վարչությունը 2022թ. իրականացրել է գործընկեր բուհերի միջազգայնացման գործընթացների ուսումնասիրություն 32 հարցից բաղկացած հարցաշարի միջոցով: Հարցաշարն ընդգրկել է հարցեր կապված ուսանողների, դասախոսների շարժունության թվային տվյալների, միջազգային պայմանագրերի ուղղությունների, ունեցած միջազգային ծրագրերի և այլնի վերաբերյալ: Հարցմանը պատասխանել են 3 ՀՀ, 2 ՌԴ և 2 արտասահմանյան բուհեր: Փորձագիտական խմբին ներկայացված բենչմարքինգի տեղեկանքում միջազգայնացման գործընթացներում փոփոխություններ և բարելավումներ չեն առաջարկվել:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

Ըստ ինքնավերլուծության՝ ԲՊՀ-ը ունի գործող 130 համաձայնագրեր՝ կնքված ոլորտի տարբեր բուհերի, տեղական և արտասահմանյան կազմակերպությունների հետ: ԲՊՀ-ն համագործակցում է Ռուսաստանի Դաշնության, Չինաստանի, Կորեայի, Ավստրիայի, Գերմանիայի, Իսպանիայի, Իտալիայի, Բելգիայի, Մեծ Բրիտանիայի և այլ երկրների համալսարանների, բարձրագույն դպրոցների, պետական և մասնավոր կառույցների հետ: Երկրների ընտրությունը պայմանավորված է ՄՈՒՀ-ում գործող ամբիոնների, գիտաուսումնական կենտրոնների հետաքրքրությունների շրջանակով: ԲՊՀ-ն իրականացնում է նաև համատեղ մագիստրոսական, դոկտորական ծրագրեր Ֆրանսիայի Հանրապետությունում գործող 4 համալսարանների, Գերմանիայի Դաշնության Հալլե-Վիթենբերգի Մարտին Լյութերի համալսարանի, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Դալիանի օտար լեզուների համալսարանի հետ «Համեմատական գրականություն», «Հրատարակչական գործ», «Քաղաքագիտություն», «Մասնագիտական մանկավարժություն (չինարեն և գրականություն)» մասնագիտություններով:

Որպես լիիրավ անդամ՝ ԲՊՀ-ն անդամակցում է Եվրոպական համալսարանների ասոցիացիային (EUA), համագործակցում Եվրոպայի խորհրդի (ԵԽ), ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոնի (ԺԼԵԿ (ECML)), Ակադեմիական փոխանակման գերմանական ծառայության (DAAD), Ավստրիական փոխանակման ծառայության (ÖAD), Բրիտանական խորհրդի և այլ կազմակերպությունների հետ: Համագործակցությունների արդյունքում ԲՊՀ-ն հնարավորություն է ունենում զարգացնել գործընկերային կապերը, ապահովել ՊԴ և ուսանողական կազմերի համար շարժունության ծրագրեր, նպաստել աշխատակիցների փորձի փոխանակմանը և այլն:

Հաշվետու ժամանակահատվածում ԲՊՀ-ն ընդգրկված է եղել 12 միջազգային ծրագրերում, որոնցից են՝ «Համալսարան-տնտեսություն կապի հաստատումը Մոլդովայի, Վրաստանի և Հայաստանի

ուսանողների խելամիտ ձեռներեցային համագործակցության և մրցունակության միջոցով (CONNECT)», «Համալսարան-ձեռնարկատիրություն համագործակցության և ուսանողների ձեռնարկատիրական հմտությունների ամրապնդումը սմարթ կենտրոնների միջոցով» և այլն, անհրաժեշտ է նշել, որ ծրագրերի մեծ մասն իրականացել է Եվրոպական միության «Erasmus +» ծրագրի շրջանակներում: Ըստ ինքնավերլուծության տվյալների՝ հաշվետու ժամանակահատվածում «Էրազմուս+» միջազգային շարժունության ծրագրերի շրջանակում ԲՊՀ 76 ուսանող հնարավորություն է ստացել 1 կիսամյակ ուսումնառել, իսկ 90 աշխատակից՝ անցնել վերապատրաստում կամ դասավանդել գործընկեր բուհերում (Ռումինիա, Իսպանիա, Իտալիա, Բելգիա և այլն):

Օտարերկրյա համալսարաններում հայագիտությունը խթանելու նպատակով ԲՊՀ-ն համագործակցում է Հալլե Վիթենբերգի Մարտին Լյութերի անվան համալսարանի «Մեսրոպ», Պեկինի օտար լեզուների և Փարիզի Արևելյան լեզուների ինստիտուտի հայագիտության կենտրոնների, Բուենոս Այրեսի Ռոսարիոյի համալսարանի հայագիտության ամբիոնի, Մոսկվայի պետական լեզվաբանական և Բուխարեստի համալսարանների հետ: Համագործակցությունների արդյունքում Մոսկվայի պետական լեզվաբանական համալսարանի 10 ուսանող երկշաբաթյա մասնագիտական և լեզվական պրակտիկա են անցել ԲՊՀ-ում հայերեն լեզվով, ինչպես նաև Պեկինի օտար լեզուների համալսարանի 8 չինացի հայագետ ուսանողներ հնարավորություն են ունեցել մեկ կիսամյակ սովորել են ԲՊՀ-ում:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Ըստ ինքնավերլուծության՝ ԲՊՀ ՊԴ, վարչական կազմերը և ուսանողները տիրապետում են առնվազն մեկ օտար լեզվի, իսկ մի մասն էլ 2 և ավելի: ԲՊՀ-ում դասավանդվում են 18 օտար լեզուներ, որոնցից 8-ը՝ հիմնական (անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, իտալերեն, իսպաներեն, գերմաներեն, չինարեն, կորեերեն):

ՄԿԾ-ների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ բոլոր մասնագիտություններում շեշտադրված է օտար լեզուների ուսուցումը, երբեմն նաև որոշ մասնագիտական առարկաններ դասավանդվում են օտար լեզուներով: Բացի այդ, ՀՇԿ բաժնի կողմից ԲՊՀ-ում կազմակերպվում են օտար լեզուների ուսուցման դասընթացներ, որոնք անցկացվում ԲՊՀ դասախոսների կողմից վճարովի հիմունքով, դրանցում կարող են ներգրավվել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցներ:

Ուսանողների օտար լեզվի զարգացման նպատակով ԲՊՀ-ում դասավանդում են նաև լեզվակիր դասախոսներ Գերմանիայից, Կորեայից, Չինաստանից, Ռուսաստանից, Ուկրաինայից և այլն:

Համալսարանը համագործակցում է ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և օտարերկրյա պատվիրակությունների հետ, որի արդյունքում ԲՊՀ-ում գործում են շուրջ 16 լեզվի կենտրոններ՝ Հունարենի և հունական մշակույթի, Իտալերեն լեզվի, Կորեերեն լեզվի և մշակույթի, Հնդկերեն լեզվի և մշակույթի, Եգիպտոսի անվան արաբերեն լեզվի և մշակույթի և այլն:

ԲՊՀ-ում անցկացվում են նաև մի շարք օտար լեզուների, մասնավորապես՝ իտալերենի (CELI), իսպաներենի (CELU), հունարենի (ELLINOMATHEIA), կորեերենի (TOPIK), չինարենի (HSK, HSKK), գերմաներենի (ÖSD) տարբեր մակարդակների համար միջազգային քննություններ, որի արդյունքում շնորհվում են միջազգային վկայագրեր:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԲՊՀ-ն միջազգայնացման գործընթացները դիտարկում է որպես շարունակական բարելավման կարևոր նախապայման, և այդ նպատակով մշտապես զարգացնում է իր արտաքին կապերը և համագործակցությունների շրջանակը: Ռազմավարական նպատակների իրականացման համար նախանշել են արդյունքներ, որոնք որոշակիորեն հնարավորություն են ընձեռում հասկանալու ՄՈՒՀ-ի ակնկալիքներն այդ ոլորտում, սակայն փորձագիտական խումբը նշում է, որ քանակական ցուցիչների առկայությունը հնարավորություն կընձեռի ՄՈՒՀ-ին հստակ չափելի ցուցանիշներով համեմատելու, արձանագրելու և տեսանելի դարձնելու իր գրանցած առաջընթացը, որը կնպաստի ընձեռելով նաև ընթացիկ մշտադիտարկմանը: Դրական է նաև, որ առկա են ՄՈՒՀ-ի միջազգայնացման գործընթացները մշտադիտարկող որոշ մեխանիզմներ, այնուամենայնիվ դրանք լիարժեքորեն բավարար չեն խորը վերլուծություններ իրականացնելու և բարելավման ուղիներ գտնելու համար: Առավել խորքային վերլուծությունները, օրինակ՝ ֆակուլտետների ակտիվության գնահատումը միջազգայնացման գործընթացներում, այս ոլորտում նրանց ունեցած հիմնական խնդիրների ուսումնասիրությունը, ձեռքբերված արդյունքների բավարար կամ ոչ բավարար լինելը ՄՈՒՀ-ի համար կնպաստեն գործընթացների բարելավմանը և հիմնավոր որոշումների կայացմանը՝ ապահովելով միջազգայնացման ոլորտում կայուն զարգացմանը:

Դրական է ՄՈՒՀ-ում գործող Արտաքին կապերը և միջազգայնացման գործընթացները համակարգող ստորաբաժանման առկայությունը, որի առավել պլանավորված աշխատանքը կնպաստի սահմանված նպատակների իրականացմանը:

Հատկանշական է, որ ՄՈՒՀ-ում թե ուսանողները, թե ՊԴ կազմը և վարչական աշխատակիցները տիրապետում են առնվազն մեկ օտար լեզվի, որն առավել դյուրին է դարձնում միջազգային գործընկերների հետ հաղորդակցումը:

ՄՈՒՀ-ն ունի բավականաչափ պայմանագրեր և համաձայնագրեր տարբեր հեղինակավոր միջազգային կառույցների հետ, որը նպաստում է ուսանողների և դասախոսների շարժունության ծավալների աճին, դասախոսախոսական կազմի փորձի փոխանակմանը և մասնագիտական աճին:

Գովելի է նաև այլ միջազգային բուհերի հետ համատեղ կրթական ծրագրերի իրականացումը, որը կարող է նպաստել միջազգային ուսանողների քանակի ավելացմանը և ՄՈՒՀ-ի գրավչության մեծացմանը:

Հատկանշական է նաև օտար լեզուների միջազգային քննությունների կազմակերպման արտոնության առկայությունը, որը ևս մեկ անգամ տեսանելի է դարձնում ՄՈՒՀ-ի նկատմամբ վստահության առկայությունը միջազգային գործընկերների կողմից:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԲՊՀ-ի համար արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացների իրականացումը դիտարկվում է առաջնահերթություն, սահմանված նպատակների և խնդիրների իրականացման նպատակով առկա է համապատասխան ստորաբաժանում, միջազգայնացման ուղղությամբ իրականացվում են նպատակաուղղված քայլեր և առկա են տեսանելի ձեռքբերումներ, նկատելի է ուսանողների և ՊԴ կազմի շարժունության աճ, ՊԴ, վարչական և ուսանողական կազմերը տիրապետում են օտար լեզուների, ՄՈՒՀ-ի կողմից կազմակերպվում են օտար լեզուների իմացությունը գնահատող միջազգային քննություններ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԲՊՀ-ն ինստիտուցիոնալ կարողությունները համապատասխանում են չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԲՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ԲՊՀ-ում որակի ապահովման ստորաբաժանումը գործում է դեռևս 2009 թվականից: 2017թ. այն վերանվանվել է Որակի ապահովման և բարեփոխումների կենտրոն, իսկ 2020թ. կրկին անվանափոխվել է Որակի ապահովման կենտրոնի[16], ինչը ոլորտի պատասխանատուները պայմանավորում են ԲՊՀ գործընթացների ապակենտրոնացմամբ և բարելավումների համար պատասխանատվության տարածմամամբ:

ԲՊՀ ՌԾ-ի 12-րդ՝ «Կրթության որակի ապահովում» բաժնում, ձևակերպված են ոլորտի ռազմավարական նպատակները և նախանշվող վերջնարդյունքները, 7 խնդիրները և համապատասխան գործողությունները՝ իրենց վերջնարդյունքներով, պատասխանատուներով և իրականացման ժամկետներով: Բացի երեք գործողություններից՝ մյուսների իրակացման ժամկետները հստակ սահմանված չեն:

Որակի բաժնի ռազմավարական 4-րդ խնդիրը վերաբերում է որակի քաղաքականության և ընթացակարգերի մշակման ԲՊՀ հանձնառությանը. «Վերամշակել կրթության որակի ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը՝ եվրոպական չափորոշիչների և ՀՀ կառավարության կողմից հաստատված հավատարմագրման չափանիշների համապատասխանության ապահովման նպատակով»: Անհրաժեշտ է նշել, որ որակի ապահովման ոլորտում ԲՊՀ քաղաքականությունը ներառված է Որակի ապահովման ձեռնարկում, որը դեռևս ամփոփման փուլում է և հաստատված չէ: Ռեկտորի՝ 2021թ. տարեկան հաշվետվության մեջ որպես արդյունք նշված է՝ վերամշակվել է ԲՊՀ ՈԱ ձեռնարկը, մշակվել կամ վերանայվել են ԲՊՀ ՈՆԱ գործընթացները կանոնակարգող փաստաթղթերը: Անհրաժեշտ է նաև փաստել, որ ՄՈՒՀ-ն ունի 2014թ.-ի «Բրյուսովի պետական լեզվահասարակագիտական համալսարանի Որակի ներքին ապահովման ձեռնարկ», որով չի առաջնորդվում[17]:

ԲՊՀ որակի ապահովման համակարգի կառուցվածքը գծապատկերի ձևով ներառված է «ՈԱ ուսումնամեթոդական ձեռնարկի» նախնական տարբերակում և դեռևս հասանելի չէ շահակիցներին: Ըստ ԲՊՀ կառուցվածքային սխեմայի և ՈԱԿ կանոնադրության՝ կենտրոնը երթարկվում է անմիջապես ԲՊՀ ռեկտորին:

---

[16] Նախադասությունը խմբագրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկումների արդյունքում:

[17] Նախադասությունն ավելացվել է հաստատության դիտողությունների և տրամադրած հավելյալ փաստաթղթերի հիման վրա:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Ըստ «ՈԱ ուսումնամեթոդական ձեռնարկի» նախնական տարբերակի՝ ԲՊՀ ՈԱ համակարգում ընդգրկված յուրաքանչյուր միավոր կամ շահակիցների խումբ ստանձնում է իր դերակատարությունը: Այս տեսանկյունից անհրաժեշտ է նշել, համակարգի որոշ մասի, օրինակ՝ ՄԿԾ պատասխանատուների, վարչական ստորաբաժանումների, գործատուների և այլն, դերերը դեռևս հստակեցված չեն ձեռնարկում: Մանրամասն նկարագրված է միայն ստորաբաժանումներում որակի ապահովման պատասխանատուների գործառույթները: Ըստ ինքնավերլուծության՝ ԲՊՀ-ի ՈՆԱ գործընթացները համակարգվում և կառավարվում են Որակի ապահովման կենտրոնի կողմից, որն իր գործունեության արդյունավետությունն ապահովելու նպատակով սերտորեն համագործակցում է ԲՊՀ բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների հետ:

Որակի ապահովման գործընթացներում մարդկային ռեսուրսների ներգրավվածությունը կարգավորող փաստաթղթերն են՝ Որակի ապահովման կենտրոնի կանոնադրությունը /հաստատված 28.12.2022թ./, աշխատակիցների պաշտոնի անձնագրերը /հաստատված 28.03.2023թ./ և «ՈԱ ուսումնամեթոդական ձեռնարկի» նախնական (չհաստատված) տարբերակը, որտեղ նկարագրված են որակի ապահովման պատասխանատուների գործառույթները: Կենտրոնի աշխատանքները համակարգելու նպատակով ներդրված են 5 հաստիքներ, աշխատակիցներից երկուսը երկարատև արձակուրդում են: Ներկայումս կենտրոնի 4 հաստիքներից գործում է 3-ը՝ կենտրոնի ղեկավարինը, 1 համակարգողինը և 1 մասնագետինը: Զբաղեցված հաստիքներից 2-ը երիտասարդ աշխատակիցներ են, որոնք ՄՈՒՀ-ի շրջանավարտներ են: Վերջիններս ԲՊՀ-ից դուրս ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունների վերաբերյալ վերապատրաստումներ չեն անցել[18]:

Կենտրոնն ապապահովված է անհրաժեշտ տարածքով, կահույքով և տեխնիկայով: 2021թ. ներդրվել է «ԲՊՀ ՈԱ պատասխանատուների» ինստիտուտը՝ բոլոր ուսումնագիտական ստորաբաժանումներում պատասխանատուներ ունենալու համար (ըստ ռեկտորի 02.04.2021թ. հրամանի 39 մարդ): Ըստ ինքնավերլուծության՝ ՈԱ պատասխանատուների ինստիտուտը ներդրվել է ՄՈՒՀ-ի շահակիցներին ՈՆԱ գործընթացների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով, միևնույն ժամանակ նրանք տվյալ ստորաբաժանման գործունեության շրջանակում ՈԱ գործընթացները համակարգող և ՄՈՒՀ-ի ՈՆԱ աշխատանքներում անմիջական մասնակցություն ունեցող ԲՊՀ աշխատակիցներ են[19]: 2021թ. ՈԱ պատասխանատուները անցել են վերապատրաստման դասընթաց, որն իրականացվել է համալսարանի ՈԱԿ-ի աշխատակիցների կողմից: ՄՈՒՀ-ը համարում է, որ վերապատրաստումները ցանկալի արդունքը չեն տվել և ինստիտուտը դեռևս կայացման խնդիր ունի, ինչի հիմնական պատճառը պատասխանատուների աշխատանքային գերբեռնվածությունն է:

ԲՊՀ ֆինանսական ռեսուրսների բաշխումը կարգավորող հիմնական փաստաթղթում՝ եկամուտների և ծախսերի նախահաշվում ՈՆԱ գործընթացներին նպատակային ֆինանսական հատկացումներ նախատեսված չեն: ՌԾ-ում որակի ապահովման գործընթացների իրականացման

[18] Պարբերությունը խմբագրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկումների արդյունքում:

[19] Նախադասությունը խմբագրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկումների արդյունքում:

համար ֆինանսական ռեսուրսներ նախատեսված չեն: Նույն իրավիճակն է նաև նյութական ռեսուրսների բաշխման դեպքում: Ինչպես ներկայացված է ինքնավերլուծությունում, և ինչպես փորձագիտական այցին նշեցին ոլորտի մասնագետները, ՄՈՒՀ-ի կողմից, ըստ անրաժեշտության, տրամադրվում են ֆինանսական /աշխատավարձ, ինստիտուցիոնալ հավատարմագրման վճար/ և նյութական ռեսուրսներ:

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում

Նախորդ հավատարմագրման արդյունքում փորձագիտական խումբը ՄՈՒՀ-ին տրամադրել է խորհրդատվություն՝ Ներդնել ՈԱ գործընթացներում շահակիցների /հատկապես արտաքին/ մասնակցության ակտիվացման կոնկրետ մեխանիզմներ: ԵՊԼՀ 2019թ. փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագրով 2020-2023 թվականների համար ՄՈՒՀ-ի կողմից պլանավորված է եղել 1 գործողություն, որի արդյունքում պետք է մշակվեին և արդյունավետ կիրառվեին ՈԱ գործընթացներում շահակիցների մասնակցության /հատկապես՝ արտաքին/ ակտիվացման մեխանիզմներ: Ինչպես նշված է ինքնավերլուծությունում՝ ՄՈՒՀ-ը կարևորում է ՈԱ գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը՝ որպես որակի մշակույթի ամրապնդման կարևոր բաղադրիչ: Արտաքին շահակիցներից՝ գործատուները, ներգրավված են ՄԿԾ-ների մշակման և վերանայման, դասավանդման գործընթացներում, ինչպես նաև 2 գործատու ներգրավված է եղել ԲՊՀ-ի ինքնավերլուծության իրականացնման խմբում: Վերջին տարիներին բարելավվել են շրջանավարտների և գործատուների մասնակցությունը ՄՈՒՀ-ի կողմից կազմակերպվող հարցումներին: ՊԴ կազմը ուսումնական գործընթացներին առնչվող ՈԱ գործընթացներում ներգրավվում է ըստ անհարժեշտության՝ հիմնականում հարցումներին մասնակցության տեսքով:

Իսկ ինչ վերաբերում է ուսանողների ներգրավածությանը և դերակատարությանը, ապա ինչպես նշում է ՄՈՒՀ-ը, այն թույլ է արտահայտված՝ հիմնականում պայմանավորված ուսման և աշխատանքի համատեղման խնդիրներով:

Անհրաժեշտ է նաև նշել, որ, ըստ ՄՈՒՀ-ի տարամադրած տվյալների, Որակի արտաքին գնահատման գործընթացներում (ՈԱԱԿ ինստիտուցիոնալ հավատարմագրումներում) ԲՊՀ-ից ներգրավված է եղել 4 դասախոս և 1 ուսանող:

ՊԴ կազմի համար 2021-2022 թթ. ՈԱԿ-ի և ՀՇԿ բաժնի կողմից իրականացվել են մի շարք վերապատրաստումներ որակի ապահովման վերաբերյալ, որոնք ավարտվել են վերապատրաստումների կազմակերպման և դրանց արդյունավետության գնահատմամբ[20]:

Ներքին և արտաքին շահակիցների ներգրավման նպատակով ԲՊՀ-ում իրականացվում են բազմաթիվ հարցումներ՝ ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում, ՄՈՒՀ-ի նախաձեռնությամբ և միջազգային դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում: Հարցումները հիմականում վերաբերում են ուսանողներին տրամադրվող խորհրդատվական ծառայությունների բավարվածությանը, ՊԴ կազմի կողմից ուսանողակենտրոն ուսուցմանը, ռեսուրսներից ուսանողների բավարարվածությանը, պրակտիկաների գնահատմանը և այլն: Պետք է նշել, որ ՈԱ կենտրոնը հարցումների մի մասի (գործատուների, ՊԴ կազմի, ուսանողների շրջանում իրականացված հարցումներ) արդյունքների վերլուծությունը պլանավորել էր ամփոփել 2023 թ. սկզբին, փորձագիտական այցի օրերին հարցումների արդյունքները դեռևս ամփոփված չեն եղել:

[20] Նախադասությունը խմբագրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկումների արդյունքում:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ հարցումների պարբերական կազմակերպման, արդյունքների վերլուծության և դրանց հիման վրա որոշումների կայացման տեսակետից ՄՈՒՀ-ը միշտ չէ, որ հետևողականություն է դրսևորում: Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քանակով ամենաշատ հարցումներն իրականացվել են 2015-16 և 2021-22 ուսումնական տարիներին: Դրա մասին են վկայում նաև ՄՈՒՀ-ի կայքում հրապարակված հարցումների վերլուծությունները:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Նախորդ հավատարմագրման արդյունքում փորձագիտական խումբը ՄՈՒՀ-ին տրամադրել է խորհրդատվություն՝ պարբերաբար գնահատել ՈՆԱ համակարգի ազդեցությունը բուհի բարելավման վրա»: Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ԲՊՀ պլանի 31.1 և 31.2 գործողությունների արդյունքում ակնկալվում էր, որ ՄՈՒՀ-ը կունենա ՈՆԱ համակարգի բենչմարքինգի արդյունքներ, SWOT–PEST վերլուծություններ, ՈՆԱ համակարգի բարելավման միջոցառումների ծրագիր: Պետք է նշել, որ Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման հրապարակված քաղաքականություն և հաստատված ընթացակարգեր ԲՊՀ-ն չունի, իսկ համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմները և գործիքները դեռևս համակարգված չեն: ԲՊՀ-ն ՈԱ մշակույթի անբաժանելի մասն է համարում վերանայումների, պարբերական գնահատումների և մշտադիտարկումների իրականացումը: ՈԱ համակարգի վերանայումը ԲՊՀ-ն նախևառաջ կապում է մի շարք փաստաթղթերի մշակման և վերամշակման աշխատանքների հետ, որոնք իրականացվել են համալսարանում: Դրանց մի մասն առնչվում է ՈԱ գործընթացներին, մյուս մասը վերաբերում է կառավարման և ուսումնական գործընթացների կանոնակարգմանը:

Ինքնավերլուծության մեջ ԲՊՀ-ն չի անդրադառնում որակի ապահովման համակարգի ազդեցության գնահատմանը համալսարանական գործընթացների բարելավման վրա: ՈԱ կենտրոնի հաշվետվությունները, որոնք տեղ են գտնում ռեկտորի տարեկան հաշվետվության մեջ և ամփոփում են ոլորտում կարված աշխատանքների արդյունքները, նման գնահատումների համակարգված արդյունքներ նույնպես չեն պարունակում: Փաստացի, փորձագիտական խմբի խորհրդատվությունը համալսարանը չի իրականացրել:

Ըստ ինքնավերլուծության՝ ՄՈՒՀ-ն իրականացրել է որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգ: 2021թ. ռեկտորի տարեկան հաշվետվությունից պարզ է դառնում, որ ՄՈՒՀ-ի կողմից իրականացվել է 20 ՀՀ և 10 եվրոպական բուհերի ՈԱ համակարգերի ուսումնասիրություն և համեմատական վերլուծություն, իսկ լավագույն օրինակները համադրվել են ԲՊՀ-ի ՈԱ գործընթացների հետ՝ դրանք բարելավելու նպատակով: Փորձագիտական խմբին լրացուցիչ տրամադրված և 2022թ.-ով թվագրված «Որակի ապահովման ոլորտում իրականացված համեմատական վերլուծություն /բենչմարքինգ/» փաստաթղթում ամփոփվել են միայն ՀՀ բուհերի վերլուծության արդյունքները, փաստաթուղթը չի պարունակում եվրոպական բուհերի որակի ապահովման գործընթացների համեմատական վերլուծություն[21]: Նշված փաստաթուղթը հասանելի չի եղել շահակիցներին:

Հաշվի առնելով վերլուծության արդյունքները՝ փաստաթղթում առաջարկվել են ԲՊՀ ՈՆԱ ոլորտի բարելավման 5 գործողություն՝

[21] Նախադասությունը խմբագրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկումների արդյունքում:

1. Ակտիվացնել բուհում ՈԱ մշակույթի տարածման և ամրապնդման գործընթացները ԲՊՀ բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների հետ սերտ համագործակցությամբ:
2. Վերանայել ՈԱ պատասխանատուների ինստիտուտը՝ նախնական գնահատելով/ կանխորոշելով դրա նպատակահարմարությունը բուհում ՈԱ մշակույթի տարածման և ՈՆԱ գործընթացների ապակենտրոնացման տեսանկյունից:
3. Ընդլայնել ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը բուհի ՈՆԱ գործընթացներում:
4. Վերանայել ՈՆԱ քաղաքականությունն արտացոլող փաստաթղթային հենքը և խթանել դրանց արդյունավետ կիրառումը:
5. (Վերա)մշակել և ամփոփել ԲՊՀ գործունեության ՈԱ ոլորտում սահմանված ԳԱՑ-երը՝ դրանցով կատարելով նախնական գնահատում և դուրս բերելով բուհի գործող ռազմավարությամբ սահմանված նպատակների իրականացման աստիճանը չափող ցուցանիշներ:

Պետք է նշել, որ նշված գործուղությունների իրականացման նպատակով ՈՆԱ համակարգի բարելավման ծրագիր ՄՈՒՀ-ը չի մշակել: Փորձագիտական ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ որոշ գործողությունների (3, 4) ուղղությամբ իրականացվել են որոշ քայլեր:

10.5 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Արտաքին գնահատման նպատակով ԲՊՀ-ն պատրաստել և ներկայացրել է ինքնավերլուծություն: ՄՈՒՀ-ն իր ինքնավերլուծությամբ չի վերլուծում, թե արդյոք ՈԱ ներքին համակարգն ապահովում է բավարար տեղեկատվություն և հիքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների՝ մասնավորապես հավատարմագրման համար: Պետք է նշել, որ արտաքին գնահատում իրականացնելու համար ներկայացված տվյալները համակարգված չեն եղել: Ինքնավերլուծությունը երբեմն եղել է նկարագրողական և ամբողջությամբ չի արտացոլել չափորշիչների պահանջները:

Տվյալների հավաքագրման մեխանիզմներ են դիտարկվում ՄՈՒՀ-ի տարեկան հաշվետվությունները, ամբիոնների և ԳՈՒԿ-երի ինքնավերլուծությունները և ՈԱԿ-ի կողմից իրականացվող հարցումները: Ստորաբաժանումների հաշվետվությունները, որոնք ամփոփվում են ռեկտորի տարեկան հաշվետվության մեջ, պարունակում են իրականացված գործողությունների նկարագրություններ և որոշակի քանակական տվյալներ: Տվյալների հիմնական աղբյուր են ծառայել թվով 7 ինստիտուցիոնալ, ծրագրերի ու պրակտիկաների գնահատման 3 հարցումները, որոնք հստակ պարբերականությամբ չեն իրականացվել: Եվս 4 հարցում իրակացվել է Էրազմուս+ «ԿՈՆՆԵԿՏ» ծրագրի շրջանակներում: Մեծածավալ տեղեկատվությունը կուտակվել է ՈԱԿ-ում, սակայն վերլուծվել է դրա միայն մի մասը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մնացյալ հարցումների վերլուծությունները գտնվում են ընթացքի մեջ:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

ԲՊՀ-ն իր գործունեության որակի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրում է տարբեր մեխանիզմներով՝ 3-ալեզու կայքէջ, տարբեր սոցիալական հարթակներ, ԶԼՄ-ներ և այլն: ՈԱ գործընթացներին առնչվող տեղեկատվությունը հասանելի է ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքէջի

«Որակի ապահովում» բաժնում, իսկ գործընթացները կանոնակարգող փոքրաթիվ փաստաթղթերը (ՈԱ բաժնի կանոնադրություն, բենչմարքինգի իրականացման կարգ, դասալսումների կարգ և այլն) հրապարակված են կայքէջի «Փաստաթղթեր» բաժնում և ԲՊՀ մյուս փաստաթղթերից չեն առանձնացվում: Կայքէջի «ՈԱ փաստաթղթերը» բաժնում հասանելի են միայն 2019թ. ԲՊՀ հավատարմագրման փորձագիտական զեկույցը, 2021թ. ՈԱԿ-ի կողմից իրականացված 2 վերլուծություն /2018-2021թթ. շրջանավարտների հարցումների և գործատուների հարցման վերլուծությունները/ և 2022թ. իրականացված 5 վերլուծություն /ուսանողների հարցման արդյունքները հրապարակվել են փորձագիտական այցից հետո/:

ԲՊՀ-ն ՈՆԱ գործընթացների և արդյունքների վերաբերյալ տեղեկության հասանելիությունն ապահովող մեխանիզմ է դիտարկվում նաև գիտական և ֆակուլտետների խորհուրդներում, ռեկտորատում ՈԱԿ-ի աշխատակիցների մասնակցությունը, ինչպես նաև ՊԴ կազմի շրջանում իրականացված ՈԱ վերապատրաստումները:

Դատողություններ: Դրական է, որ կրթության որակի ապահովման գործընթացները ՄՈՒՀ-ի համար դիտարկվում են որպես ռազմավարական առաջնահերթություն: Միևնույն ժամանակ խնդրահարույց է, որ 2009թ. ձևավորված Որակի ապահովման կենտրոն ունեցող և երրորդ անգամ ինստիտուցիոնալ հավատարմագրման դիմած ԲՊՀ-ն մինչ օրս չունի հրապարակված ՈԱ քաղաքականություն և հաստատված ընթացակարգեր[22]: Մինչդեռ, հստակ քաղաքականության և ընթացակարգերի, դրանց հետևողական իրականացման բացակայության պայմաններում վտանգի տակ կարող է դրվել ՄՈՒՀ-ի որդեգրած որակի ապահովման սկզբունքների, որակի մշակույթի տարածումն ու ըմբռնումը շահակիցների կողմից:

ԲՊՀ-ն ՈԱ գործընթացներն իրականացնելու համար տրամադրում է համապատասխան ֆինանսական և մարդկային ռեսուրսներ: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը խիստ կարևոր է համարում ՈԱԿ աշխատակիցների պարբերաբար մասնագիտական զարգացումը, որի պակասը ներկայումս կարող է խոչընդոտել որակի ապահովման գործընթացների լիարժեք և արդյունավետ իրականացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄՈՒՀ-ը ֆակուլտետային մակարդակներում ՈՆԱ գործընթացները համակարգելու նպատակով փորձել է ներդնել «ՈԱ պատասխանատուների» ինստիտուտը: Խումբը գտնում է, որ ինստիտուտի չկայացման վերաբերյալ առավել հստակ տվյալների հավաքագրումը և վերլուծությունը հնարավորություն կընձեռի ՄՈՒՀ-ին բացահայտելու այն հիմնական պատճառները, որոնք խոչընդոտել են համակարգի լիարժեք կայացմանը: Բացի այդ, ՈԱ պատասխանատուների հստակ գործառույթների տարանջատումը, աշխատանքի արդյունավետության գնահատման ցուցիչների ներդրումը, ինչպես նաև մասնագետների խրախուսման մեխանիզմների ապահովումը կարող են նպաստել համակարգի կայացմանը:

Գովելի է, նախորդ հավատարմագրման արդյունքում ընդլայնվել է ներքին և արտաքին շահաիցների ներգրավվածությունը ՈԱ գործընթացներում, որը նպաստել է նաև ՄԿԾ-ների վերանայմանը և արդիականացմանը:

[22] Նախադասությունը խմբագրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկումների արդյունքում:

Դրական է, որ Որակի ապահովման կենտրոնի կողմից հավաքագրվում են մի շարք տվյալներ տարբեր շահակիցներից, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ վերլուծությունների իրականացման հապաղումը կարող է հանգեցնել հավաքագրված տեղեկավության ոչ արդիական լինելուն: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով ՄՈՒՀ-ի՝ ճգնաժամային կառավարման փուլում լինելու հանգամանքը, փորձագիտական խումբն առավել շատ է շեշտադրում օբյեկտիվ և ժամանակին ներկայացված վերլուծությունների անհրաժեշտությունը, որոնք կնպաստեն տվյալահենք որոշումների կայացմանը: Այս փուլում առավել կարևոր է դարձել ղեկավար անձնակազմի և Որակի ներքին ապահովման կենտրոնի հաղորդակցության մեծացումը, որը հնարավորություն կընձեռի հավաքագրելու այնպիսի օբյեկտիվ տվյալներ, որոնք կլինեն կիրառական որոշումների կայացման համար:

Խնդրահարույց է, որ ՄՈՒՀ-ն իր ձևավորումից մինչ օրս չի իրականացրել որակի ապահովման համակարգի ազդեցության գնահատում բուհական գործընթացների բարելավման վրա: Վերջինս թույլ կտար պարզել կիրառվող որակի ապահովման մեխանիզմների և գործիքների արդյունավետությունը, գտնել դրանց թույլ կողմերը և բարելավել դրանք:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԲՊՀ պաշտոնական կայքէջում «ՈԱ բաժնի փաստաթղթեր» բաժնում շահակիցներին հասանելի են կենտրոնի կողմից իրականացված վերլուծությունները, որոնք նպաստում են ՄՈՒՀ-ի ՈԱ գործընթացների թափանցիկության ապահովմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԲՊՀ-ն չունի հրապարակված ՈԱ քաղաքականություն և հաստատված ընթացակարգեր,[23] ՈԱ համակարգում ներառված աշխատակիցները ոլորտում չունեն համապատասխան փորձառություն, տվյալների հավաքագրումը տեղի չի ունենում պարբերական և արդյունքները չեն վերլուծվում ժամանակին, չի կայացել «որակի պատասխանատուների» ինստիտուտը, հավաքագրված տվյալները ոչ միշտ են հիմք հանդիսանում որոշումների կայացման համար, չի գնահատվել որակի ապահովման համակարգի ազդեցությունը ՄՈՒՀ-ի գործընթացների բարելավման վրա, փորձագիտական խումբը գտնում է, որ ԲՊՀ-ն չի բավարարում 10-րդ չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԲՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

[23] Նախադասությունը խմբագրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկումների արդյունքում:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Անուշավան Մակարյան
Փորձագիտական խմբի ղեկավար

09.10.2023թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Անուշավան Մակարյան՝ 2001 թվականին ստացել է Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 2006-ին՝ դոցենտի: 1978-1983թթ սովորել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետում, 1983-1986թթ եղել է ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի ասպիրանտ: 1986-1988թթ աշխատել է ՀՀ Գիտությունների Ակադեմիայի Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող: 1988թ մինչ օրս ընդգրկված է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի օպտիկայի ամբիոնում: 2011-2013թթ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնում աշխատել է «Որակի ներքին ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր» ծրագրի ղեկավար, իսկ 2013-2019թթ. եղել է Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը: 2011թ.-ից ՀՀ-ում մասնագիտական կրթության որակի ապահովման հավաստագրված փորձագետ է: 2016-2019թթ. եղել է ՌԴ «Росаккредагенство» հավատարմագրման պետական գործակալության կրթության հավաստագրված միջազգային փորձագետ, 2019թ.-ից մինչ օրս ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարն է:

Ռաուլա Դիաբ՝ 2018թ.-ից եղել է Լիբանանի ամերիկյան համալսարանի հավատարմագրման և ակադեմիական գործունեության գծով պրոռեկտորի օգնականը: Բանասիրական գիտությունների պրոֆեսոր է, դասավանդում է բանավոր հաղորդակցության հիմունքներ, լեզվի ներածություն (ներածական լեզվաբանություն), լեզու և մեդիա, անգլերեն տարրական դասարանների ուսուցիչների համար և այլ դասընթացներ: Տարբեր տարիներին տարբեր պաշտոններ է զբաղեցրել Լիբանանի ամերիկյան համալսարանում, 2007-2008 թվականներին եղել է Լեզվի հետազոտական և ուսուցման կենտրոնի վարիչ, 2012-2018 թվականներին՝ անգլերենի ամբիոնի վարիչ: Նա իր բակալավրի և մագիստրոսի կոչումները ստացել է Բեյրութի ամերիկյան համալսարանում, իսկ դոկտորականը՝ ԱՄՆ-ի Օսթինում գտնվող Տեխասի համալսարանում: Անգլերենի դասավանդման մասնագետ է և պարբերաբար իրականացնում է հավատարմագրման և ակադեմիական որակի ապահովման աշխատանքներ: Հանդիսանում է քանի մասնագիտական կազմակերպությունների անդամ, այդ թվում՝ TESOL-ը, Կիրառական լեզվաբանության ամերիկյան ասոցիացիան (AAAL), Մերձավոր Արևելքի Հյուսիսային Աֆրիկայի գրավոր կենտրոնների դաշինքը և այլն: Նա մի շարք հոդվածների հեղինակ է գրախոսվող ակադեմիական ամսագրերում:

Տիգրան Սիմյան՝ 2005 թվականին ստացել է Բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան, 2005-2008 թթ. եղել Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի Արտասահմանյան գրականության ամբիոնի ասիստենտ, 2008-2015 թթ.՝ նույն ամբիոնի դոցենտ: 2015 թ.-ին ստացել է բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան, 2016 թ.-ին՝ պրոֆեսորի կոչում: 2011թ.-ից անդամակցում է Նշանագիտության գերմանական միությանը, «Համեմատական ուսումնասիրություններ» (Լատվիա, Դաուգավպիլս), «Նշանագիտություն և քննադատություն» (Scopus), «Պրաքսեմա. տեսողական նշանագիտության խնդիրներ» (Scopus) գիտական հանդեսների խմբագրական խորհրդի անդամ է, «Urbis et Orbis». Микроистория и семиотика города» հանդեսի համախմբագիրն է:

Տաթևիկ Սարգսյան՝ 2016թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան, 2018թ. -ին՝ դոցենտի գիտական կոչում: 2008թ.-ից դասավանդում է Հայաստանի եվրոպական համալսարանի Կառավարման ամբիոնում, 2021թ.-ից նույն համալսարանի Զբոսաշրջության և սպասարկման ամբիոնի վարիչն է, ինչպես նաև Հայաստանի տնտեսագիտական համալսարանի Բիզնես վարչարարության ամբիոնի դասախոս:

Էլեն Ղահրամանյան՝ 2022թ. ավարտել է Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի «Գործավարություն օտար լեզվի խորացված իմացությամբ» կրթական ծրագիրը: Նույն թվականից սովորում է Եվրասիա միջազգային համալսարանի «Կառավարում» բակալավրի կրթական ծրագրում: 2022թ.-ից մինչ օր համալսարանի Ուսանողական խորհրդի քարտուղարն է: Մասնակցել է ՈԱԱԿ-ի «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետների վերապատրաստմանը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

	05.06.2023թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Ռեսուրսների դիտարկում	12:00	14:00	120 րոպե

	06.06.2023թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում ԲՊՀ ռեկտորի հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում ուսումնագիտական աշխատանքների հարցերով, աշխատակազմի կառավարման և տնտեսական հարցերով պրոռեկտորների հետ	10:30	11:40	70 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի հետ	11:50	12:40	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:50	13:50	60 րոպե
5.	Հանդիպում հոգաբարձուների խորհրդի ներկայացուցիչների հետ	14:00	14:40	40 րոպե
6.	Հանդիպում գործատուների հետ	14:50	15:50	60 րոպե
7.	Հանդիպում շրջանավարտների հետ	16:00	17:00	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:10	19:00	110 րոպե

	07.06.2023թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում դեկանների հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ	10:40	11:40	60 րոպե
3.	Հանդիպում հիմնական և համատեղությամբ աշխատող պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (10-12 հոգի)	11:50	12:50	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5.	Հանդիպում առկա և հեռակա բաժինների բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների հետ (10-12 հոգի)	14:10	15:10	60 րոպե
6.	Հանդիպում ստորաբաժանումների ղեկավարների հետ (Անձնակազմի կառավարման և զարգացման վարչություն, Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչություն, Ուսումնական բաժին, Համալսարանական շարունակական կրթության բաժին, Կարիերայի կենտրոն, Կոնֆուցիուսի ինստիտուտ)	15:20	16:20	60 րոպե
7.	Հանդիպում Ֆինանսական վարչության, Ընդհանուր բաժնի, Իրավաբանական բաժնի, Գնումների բաժնի, Հանրային կապերի և լրատվության բաժնի, Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների բաժնի, Էլեկտրոնային ռեսուրսների և ուսուցման բաժնի պետերի և Գրադարանի տնօրենի հետ	16:30	17:20	50 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:30	19:00	90 րոպե

	08.06.2023թ.			*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում «Թարգմանչական գործ (անգլերեն – հայերեն» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատուի/ների հետ	Հանդիպում «Քաղաքագիտություն» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատուի/ների հետ	Հանդիպում «Սերվիս» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատուի/ների հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում «Թարգմանչական գործ (անգլերեն – հայերեն» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	Հանդիպում «Քաղաքագիտություն» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	Հանդիպում «Սերվիս» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	10:45	11:45	60 րոպե

3.	Հանդիպում «Թարգմանչական գործ (անգլերեն – հայերեն» մասնագիտության ուսանողների հետ	Հանդիպում «Քաղաքագիտություն» մասնագիտության ուսանողների հետ	Հանդիպում «Սերվիս» մասնագիտության ուսանողների հետ	12:00	13:00	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:15	14:15	60 րոպե
5.	Հանդիպում միջազգային ուսանողների հետ			14:25	15:15	50 րոպե
6.	Հանդիպում ՈՒԽ-ի հետ			15:25	16:15	50 րոպե
7.	Բաց հանդիպում			16:25	17:05	40 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում			17:15	19:00	105 րոպե

	09.06.2023թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում Որակի ապահովման կենտրոնի աշխատակիցների հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	10:40	11:40	50 րոպե
3.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	11:50	12:50	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:10	17:20	210 րոպե
6.	Հանդիպում ԲՊՀ ռեկտորի և ղեկավար անձնակազմի հետ, այցի ամփոփում	17:30	18:00	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- Լսարաններ
- Համակարգչային սրահներ
- Գրադարան
- Ընթերցասրահ
- Մարզադահլիճ
- Դահլիճ
- Լեզուների կենտրոններ
- Ամբիոններ
- Ստորաբաժանումներ

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 5. Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	ՌԾ-ի միջնաժամկետ գնահատում	1
2.	ՌԾ-ի վերանայման փաթեթ, ՌԾ-ում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկները հիմնավորող փաստաթղթեր	1
3.	ՌԾ-ի վերաբերյալ վերապատրաստումների արդյունքների վերլուծություններ	1
4.	2013-2017թթ. ՌԾ-ի և գործողությունների պլանի իրականացման գնահատման արդյունքներ	1
5.	2022թ-ի ռեկտորի հաշվետվություն	1
6.	Բուհում անցկացվող հարցումների ցանկը իրենց Հարցաշարերով	2
7.	Բուհի 2018-2023թթ. գործունեության ծրագրեր և ռեկորի հաշվետվություններ	2
8.	Նախորդ հավատարմագրման փորձագիտական խմբի խորհրդատվությունների հիման վրա մշակված թերությունների վերացման ծրագրի իրականացման հաշվետվությունը	2
9.	Բուհի հաստիքացուցակներ	5
10.	Բուհի նոր կառուցվածք	2
11.	Շուկայի վերլուծությունների հաշվետվություններ	2
12.	Վերանայված ՄԿԾ-ներ և՛ հին, և՛ նոր	3
13.	Սերվիսի ամբիոնի ինքնավերլուծություն	3
14.	Դասացուցակներ, ավարտական աշխատանքների պաշտպանության ժամանակացույցներ	3
15.	3 ՄԿԾ-ների շրջանակներում ընթացիկ և ամփոփիչ առաջադրանքներ, թեստեր, կուրսային աշխատաքներ	3
16.	Դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետության վերաբերյալ հարցումների վերլուծություններ	3
17.	Ավարտականների կամ թեզերի հանձնաժողովներին տրվող գնահատման ձևաչափեր	3
18.	Գրագողության դեմ պայքարի դասախոսների կողմից կիրառվող մեթոդների մասին հարցումների արդյունքներ	3
19.	ՄԿԾ-ների բենչմարքինգի արդյունքներ	3
20.	Գործատուների կարիքների վերլուծություններ և եզրակացություններ ՈԱԿ-ի կողմից կազմակերպված	3
21.	Ուսանողների շարժունության տվյալներ՝ ըստ ՄԿԾ-ների	3
22.	2022թ. ուսանողական հարցման արդյունքներ	4
23.	2022 թ. դրությամբ ԲՊՀ-ում ուսանող օտարերկրացիների ցանկը՝ ըստ մասնագիտությունների	4
24.	Ընդունելության արդյունքները 2018-2022թթ	4
25.	Դիմորդների հավաքագրման եղանակների արդյունավետության վերլուծություններ	4
26.	Բուհի Ուսանողական խորհրդի + և Ֆակուլտետների ուսանողական խորհուրդների կազմերը -	4

27.	Վարչական օժանդակությունից և ուղղորդումից բավարարվածության հարցումների արդյունքներ	4
28.	Կարիերային նպաստող ծառայությունների արդյունավետության վերաբերյալ հարցումների արդյունքներ	4
29.	Շրջանավարտների աշխատանքի ընդունվելու մասին տեղեկատվության հիմքեր	4
30.	ՈւԽ նախագահի ներկայացրած զարգացման ծրագիր, աշխատանքային պլաններ,	4
31.	ՈՒԽ կանոնադրություն, աշխատանքային պլաններ-, արձանագրություններ և հաշվետվություններ /ռեկտորի հաաշվետվություններ/	4
32.	ՊԴ կազմի, վարչական և ՈՒՕ կազմերի ընտրությունների անցկացման հայտարարություններ	5
33.	Մրցույթային հանձնաժողովին ներկայացված դասախոսի փաթեթ	5
34.	ՊԴ կազմի կատարողականի գնահատման կարգի նախագիծը	5
35.	2016-21թ. Բրյուսովի անվան պետական ԼՀՀ-ում ՊԴ կազմի որակավորման բարձրացման ծրագիրը	5
36.	2021-2022 ուստարվա ընթացքում բուհի կողմից դասախոսների վերապատրաստման հավաստագրի ձևաչափ	5
37.	ՀՇԿ բաժնի կողմից իրականացված վերապատրաստումների արդյունավետության գնահատման հարցաթերթ, հարցումների արդյունքներ, վերլուծություններ	5
38.	Բուհի ունեցած կադրային բանկ	5
39.	Վարչական աշխատակազմի ցանկը՝ ըստ հաստատության կառուցվածքային ստորաբաժանումներ, պաշտոնի անձնագրեր	5
40.	Ուսումնաօժանդակ աշխատակազմի գործառույթները, պաշտոնի անձնագրեր	5
41.	Հետազոտական ոլորտում ամբիոնների ու ԳՈՒԿ-երի քաղաքականությունը ներառող փաստաթղթերը	6
42.	Ներբուհական հետազոտական թեմաների և դրանց մասնակիցների ցանկ	6
43.	2021-22 և 2022-23թ. ուսանողների մասնակցությամբ հրատարակված աշխատանքների ցանկ	6
44.	Հետազոտական պրակտիկայի հաշվետվություններ	6
45.	Ազգային և միջազգային ամսագրերում ու ժողովածուներում հրատարակված գիտական աշխատանքներ	6
46.	ԲՊՀ գիտահետազոտական գործունեության գերակա ուղղությունների, նպատակների, խնդիրների և դրանց լուծմանն ուղղված միջոցառումների համալիր/գործունեության ծրագիրը	6
47.	Ներբուհական դրամաշնորհների հայտեր և հաշվետվություններ	6
48.	Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող թեմաների ցանկ	6
49.	2023թ ավարտական աշխատանքների թեմաներ	6
50.	Կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսային ապահովվածության վերլուծություն/Ամբյոնային ինքնավերլուծություններ/	7

51.	Գնումների տարեկան պլան /վերջին 3 տարիների/	7
52.	Գրադարանային ռեսուրսներից բավարարվածության վերլուծություններ	7
53.	Ռեկորի հրամաններ աշխատավարձերի փոփոխության մասին	7
54.	Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության գործընթացների կառավարման քաղաքականություն, ընթացակարգեր, կարգեր	7
55.	Ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման հարցումների արդյունքներ	7
56.	ԲՊՀ-ի գործունեության մասին շահակիցների բավարարվածության վերաբերյալ հարցման արդյունքներ	8
57.	Միջազգայնացման գործընթացների և համաշխարհային փորձի ուսումնասիրության և համեմատական վերլուծության հաշվետվություններ	9
58.	ՈԱԿ վերլուծությունները տարբեր միջազգային ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության ստացման և մասնակիցների ընտրության ընթացակարգից բավարարվածության մասին	9
59.	Որակի ապահովման քաղաքականություն /նախնական/	10
60.	ՈԱ գործող ընթացակարգեր	10
61.	Վերանայված ՈԱ փաստաթղթեր	10
62.	ՈԱԿ-ի տարեկան գործողությունների պլան	
63.	ՈԱ վերանայված ձեռնարկ /draft/	10
64.	ՈԱ համակարգի բենչմարքինգ	10
65.	ՈԱ համակարգի կառուցվածքը /նախնական/	10
66.	ՈԱ պատասխանատուների գործառույթները սահմանող փոստաթուղթ	10
67.	ՈՆԱ համակարգի բարելավման միջոցառումների ծրագիր /տրամադրվել է բարելավման բլանի հաշվետվությունը, ՌԾ-ն/	10
68.	ՈԱԿ-ի կողմից մշակված ամբիոնների/ԳՈՒԿ-երի ինքնավերլուծության ձևաչափ	10
69.	Որակի ապահովման համակարգի արդյունավետության վերլուծություններ /հարցումներ/	10
70.	ԳՈՒԿ-երի ինքնավերլուծության օրինակներ	10
71.	Ուսանողների ու ՊԴ կազմի ներկայացուցիչների հետ իրականացվող հարցումների հարցաշարեր, վերլուծություններ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԲՊՀ՝	Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան
ԳԱՑ՝	Գնահատման առանցքային ցուցանիշներ
ԳԱՀՑ՝	Գործունեության արդյունավետության հիմնական ցուցանիշներ
ԳԽ՝	Գիտական խորհուրդ
ԳՈՒԿ՝	Գիտաուսումնական կենտրոն
ԵՊԼՀ՝	Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարան
ԵԿԲՏ՝	Բարձրագույն կրթության եվրոպական տարածք
ՄԿԾ՝	Մասնագիտության կրթական ծրագիր
ՄՈՒՀ՝	Մասնագիտական ուսումնական հաստատություն
ՀՀ ԿԳՄՄՆ՝	Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՀԿԼ՝	Հանրային կապերի և լրատվության բաժին
ՀՇԿ՝	Համալսարանական շարունակական կրթության բաժին
ՈԱ՝	Որակի ապահովում
ՈԱԱԿ՝	Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն
ՈԱԿ՝	Որակի ապահովման կենտրոն
ՈԱՇ՝	Որակավորումների ազգային շրջանակ
ՈՆԱ՝	Որակի ներքին ապահովում
ՊԴ՝	Պրոֆեսորադասախոսական կազմ
ՊԻԳԲ՝	Պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում
ՌԾ՝	Ռազմավարական ծրագիր
ՈՒԽ՝	Ուսանողական խորհուրդ
ՈՒՕ՝	Ուսումնաօժանդակ կազմ